

ՍՏ. ՄԱԼԻՆԱՍՅԱՆ

ԽՈՐԵՆԱՅՈՒ
ԱՌԵՂԾՎԱԾԻ
ՇՈՒՐՋԸ

9(47.925)

Մ-16

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ

СТ. МАЛХАСЯНЦ

К ПРОБЛЕМЕ
МОИСЕЯ ХОРЕНСКОГО

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1 9 4 0

ՍՍՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ — ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
31 AUG 2007
1 SEP 2011

9(47.925)

Մ-16

կր.

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԻ
ՇՈՒՐԶԸ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1 9 4 0

21.06.2013

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ:

12.04/



542
41

Ն Ե Ր Ա Շ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մովսես Խորենացին հազար տարուց ավելի բազմած է եղել 5-րդ դարի մեծ հեղինակների շարքում, իբրև անմիջական աշակերտ ս. Մահակի ու Մեսրոպի և նրանց կողմից արտասահման ուղարկված՝ բարձրագույն ուսում ստանալու, այդտեղից վերադառնալիս կենդանի էլ գտնում իր մեծ վարդապետներին և նրանց մահը ողբում է սրտառու է կերպով: Նրա գրած «Հայոց Պատմություն»-ը պատմական ժողովածուների ձեռագրերում զետեղվում է Ագաթանգեղոսից հետո, իբրև նույնքան վավերական աղբյուր ազգային պատմության, որքան վավերական աղբյուր էր ճանաչված Տրդատ թագավորի քարտուղար Ագաթանգեղոսինը՝ հայ եկեղեցու պատմության: Նրա աֆեն մի խոսքը պատգամ էր հետագա պատմագիրների և առհասարակ ընթերցողների համար. Հայկը, Արամը, Տիգրանները, Արտաշեսները... նրա ստեղծած պատմական հերոսներն են: Տասնյակ դարերով հայ ժողովուրդն իր պատմության նախնական շրջանը սովորել է այդ Պատմությունից, ոգևորվել ու տոգորվել է այդ Պատմության արծարծած զգացումներով: Հազար տարուց ավելի Խորենացու Պատմությունը միայնակ տիրապետում էր Հայոց պատմական գրականության մեջ և իր պայծառ փայլով նսեմացնում ուրիշ պատմական գրվածքները:

Բայց ոչինչ չկա հավիտենական: 19-րդ դարում, երբ պատմական քննադատության թեքը շոշափեցին Հայոց Պատմությունը՝ սրա մեջ հետզհետե սկսեցին երևան գալ կասկածելի կետեր, քննությունները հաճախեցին, կասկածելի կետերը բազմացան և սկսեցին ստուգության կերպարանք ստանալ:

Քննադատությունը սկզբում շոշափում էր Հայոց Պատմության արժանահավատության հարցը, այսինքն՝ հրքան ձեռք էն Պատմության մեջ հաղորդված պատմական տեղեկությունները,

նորքան իրական են այնտեղ հիշված գահակալները: Քար քարի վրա չմնաց Հայոց Պատմութեան կառուցվածքի մեջ. հերքվեց Մար-Արասյան աղբյուրի գոյութիւնը. հերքվեց ժողովրդական վեպի գոյութիւնը. խորհնացին հռչակվեց կեղծարար, այս աղբյուրներն ստեղծող, Հայկը, Բեյը, Արամը, Տիգրան Հայկազյանը հայտարարվեցին առասպելներ, հայտնվեց, թե Արգարը չէ եղել Հայոց թագավոր, Արշամ անունով թագավոր առհասարակ չէ եղել. Վաղարշակ, Արտաշես, Երվանդ և այլն գոյութիւն չեն ունեցել. օտարազգի աղբյուրներն այսպիսի թագավորներ չեն ճանաչում, ընդհակառակը, նրանք ունին հայ թագավորների անուններ, որոնք անհայտ են մնացել Հայոց Պատմութեանը: Սրանց վրա բազմաթիւ ժամանակագրական և պատմական սխալներ: Մի խոսքով՝ Հայոց Պատմութեան, իբրև պատմական աղբյուրի, արժեքը հավասարվեց զերոյի: Գաթրճյանն իր Տիեզերական Պատմութեան մեջ (1848—51) դեռ զգուշութեամբ գիտեց Հայոց Պատմութեան անհամաձայնութիւնն օտարազգի պատմագիրների անկասկածելի տվյալների հետ, իսկ Գարագաշյանն իր «Քննական Հայոց Պատմութիւն» աշխատութեան մեջ (1895) վարկաբեկեց Հայոց Պատմութիւնն իբրև աղբյուր, գերազանցութիւն տալով Փափստոսի Պատմութեանը:

Երկրորդ հերթին քննադատութիւնը շոշափեց Հայոց Պատմութեան վավերականութեան հարցը, այսինքն՝ թե իրոք Հայոց Պատմութիւնը գրված է 5-րդ դարում, Սահակ-Մեսրոպի աշակերտ Մովսես Խորենացու ձեռքով: Քննադատութիւնը երևան բերեց պատմական իրողութիւններ 6—8-րդ դարերի, որոնք չէին կարող հայտնի լինել 5-րդ դարում ապրող ու գրող հեղինակին, նույնպես երևան բերեց 7-րդ, 8-րդ և 9-րդ դարերի գրվածքներ, որոնցից օգտվել է Հայոց Պատմութեան հեղինակը, օրինակ՝ Սեղբեստրոսի Վարքի հայերեն թարգմանութիւնը 678 թվից, Զատիկան ժամանակագրութիւնը, Մաղաղաս, Անանիա Շիրակացու Աշխարհացոյցը, Դևոնդի Պատմութիւնը և այլն: Այս փաստերի հիման վրա քննադատութիւնը եկավ այն եզրակացութեան, թե Հայոց Պատմութիւնը 9-րդ դարի գործ է, մի անձանոթ հեղինակի, որ յուրացրել է Մովսես Խորենացի անունը կամ իր գործը վերագրել է մի ոմն Մովսես Խորենացու: «Հանդէս ամսօրյա»-ն, որ այս գրական պայքարի մեջ զրոշակակրի դեր

էր կատարում՝ փութաց նույն իսկ Հայոց Պատմութիւնը հորջորջել «Ստոյն Մովսիսի Խորենացու» անմիտ կոչումով:

Այս հարձակողական և մերկացուցիչ քննադատական հոսանքի դեմ դուրս եկան, իհարկե, և պաշտպանողական գրութիւններ, որոնք հերքեցին կամ Զանացին հերքել նրա եզրակացութիւնները Հայոց Պատմութեան թե արժանահավատութեան և թե վավերականութեան նկատմամբ: Շատ բան, որ Հայոց Պատմութեան մեջ հերքում էր քննադատութիւնը՝ նորից վերականգնվեց, շատ բան այդ Պատմութեան մեջ նոր բացատրութիւն և նոր արժեք ստացավ: Վավերականութեան հարցի նկատմամբ ուսանելի է մանավանդ անգլիացի հայագետ Կոնիքիւրի կատարած դերը: Նա էլ, ուրիշ շատերի նման, ենթարկվելով Փրանսիացի հայագետ Կարբիերի մերկացուցիչ հոգովածներին՝ մոտ տասը տարի հակամետ է եղել Հայոց Պատմութիւնը նոր ժամանակի գործ համարելու, թեպետ միշտ էլ նկատելի է եղել այսպիսի կարծիքի զանազան անտեղութիւնները: Եվ անհա 1901—2 թվականներին նա տպագրեց իր հմտալից ուսումնասիրութիւնները, որոնց մեջ մի առ մի քննեց 6—7-րդ դարերի այն գրվածքները, որոնցից, Կարբիելի կարծիքով, օգտված է եղել Հայոց Պատմութեան հեղինակը, և ցույց տվեց, որ Սեղբեստրոսի Վարքի ընդարձակ թարգմանութիւնը 5-րդ դարի գործ է և ոչ 678 թվի, իսկ համառոտ վարքի խմբագրողն ինքն է օգտվել Խորենացու Պատմութիւնից. որ Խորենացին չէ օգտվել ոչ Մաղաղասից և ոչ Զատիկան ժամանակագրութիւնից, այլ մի հնագույն և լավագույն հունական աղբյուրից, որից օգտվել են նաև Մաղաղասը և ժամանակագրութեան խմբագրողը: Սեղբեստրոսի Վարքի և Հայոց Պատմութեան աղբյուրի նկատմամբ նույն կարծիքը հայտնել էր նաև Նորայր Բյուզանդացին, 1900 թվին:

Կոնիքիւրի ելույթն սթափեցնող նշանակութիւն ունեցավ այլևս դադարեցին երևակայեալ աղբյուրների հիման վրա Հայոց Պատմութեան ժամանակը վար իջեցնել (բացառութեամբ Գր. Խալաթյանցի, որի «Армянские Аршакиды в Истории Армении

1 «Ստոյն» հորջորջումը միտք կունենար միտք այն դեպքում, եթե այդ հորջորջումը գործածողները ցույց տային իսկական Մովսես Խորենացի անունը կրող մի ականավոր հեղինակ, որին վերագրած լինէր Հայոց Պատմութեան անձանոթ հեղինակն իր գրվածքը:

Моисея Хоренского“ աշխատութիւնը լույս տեսավ 1903 թվին, այսինքն տպւում էր այն ժամանակ, երբ լույս տեսան Կոնիքիբի հոգւածները): Լավեցին ձայներ, որ Կարրիբիբի բերած ապացույցները կորցրել են արդեն իրենց նշանակութիւնը:

Այնուհետեւ, Հայոց Պատմութեան ուշ ժամանակի գրվածք լինելու վերաբերմամբ առաջ բերվեցին ուրիշ ապացույցներ, որոնք բղխում էին այդ Պատմութեան ոգուց: Օրինակ՝ ցույց տրվեցին Հայոց Պատմութեան ազգային ոգին, հունարան լեզուն, հեղինակի հունասիրութիւնը, տենդենցը բարձրացնելու Բագրատունյաց տոհմը և հայերին ընտելացնելու այդ տոհմի մտաւրում թագավորութեան մտքի հետ, և այլն: Այս գիտողութիւններն ևս առանց հերքման չմնացին, որի մասին ավելի մանրամասն կխոսիմ ակադ. Մանանդյանի աշխատութիւնը քննելիս:

Հարցուր տարուց ավելի տեւեց Հայոց Պատմութեան և նրա հեղինակի շուրջը մղվող թեր և դեմ գրական պայքարը, որին մասնակցել են բազմաթիւ օտարազգի և հայ բանաստեղծներ: Գլխավորներէից հիշենք՝ օտարազգի գիտնականներէից—Բաումգարտներ, Գեյցեր, Գուտշմիտ, Լանգլուա, Կարրիբի, Կիպերտ, Հյուբշման, Մակլեր, Մառ, Մարկվարտ, Սեն-Մարտեն, Ֆետտեր, հայ գիտնականներէից—Արեղյան Մ., Ադոնց, Ալիշան, Գարագաշյան, Գեփորգյան Եպիսկոպոս (Ճուղուրյան), Զարեհանալյան, Էմին, Խալաթյանց, Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Միաբան (Գալուստ Տեր-Մկրտչյան), Նորայր Բյուզանդացի, Ք. Պատկանյան, Պարոնյան, Բ. Սարգիսյան, Տաշյան և այլն, և այլն: Հարցուրավոր գրվածքներ, առանձին հատորներով կամ ամսաթերթերի և օրաթերթերի մեջ, նվիրված են այս հարցին, և պայքարը դեռ վերջացած չէ:

Սակայն, ընդհանուր տրամադրութիւնն է ստեղծված Հայոց Պատմութիւնը համարելու ոչ թե 5-րդ դարի, այլ ավելի ուշ ժամանակի գործ: Եվ հայկական բանասիրութեան հերթական հարց է դարձել՝ գտնել այն դարը և տեղը, երբ և որտեղ կարելի է գտնել այդ Պատմութիւնը ու երևան հանել նրա խակական հեղինակին:

Այս հարցին նվիրված են երկու ուսումնասիրութիւն, որոնք լույս տեսան վերջին ժամանակներու: Առաջինն է՝ Ն. Ակիւնյանի «Ղեռնդ Երեց և Մովսէս Խորենացի» (Վիեննա, 1930), երկրորդն է՝ ակադ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը»,

(Երևան, 1934): Ես համառոտ կանգ կառնեմ Ն. Ակիւնյանի աշխատութեան վրա, ընթերցողին ծանոթացնելով նրա մեթոդին և եզրակացութեանը, առանց քննութեան, ապա կանցնեմ ակադ. Մանանդյանի աշխատութեան մանրամասն քննութեան, որից հետո կգնեմ իմ կարծիքները Խորենացու առեղծվածի մասին:

Ն. ԱԿԻՆՅԱՆ, «ՂԵՐՆԴ ԵՐԵՅ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ»

Ն. Ակիւնյանի ուսումնասիրութիւնը երկու հիմնական մասերից է բաղկացած: Առաջին մասում նա աշխատում է որոշել Հայոց Պատմութեան գրվելու ժամանակը. երկրորդ մասում որոշել, թե ով է այդ Պատմութեան հեղինակը:

Ն. Ակիւնյանի համար վճռված, անտարակուսելի փաստ է, որ Հայոց Պատմութիւնը 5-րդ դարի գործ չէ, այլ ավելի ուշ ժամանակի: Ուրեմն նրան մնում է հաջորդ դարերում գտնել այնպիսի մի շրջան կամ երևույթ, որի հետ կարելի լիներ որևէ կերպով կապել Հայոց Պատմութիւնը: Այսպիսի մի կռիւն նա գտնում է Հայոց Պատմութեան Ողբի վերջին հատվածում, որտեղ հեղինակը, թվելով Հայոց բոլոր դասակարգերի մեջ տիրող գեղձունները՝ դառնացած կերպով, բանաստեղծորեն, խտացած գուշներով նկարագրում է բնութեան արհաւիրքները, իբրև աստվածային պատուհաս մարդկանց չարիքների—«Գարուն երաշտացեալ, ամառն անձրևայոյդ, աշուն ձմեռացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, երկարացեալ, հողմք բքարարք, խորշակաբերք, ախտահաւարք. ամպք հրնկէցք, կարկաժուք, անձրևք անժամանակք եւ անպիտանք. օդք դառնաշունչք, եղեմնարկուք, ջրոց առաւելուլն անօգուտ եւ նուազելն անհնարաւոր. երկրի անբերութիւնք պտղոց եւ անաճելութիւնք կենդանեաց, այլ եւ սաւանմունք եւ դղրդմունք... սովք անբաւք եւ հիւանդութիւնք եւ մահք բազմօրինակք»:

Ն. Ակիւնյանը գտնում է, որ «այս արհաւիրքները բնութեան մեջ հաճախ կրկնված երևույթներ չեն երևար... ասոնց ապականիչ ազդեցութիւնը չէր կարող սահմանափակված ըլլալ որոշ սահմանի մեջ, ուստի ինչ որ տեսած էր Հայաստան, նույնը զգացված պիտի ըլլար նաև սահմանակից աշխարհներու մեջ» (էջ 135): Եվ իրոք, նա գտնում է, որ Ասորական Միջագետքում

յազգէն Արշակունեաց, եւ եպիսկոպոսութեանն ի տանէ սրբոյն Գրիգորի»:

Ողբի մեջ հիշատակված հովիվը և հովակիցը (Սահակ և Մեսրոպ), որոնց հեղինակը կոչում է «հայր», «ծնող», և որոնց մահը ողբում է՝ Ն. Ակինյանը նույնացնում է Սիոն կաթողիկոսի և նրան հաջորդող Նսայի կաթողիկոսի հետ, թեպետ ինքն էլ խոստովանում է, թե «չգիտենք թե ինչ աղերս ունեցած է Ղևոնդ Սիոն կաթողիկոսի հետ» (էջ 175), նույնպես ոչ մի խոսք չէ ասում, թե որևէ աղերս կամ ծանոթություն ունենար Ղևոնդը Նսայի կաթողիկոսի հետ:

Այսպես որոշելով Ողբի գրության ժամանակը 774—790 թվականներին և Հայոց Պատմության գրվելու ժամանակը 9-րդ դարի սկզբին՝ Ն. Ակինյանն անցնում է իր ուսումնասիրության երկրորդ մասին, այսինքն որոշելու, թե ով է Հայոց Պատմության հեղինակը: Այս հեղինակը չէր կարող կոչվել Մովսես Խորենացի, Սահակի և Մեսրոպի աշակերտ, որովհետև, ինչպես իրավացի նկատում է Ն. Ակինյանը՝ «Ժամանակակից մը Թ. դարու առաջին տասնյակին պիտի չհամարձակեր սեպհական անվամբ լույս ընծայել պատմություն մը, ուր ինքը զինքը կեղծեր աշակերտ Սահակի և Մաշտոցի» (էջ 289): Ուրեմն պետք էր փնտռել 8-րդ դարի վերջերում և 9-րդ դարի սկզբներում մի ուրիշ հարմար մատենագիր, որին կարելի լիներ վերագրել Հայոց Պատմության հորինումը: «750—850 շրջանին չունինք մենք աչքի դարնող պատմագիր մատենագիր, քան Ղևոնդ Նրեցը, որ յուր պատմագրքովը հանած էր անշուշտ հռչակ յուր դարուն» (էջ 283—284): Եվ Ն. Ակինյանը որոնում է տվյալներ, որոնց հիման վրա կարելի լինի նույնացնել Մովսես Խորենացուն Ղևոնդ Նրեցի հետ, այսինքն Հայոց Պատմությունը հայտարարել Ղևոնդի գրչից դուրս եկած: Նրա որոնումներն ապարդյուն չեն անցել. նա գտել է ինը կետ, որոնց մեջ նկատվում է նույնություն՝ «1. նկարագրի, 2. բառադիտության, 3. մտքերի արտահայտության, 4. գաղափարակցության, 5. աշխարհագրական ծանոթությունների, 6. դատողության և ըմբռնումների, 7. ժամանակակից պարագաների, 8. միտումների (համակրության և հակակրության), 9. մեկ տանից են երկու հեղինակների էլ մեկենասները» (էջ 184):

Նկարագրի նույնության մեջ Ն. Ակինյանը ցույց է տալիս, որ երկու հեղինակներն էլ հոգևորական են, հմուտ ս. Գրքին, կրոնական գրականության, բայց խուսափած են դավանաբանական վեճերից. գործել են Հայաստանում, շրջած են երկրի զանազան կողմերը, ապրել են բազմադեմ ժամանակում, օտար թաղավորների լծի տակ, բարեկամ և խնկարկու են Բագրատունյաց տան և նրանցից հանձնարարություն են ստացել պատմություն գրելու. Ղևոնդն ավելի երիտասարդ հասակում (50—60 տարեկան, ինչպես որոշում է Ն. Ակինյանը «Ղևոնդ Նրեց պատմագիր» ուսումնասիրության մեջ», էջ 34) զբաղվել է մերձժամանակյա և ժամանակակից պատմությամբ, իսկ Մովսես (70—80 տարեկան, քանի որ Հայոց Պատմության գրության ժամանակը Ն. Ակինյանը որոշում է շուրջ 810 թվին) ձեռնարկել է հորինել հնագույն և հին ժամանակների պատմությունը (էջ 184—187):

Բառադիտության նույնության նկատմամբ Ն. Ակինյանը գրում է. «Լեզուն և ոճը Ղևոնդի քով ավելի կենդանի է և պատկերավոր, երիտասարդական խանդն է հոն արտահայտվողը (իսկ 289-րդ էջում Ն. Ակինյանը Ղևոնդի նկարագրությունը կոչում է «անպաճույճ, անսեթևեթ»), մինչ Մովսես, ծերության ալիքով ծաղկած, ավելի խոհական ոճով, ավելի պերճաբան լեզվով կշնառարտահայտվյուն շնորհել յուր մտածմունքներուն: Նա տարիների ընթացքին» (այսինքն 50—60 տարեկանից մինչև 70—80 տարեկան դառնալը) «ավելի զարգացուցած է յուր մտավոր պաշտարեքը, ավելի խորացած իմաստասիրության ուսումներու խորքը: Հասակի տարբերությունը և իրեն պերճաբան փայլելու ձգտումը հառաջ բերած է երիտասարդ Ղևոնդի և ծերունագարդ Մովսեսի մեջ զանազանություն ոճի և լեզվի. բայց մեկ խմորով զանգված է ամբողջությունը, մեկ է բառազանձը, մտքերը մարմնավորելու է հանգամանքը» (էջ 187): Սրանից հետո Ն. Ակինյանը բերում է 103 բառ, որոնք գործ են ածված թե Հայոց Պատմության և թե Ղևոնդի Պատմության մեջ, որոնց մասին ինքն էլ նկատում է, թե «միայն երկու հեղինակներու առանձնահատուկ բառեր չեն և ոչ ալ հազվագյուտ... կան նաև այնպիսիներ, որոնք կամ ձևովը և կամ իմաստովը միայն երկու հեղինակներու հատուկ են» (էջ 187—8). իրեն այսպիսի Ն. Ակինյանը նշանակում է երեք բառ՝ համատոհմ, նախարարական և վաղր:

Երկու հեղինակների մեջ նկատվող ոճի մեծ զանազանությունը ն. Ալինյանը բացատրում է նրանով, որ «Ղևոնդն իրեն ժամանակակից անցքերը նկարագրել է ինչպես լսած ու նկատած է, առանց բռնազբոսություն, առանց հնարագիտություն ի գործ դնելու և այնպես, որ իր մեկենասին, Շապուհ Բագրատունուն մատչելի, դյուրահասկանալի լինել իր գրածը. այնինչ Մովսես, որ գրի պիտի առնել անգիր ժամանակների անգո պատմությունները՝ պետք է ունենար հնարագյուտ միտք. ուր հանձարը «կտկարանար՝ հոն խոսքը պիտի ճարտարամտեր: Արտաքին համեմունքով բովանդակություն անհամություն սքողել, ձայնի ելևեջներով ուժ տալ տևար փաստերուն՝ այդ արվեստն է պերճախոսներուն»: Նույն Մովսեսը Երրորդ գրքում, երբ ունեցել է գրավոր աղբյուրներ, «հետադարձան հնարագիտության պետք է զգացել և գրել է ավելի պարզ, դյուրընկալ ոճով» (էջ 204—5):

Մտքերի արտահայտության նույնության համար ն. Ալինյանը բերում է երեք օրինակ, որտեղ նման արտահայտություններ կան Ղևոնդի և Մովսեսի մեջ. 1. Հայրենիքի համար մեռնելը լավ համարել, քան տեսնել հայրենիքն օտարների լծի տակ նվաճված ու ոտնակոխ. 2. Եփրատի նավակամրջի լարերը կտրելը. (Պորենացու մոտ լարերը կտրում են իրենք՝ պարսիկները, արշավող հույն բանակի ճանապարհը դժվարացնելու համար. բայց Տիրան թագավորը հալածում է պարսիկներին և հույներին ապահով անց է կացնում գետով: Ղևոնդի մոտ նավակամրջի լարերը նենգությունը կտրում է Վարդ իշխանը, որպեսզի հույները չկարողանան փախչել, որոնք կոտորվում են պարսիկներից): 3. Երասխ գետի սառչելը ձմեռվա խստությունից:

Գաղափարակցության նույնության համար ն. Ալինյանը բերում է երեք համեմատություն Ղևոնդի և Մովսեսի միջև: Առաջինում Ղևոնդը պատմում է արաբացոց Մալիմ զորավարի արշավանքը Հոնաց երկիրը, ձորա Պահակից (Դարբանդից) անցնելով, որտեղ հոններին օգնության է գալիս իսլամաց թագավորը, իսկ արաբացիք Կովկասյան լեռների միջով փախչում են (8-րդ դարում): Սրա դեմ Մովսեսը պատմում է, թե Վաղարշ թագավորի ժամանակ (3-րդ դարում) իսլամացիները, Բասիլները ձորա պահակից անցնելով՝ արշավում են Կուր գետից հարավ: Վաղարշը նրանց հալածելով՝ քշում է ձորա պահակից այն կողմը, բայց այստեղ մի

նոր ձակատամարտում սպանվում է: Երկրորդում Ղևոնդը պատմում է, թե արաբացոց Մահմեդ զորավարը 200,000 զորքով գնում է Չինաստանը նվաճելու և հասնելով սահմանի մոտ՝ Չինաց թագավորից պահանջում է հնազանդություն: Թագավորը հայտնում է, թե իրենք երբեք ոչ ոքի հպատակ չեն եղել, ինքը միայն հոժար է ընծաներ տալ, որ ստանան ու հեռանան: Մահմեդը պահանջում է 30,000 կույս աղջիկ: Թագավորը համաձայնում է, պատրաստում է կանանց զգեստով ծառած 40,000 կտրիճ զորական, Մահմեդին մարդ է ուղարկում, որ իր զորքից 30,000 ընտիրներ մակույկներով անց կացնե իրենց կողմը, որպեսզի աղջիկները բաժանե նրանց մեջ: Երբ Արաբացիք անցնում են, ծրպատած զինվորները հաճակվում ու կոտորում են նրանց, Մահմեդը վերադառնալիս հետ է դառնում (8-րդ դար): Սրա դեմ Մովսեսը պատմում է, որ Ալաններն արշավեցին Հայաստան. հայերը նրանց հետ քշեցին Կուր գետից այն կողմը և գերի բռնեցին թագավորի որդուն: Թագավորի դուստր Սաթինիկը գալիս է Կուրի ափը և թարգմանի միջոցով ձայն է տալիս Հայոց թագավոր Արտաշեսին, որ պատանուն ազատ արձակե: Արտաշեսը շատ հավանում է Սաթինիկին և նրան կնություն է խնդրում ու հետը ամուսնանում (1—2-րդ դար): Երրորդում Ղևոնդը պատմում է, թե արաբացոց Մալիմ զորավարը Հայոց Աշոտ իշխանի և այլ նախարարների զորքերով միասին արշավում է Հոնաց աշխարհը, կոտորածներ է անում, հարուստ ավար բերում, որից մի մասն էլ բաժանում է Աշոտին և մյուս նախարարներին (8-րդ դարում): Սրա դեմ Մովսեսը պատմում է, թե Ալանաց աշխարհում Սաթինիկի հայր թագավորը մեռնում է. մի ուրիշը բռնանալով՝ հալածում է թագաժառանգին, Սաթինիկի եղբորը, ուստի Արտաշեսը Սմբատ Բագրատունուն զորքով ուղարկում է Ալանների աշխարհը, որ հալածում է բռնավորին, թագավորեցնում է Սաթինիկի եղբորը և մեծ գաղթականություն է բերում Հայաստան: Դարձյալ պատմում է Մովսեսը, թե Կասպից ծովի շրջակայքի ցեղերը չեն ուզում հպատակվել Պարսից Արտաշես թագավորին (Հայոց թագավորի բաժնեբարին), ուստի նույն Սմբատ սպարապետն Արտաշեսի հրամանով գնում նվաճում է ապստամբներին և ավելի մեծ գաղթականություն է բերում Հայաստան. թագավորը Սմբատին նվիրում է ամբողջ ավարը (2-րդ դարում): Այս երեք գաղափարակցության

նկատմամբ էլ Ն. Ալիևյանը դիտում է, որ «Մովսես ժողովրդա-
կան ավանդույթյունները և կամ սեպհական մտքի հղացումները
պատմական հանդերձանքով բեմադրելու համար սովոր է շատ
անգամ իրեն կաղապար ընտրել պատմական դեպքեր... Մովսես
յուր մտածումներու և հղացումներու մեջ կատանա տալովորու-
թյուններ պատմական դեպքերին և հատկապես Ղևոնդի Պատմա-
գրքին մեջ բեմադրված պատկերներեն: Դեպքերը կլրկնվին պար-
զապես ուրիշ հանդերձանքու մեջ, այս անգամ ներկայացված
երևակայական թատերարեմի վրա» (էջ 209—210). ուրիշ պարզ
խոսքերով ասած՝ ինչ որ Ղևոնդը գրել է իբրև պարզ և ստույգ
պատմական իրողություններ՝ Մովսեսը (այսինքն նույն Ղևոնդը,
70—80 տարեկան հասակում) օգտագործել է երևակայական կեղծ
պատմություններ ստեղծելու համար:

Աշխարհագրական և ազգագրական ծանոթությունների նույն-
նությունը ցույց տալու համար Ն. Ալիևյանը մի-մի մեջբերում է
անում Ղևոնդից ու Մովսեսից, որտեղ հիշատակվում են Արաքսի
շրջակայքի քաղաքներ ու ավաններ—Նախճավան, Խրամ, Ջուղա,
Խոշակունիք. դարձյալ հիշում է, որ երկու հեղինակներն էլ լավ
ծանոթ են Տայոց աշխարհին և մերձակա Կողին. երկուսն էլ
գիտեն Վրաստանի Վերիա կոչումը, երկուսն էլ ծանոթ են Զի-
նաստանի թագավորի ձենքակուր կոչման և ձենացիների խաղա-
ղասեր բնավորության. երկուսն էլ գիտեն Տրուսյաց տոհմը: Մով-
սեսը հիշում է Ամատունյաց տոհմը, որը սերեցնում է հրեաներից
և նկարագրում է նրանց որպես անձնյա, բարեձև և ուժեղ մար-
դիկ. Ղևոնդն էլ իր Պատմության մեջ հիշում է Ամատունյաց
շահատակությունները:

Դատողությունների և ըմբռնումների նույնությունը ցույց
տալու համար Ն. Ալիևյանը հիշում է, որ Մովսես Խորենացին
Հայերին սերեցնում է Հայկի հորից՝ Թորգոմից և հայ ժողովուրդը
կոչում է տուն Թորգոմա («անշուշտ հոս Մովսեսը ունեցել է աչքի
առաջ ազգային ավանդություն մը») (էջ 222): Ղևոնդն ևս Հա-
յաստանը կոչում է տուն Թորգոմա:

Ժամանակակից պարագաների նույնությունը ցույց տալու
համար Ն. Ալիևյանը բերում է Մովսեսի խոսքերը (Ա. գիրք, Գլ.
ԻԲ). «Միրելի էր ինձ յայնժամ [Հայկազանց ժամանակ] զալ
փրկչին եւ զիս գնել, եւ առ նորօք յաշխարհ զմուտն իմ լինել...»

և յարդեացս ապրել վտանգից: Այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ
պատահումն այն, թէ արդեօք եւ վիճակ: Բայց ես առ օտարաց
թագաւորութեամբն կացեալ» և այլն: Ն. Ալիևյանը գտնում է,
որ այս խոսքերը չէր կարող ասել Ծ-րդ դարում ապրող Խորենա-
ցին, որ գտնե հայ Վրամշապուհ թագավորին տեսած պիտի լի-
ներ, այլ հարմարվում են Ղևոնդի ժամանակին, երբ վաղուց
արդեն վերացած էր ազգային իշխանությունը և հույս չկար նրա
վերանորոգության:

Միտումների նույնությունը ցույց տալու համար Ն. Ալի-
ևյանը երկարորեն կանգ է առնում երկու հեղինակների վերա-
բերմունքի վրա Մամիկոնյան և Բագրատունյան տների հանդեպ:
Մովսեսն ասում է Մամիկոնյաններին, նվաստացնում է նրանց
ազգաշահ գործունեությունը, դուրս է բերում իբրև տիրադրու-
նեւ, նենգավորներ և այլն, ընդհակառակը, շատ բարձրացնում է
Բագրատունիներին և սրանց է վերագրում այն լավ գործերը, որ
կատարել էին Մամիկոնյանները: Այս բանը Ն. Ալիևյանը գտնում
է Ծ-րդ դարի համար անբացատրելի, բայց միանգամայն բնա-
կան և հասկանալի՝ ութերորդ դարի համար, երբ իշխանապետու-
թյան համար իրար հետ մրցում էին Մամիկոնյաններն ու Բազ-
րատունիները, ինչպես նկարագրում է Ղևոնդը, մինչև որ մի մեծ
ապստամբության ժամանակ, որ Մամիկոնյանները կազմակեր-
պեցին արաբացոց իշխանության դեմ՝ նրանց գլխավորներն ըն-
կան կռիվ դաշտում, մնացած սերունդն էլ բնաջինջ եղավ. Մա-
միկոնյանները պատմության ասպարեզից դուրս ընկան. և Բազ-
րատունիներն ապահովեցին իրանց իշխանությունը (որ հետո
փոխվեց թագավորության): Ղևոնդը նույնպես, ըստ Ն. Ալիևյանի՝
«վարակված է ոչ նվազ հակակրթյամբ հանդեպ Մամիկոնյան-
ներու» (էջ 237), նույնպես չափազանց գովեստներ է շուայում
Բագրատունիներին (230—31): Երկու հեղինակներն էլ, որոնք
պատմագրելու հանձնարարություն ստացել էին Բագրատունի
իշխաններից՝ նրանց զգացումների թարգմաններն են հանդիսա-
ցել (էջ 237):

Նույնությունների վերջին կեան է՝ երկու հեղինակների
մեկենասների էլ միևնույն Բագրատունյաց տոհմից լինելը: Ղևոնդի
մեկենասը հայտնի է—Շապուհ Բագրատունին: Գալով Մովսեսի
մեկենաս Սահակ Բագրատունուն՝ Ն. Ալիևյանը չէ ընդունում, որ



այս անձը լինե՞ր այն Սահակ ասպետ Բագրատունին, որ Վահան Մամիկոնյանի ապստամբութեան ժամանակ Հայաստանի մարզապան նշանակվեց Վահանի խմբի կողմից 481-ին և հետո մի ճակատամարտի մեջ ընկավ. «ճանի որ ամեն կասկածն վեր է, որ Հայոց Պատմութեան հեղինակը ժամանակով շատ հեռու է Ծրագրերեն» (էջ 254): Ուստի նա երկար պատմական և ճշուղագրական որոնումներ է անում և գտնում է մի այլ Սահակ Բագրատունի, Աշոտ Սահակյան Բագրատունու որդին, որ 806 թվին տեր դարձավ Անձեացյաց երկրին և այն ժամանակ իր մոտ հրավիրեց Մովսեսին, հանձնարարելով գրել Հայոց Պատմությունը: Պատմությունը նա սկսել է գրել 806-ից հետո և վերջացրել է ոչ շատ ուշ, քան 820 թվականը, մոտավորապես 810-ին:

Վերը բերված բոլոր ապացույցներից Ն. Ալիսյանը եզրակացնում է, թե «Մովսես Խորենացին և Ղևոնդ միևնույն անձնավորություններն են, ինչպես միևնույն են Մովսես և Մար Աբաս Կատինա» (էջ 286):

Մնում է մի կնճառ հարց ևս լուծել: Եթե Մովսես Խորենացին և Ղևոնդը միևնույն անձն են, ապա այս անուններից մեկը կամ մյուսը կեղծ է: «Քանի որ Ղևոնդի Պատմությունը իբրև ժամանակակից գեպքերու անպաճույճ անսեթևեթ նկարագրություն, գրված է ժամանակակից մը, պիտի ենթադրենք, թե չկար տեղիք խեղաթյուրելու, կեղծելու հեղինակին անունը, ուստի ավանդությունը հավատարմությամբ պահպանած է «Ղևոնդ Երեց» հորջորջանքը հեղինակին՝ գրության ճակատը կամ վերջավորություն»:

Բայց Մովսես անունը կարող է նկատվել կեղծիք, «վասն զի կեղծված է անոր ժամանակն ալ, գրության ձևն ալ... կեղծողը երկրորդ գրիչ մըն է, որ հեղինակին (այսինքն Ղևոնդ-Մովսեսի) մահվանեն ետքը, հավատարի և հեղինակավոր ընծայելու համար անոր խոսքերը՝ կարևոր տեսած է կեղծել ժամանակն ալ, անունն ալ» (էջ 289):

«Մովսես» անվան նկատմամբ Ն. Ալիսյանը ենթադրում է, թե «կեղծողն աչքի առջև ունեցած է Հնգամատյանին հեղինակը Մովսես մարգարեն, որ պատմած է Իսրայելի ժողովրդյան ծննդաբանությունը և թե ինչպես նա յուր ժողովուրդը եգիպտական ծառայութենեն հանեց և Կարմիր ծովու խոր անդունդներեն անցուց, տարավ և հասցուց Ափետյաց երկրին սահմանները: Նույն

գերը կկատարեր Հայոց Պատմության հեղինակն ալ, որ ժամանակի անձայր խորքերեն կհաներ ի լույս ազգի մը պատմությունը և կըրեր կհասցներ ժամանակ մը, ուր ազգը գրականություն մը նոր զինված, կազմակերպված, պիտի վայելեր Ափետյաց երկրը մտքի և լույսի» (էջ 290):

«Խորենացի» հորջորջանքի նկատմամբ Ն. Ալիսյանն ասում է, որ «այս հորջորջանքը պիտի ենթադրեն Խորյան կամ Խորեն է, որ «այս հորջորջանքը մը. այսպիսի վայր ծանոթ չէ մեզ Հագավառ մը կամ քաղաք մը. այսպիսի վայր ծանոթ չէ մեզ Հայաստանի սահմաններու մեջ: Հավանորեն նաև այս հորջորջանքի մեջ բառախաղ մը թագնված է. խոր արմատեն ածանցված, կամ «Խորին» — իմաստուն, հմուտ, կամ «Խուրին» — Խորին — ընթերցող իմաստով (հմտ. Մար Աբաս Կատինա), և կամ թերևս «որ ընդ խորս էանց» պատմութեան Հայոց»¹:

Մովսեսը, ժամանակակից ըմբռնմամբ, Արծրունիները կստուգարանն Արծիվունի, այսպես նաև Ամատունի — Համատանցի և այլն. ինչ զարմանք, եթե իր իսկ ստուգարանության օրենքներով երկրորդ գրիչ մը հորինած ըլլա իր ծագումն ալ իմաստություն, հանճարի խորքերն, և կամ բազմամյա ծերունուն անգույն ընթերցասիրությունը նկատելով ասորական խաբի = ընթերցասեր մակդիրն այսպես բարեփոխած ըլլա: Համենայն դեպս բառախաղ մը պետք է ենթադրել «Խորենացի» հորջորջման մեջ, քան տեղի տանում... (էջ 290):

Այսպես ուրեմն, ըստ Ն. Ալիսյանի, Մովսես Խորենացի անունները կեղծիքներ են, 9-րդ դարի երկրորդ տասնամյակում մի անձանոթ մարդու կողմից հորինված, և Մովսես Խորենացի անունը կրող մատենագիր մենք առհասարակ չենք ունեցել: Non plus ultra!

Իմ ծրագրից դուրս է քննել այս ուսումնասիրությունը, այս համառոտ ամփոփումով կամեցա ծանոթացնել այն մեթոդին և այն հիմունքներին, որոնցից նա հանել է իր այս եզրակացու-

¹ Այս ուսումնասիրությունը ապելուց առաջ Ն. Ալիսյանը նրա համառոտությունը ապագրել էր «Անահիտ» հանդեսում, սրտեղ «Խորենացի» բառը պարզապես ստուգարանել էր «Խորեն անցի». երևի ինքն էլ նկատել է այնուհետև, որ այս սրամիտ ստուգարանությունը շատ է հիշեցնում Ալիսի = արկ ուսի Կատու = կայ ի տուն, Կանթեղ = կայ անդ եղ... ստուգարանությունները և հարկ է համարել փոքր ինչ ձևը բարձրել իմաստը պահպանելով:

թյունը: Որքան գիտեմ՝ Ն. Ալիսյանի կարծիքն ընդունելով՝ չգտաւ: («Անահիտի» մեջ բաժական մանրամասն և հետաքննող կերպով քննվել ու հերքվել է Ն. Ալիսյանի կարծիքը: Ակադ. Հ. Մանանդյանը նույնպէս հավանական և ընդունելի չէ համարում Ն. Ալիսյանի ենթադրութիւններէն և ոչ մեկը, այսինքն Սորենացու և Ղևոնդի միենուէյն անձ լինելը: Պատմութիւնը Անձեւացյալ երկրի տեղ Սահակ Բագրատունու հանձնարարութիւնը զբեւր մոտավորապէս 810 թվականին: Ողբի հետո կցված լինելը Հայոց Պատմութիւն. նրա հորինված լինելն իբրև Ղևոնդի Պատմութիւն աստիճան մասի վերջաբանութիւն: Ընթացիկ արհամարհանքի նուշացումը Միջագետքի արհավիրքների հետ. քաղաքական անցքերի նկարագրութիւն մեջ 8-րդ դարի անցքերը տեսնելը և այլն): Ինձ թվում է, թե Ն. Ալիսյանի ուսումնասիրութիւնը կարող է մոլորեցնել միայն հին գրականութիւն անտեղյակ գլուխահանման մարդկանց: Իմ վերաբերմունքը բացարձակապէս բացասական է, եթե չտեսնեմ ավելին:

ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ. «ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՌԵՂՇՎԱԾԻ
ԼՈՒԾՈՒՄԸ»

Հեղինակն իր ուսումնասիրութիւն աստիճանում հայտնում է, թե ինքն սկզբում զբաղվելիս է եղել Սորենացու Աշխարհացոյցի ընդարձակ և համառոտ խմբագրութիւնների համեմատական քննութիւնը: Ուսումնասիրութիւն ընթացքում հետզհետեւ երեւան են եկել կարեւոր ու ծանրակշիւ հետազոտութիւններ, որոնք ուղեցույց են լինելու Սորենացու առեղծվածի լուծման: Հեղինակի համար միանգամայն պարզ և անվիճելի է եղել, որ Աշխարհացոյցը խորեմացու աշխատաւորուն է և գրված է 9-րդ դարում: Ուրեմն անհրաժեշտ է դարձել խորեմացու ամբողջ խնդիրը հետազոտել ու լուսարանել այս նոր հայեցակետով (Առաջաբան, էջ 3): Նույն միտքը կրկնում է և հետո՝ երկու անգամ. «Աշխարհացոյցի խնդրի լուծումը, ինչպէս կտեսնենք, հնարավորութիւն է տալիս վերջնականապէս պարզելու նաեւ Սորենացու չարաբանութիւ հարցը, որի մասին անթիվ քննադատութիւններ են լույս տեսել ու թեր և դեմ կարծիքներ հայտնվել» (էջ 46): «Արդ՝ եթե Աշխարհացոյցի հեղինակը Մովսէս Սորենացին է, իսկ այդ, ինչպէս տեսնենք, անվիճելի է ու անտարակուսելի՝ շատ պարզ է,

որ Սորենացու ժամանակն իջեցվելու է իններորդ դարը: Այս հզորակացութեամբ Սորենացու ժամանակի համար ստացվում է որոշ ու հաստատուն մի կռիւն» (էջ 82):

Ուրեմն այս ուսումնասիրութիւն արամբանական կառուցվածքը կարելի է ձևակերպել այսպէս.—

Ըստ ակադ. Մանանդյանի՝

1. Աշխարհացոյցն իններորդ դարի գործ է.

2. Աշխարհացոյցի և Հայոց Պատմութիւն հեղինակը նույն անձն է—Մովսէս Սորենացի.

3. Ուրեմն Մովսէս Սորենացին ապրել է իններորդ դարում և նրա Պատմութիւնն իններորդ դարի գործ է:

Եզրակացութիւնը արամբանորեն ճշմարիտ և անխուսափելի է, եթե նախադրյալները ճշմարիտ լինին, իսկ եթե նախադրյալներից դոնս մեկը ճշմարիտ չլինի, կառուցվածքը կտապալվի, կտապալվի այն մտքով, թե Աշխարհացոյցը չէ կարող կռիւն լինել Սորենացու և նրա Պատմութիւն ժամանակը որոշելու համար:

Հեղինակն իր ուսումնասիրութիւն աստիճանում աշխատում է ապացուցել իր երկու նախադրյալները: Նա մանրամասն հիշում է Աշխարհացոյցի տապալութիւնները, ժամանակագրական կարգով բերում է զանազան գիտնականների կարծիքները Աշխարհացոյցի և նրա հեղինակի մասին, քննում է այդ կարծիքները, հերքում կամ ընդունում:

Եւ կանգ կառնեմ նրա ուսումնասիրութիւն այս մասում բերված կետերից միայն մի քանիսի վրա, որոնք անմիջապէս շոշափում են Աշխարհացոյցի գրութիւն ժամանակի և նրա հեղինակի հարցերը, բաց թողնելով այն հարցերը, որոնք անմիջական կապ չունեն այս երկու հարցերի հետ:

1. Աշխարհացոյցի երկու խմբագրութիւնների խնդիրը: Մինչև 1881 թվականը բոլոր բանասերները, որոնք զբաղվում էին Աշխարհացոյցով, միամտաբար ընդունում էին, թե այս Աշխարհացոյցը, որի ուղղված բնագիրը ապակե վենետիկում 1845-ին և երկրորդ անգամ՝ 1865-ին, Մ. Սորենացու մյուս գրքերի շարքին է և երկրորդ անգամ՝ 1865-ին, Մ. Սորենացու կամ մի վածքների հետ՝ բուն հեղինակի գործն է, Մ. Սորենացու կամ մի ուրիշ անձի, և այս բնագրի տվյալների վրա էին հիմնում իրենց դատողութիւնները նրա գրութիւն ժամանակի և նրա հեղինակի

մասին: Բայց 1881-ին Վենետիկի միթիթարյան Ա. Սուքրյանը Աշխարհացույցը հրատարակեց ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ՝ մի նոր ձեռագրից, որ շատ տարբերվում էր մինչև այդ հրատարակված բնագրից, ամենից առաջ իր ընդարձակությամբ— նա գրեթե երկու անգամ ավելի ընդարձակ էր, քան նախկին հրատարակությունը: Սուքրյանն իր հրատարակության առաջաբանում պնդում էր, հակառակ պրոֆ. Պատկանյանի, թե այդ Աշխարհացույցը, անշուշտ, Մովսես Խորենացու գործն է 5-րդ դարից, բայց հետսամուտ հավելվածներով ու ընդմիջարկություններով: Բայց նա բոլորովին չշոշափեց աղերսը իր հրատարակած ընդարձակ խմբագրություն և նախկին համառոտ խմբագրության միջև. սրանցից որն է իսկական Խորենացու գրածը (ներառաջաբանից կարելի է եզրակացնել, թե նա Խորենացու գրած հաբազատ բնագիր համարում է համառոտը), և ինչ կապ ունի նրա հետ մյուսը (ընդարձակը). այս կարևոր հարցը նա բոլորովին չէ շոշափել:

Այս հարցով առաջին անգամ զբաղվել է Մակլերը, որ սկզբում Աշխարհացույցի սկզբնական բնագիր համարում էր ընդարձակ խմբագրությունը, սակայն հետո այս կարծիքը փոխեց և հանգեց այն եզրակացության, թե Աշխարհացույցի երկու խմբագրություններն էլ, թե ընդարձակը և թե համառոտը, մեկը մյուսից անկախ համառոտված են նախնական ընդարձակ բնագրից. Makler—Zur Geschichte des Ps. Moses Chorenatsi, Armeniaca, II, 1927. այս տեղեկությունը բերում եմ ահադ. Մանանդյանի գրքից (էջ 14): Նույն հարցով մանրամասն զբաղվել է նաև ահադ. Մանանդյանը և մի շարք փաստերով ապացուցել է, որ Աշխարհացույցի ոչ ընդարձակը և ոչ համառոտը սկզբնագրեր չեն և մեկը մյուսից չեն բղիտում, այլ երկուսն էլ համառոտված են մի նախնական բնագրից, որ ավելի ընդարձակ է եղել և այժմ անհետ կորել է: Խմբագրությունների մեջ կան հավելվածներ, որոնց մի մասը կարող է ներմուծված լինել խմբագրողների կամ ընդօրինակողների կողմից (էջ 17):

2. Աշխարհացույցը Անանիա Շիրակացու գրածը չէ: Պրոֆ. Բ. Պատկանյանը 1877 թվին տպեց Աշխարհացույցը (համառոտը) ուսերեն թարգմանության հետ միասին հարուստ և հմտալից ծանոթություններով: Նա, համոզված լինելով, որ Մովսես Խորենացին է:

նացին 5-րդ դարի հեղինակ է՝ կարծիք հայտնեց, թե նա չէր կարող լինել հեղինակ Աշխարհացույցի, որը պարունակում է տեղեկություններ և աղբյուրներ 6-րդ և 7-րդ դարերից: Ի միջի այլոց նա առաջինն էր, որ ցույց տվեց, թե Աշխարհացույցի մեջ իբրև աղբյուր հիշված Կոստանդին Անտիոքացին 6-րդ դարի հույն հեղինակ Կոզմաս Հնդկաչուն է, որի Քրիստոնեական Երկրագրությունից օգտվել է Աշխարհացույցի հեղինակը: Բ. Պատկանյանը հանգեց այն եզրակացության, թե Աշխարհացույցը գրված է 7-րդ դարում, և նրա հեղինակ ենթադրեց Անանիա Շիրակացուն, որ 7-րդ դարի հեղինակ է ու հայտնի է թվաբանական և աստղաբաշխական աշխատություններով: Պատկանյանի այս ենթադրությունն ընդհանուր ընդունելություն գտավ՝ (չնայելով Սուքրյանի հրատարակության, որի առաջաբանում նա ճշմունք էր ապացուցել, թե Աշխարհացույցը Մ. Խորենացու գործն է): Նրան հետևեցին Գուտշմիտը, Խալաթյանը, Մարկվարտը և ուրիշները: Ահադ. Մանանդյանը իր ներկա ուսումնասիրության մեջ մի առաջին քննում է Բ. Պատկանյանի բերած փաստերը հոգևոր իր ենթադրության և հերքում է նրանց. մյուս կողմից՝ համեմատում է շատ կետեր Աշխարհացույցի ու Անանիա Շիրակացու իսկական գրվածքների մեջ և ցույց է տալիս, որ աշխարհագրական կարևոր հարցերում իրար բոլորովին տարբեր կարծիքներ ունին Անանիա Շիրակացին և Աշխարհացույցի հեղինակը, այնպես որ անհնար է Աշխարհացույցի հեղինակ համարել Շիրակացուն:

3. Բ. Պատկանյանի կարծիքը հերքելուց հետո ահադ. Մանանդյանը կանգ է առնում Աշխարհացույցի և Խորենացու Պատմության հարաբերության վրա: Երկու գրվածքներից էլ նա բերում է բավական թվով համովածներ, որոնց մեջ երևում է հայացքների նույնություն տիեզերագրական, աշխարհագրական և պատմական զանազան հարցերի նկատմամբ. համեմատում է երկու գրվածքների ոճը, և բազմաթիվ օրինակներով ցույց է տալիս, որ Պատմության հեղինակ Մովսես Խորենացին և Աշխարհացույցի հեղինակը գրելու միևնույն սովորությունն ունին: Սրանց վրա ավելացնելով նաև այն փաստը, որ բոլոր ձեռագրերում Աշխարհացույցը վերագրվում է Մովսես Խորենացուն՝ նա հանգում է այն եզրակացության, թե Աշխարհացույցի հեղինակը Մովսես Խորենացին է:

Ակադ. Մանանդյանի այս երեք եղբայրացու թյուններն էլ համոզիչ են և միանգամայն ընդունելի¹։ Սրանք կազմում են նրա ուսումնասիրության դրական արժեքավոր արդյունքները։ Ճիշտ է, նրանց մեջ նոր բան քիչ կա (բացի Պատկանյանի կարծիքի հերքումից, որ բոլորովին նոր և ինքնուրույն է), բայց ինչ որ առաջ գիտեինք ենթադրաբար, ավանդաբար՝ այժմ գիտենք հաստատուն կերպով։ Խորենացին դարձյալ հայտարարվում է հեղինակ Աշխարհացույցի, ինչպես ավանդաբար ճանաչված է հղել մինչև 1819 թվականը, երբ Սեն-Մարտենն առաջին անգամ նրան կոչեց «Աշխարհացույց ստոյն Մովսիսի Խորենացու», որի շաղկապ էլ գնաց Բ. Պատկանյանը, հայտարարելով Աշխարհացույցը 7-րդ դարի գործ՝ Անանիա Շիրակացու հեղինակություն։

Աշխարհացույցն այժմ դարձյալ իր իսկական հեղինակին ընծայվեց, սակայն այն կարևոր տարբերությամբ հին, ավանդական հայացքից, որ ներկայումս մեր ունեցած Աշխարհացույցի

¹ Անհրաժեշտ եմ համարում հայտնել, որ 1936 թվին, երբ ես այս աշխատությունը գրում էի՝ ակադեմիկոս Մանանդյանի բերած աղացույցները՝ Աշխարհացույցի Խորենացու պատկանելու մասին՝ ինձ ևս բոլորովին համոզիչ թվացին, և ես ուրախացա, որ այս կնճռոտ խնդիրը վերջնականապես լուծվեց բավարար կերպով։ Բայց 1938 թվին ես նրանում կարգացի Պետ. Ջեռադրատան ավագ աշխատակից Աշ. Աբրահամյանի ձեռագիր աշխատությունը Անանիա Շիրակացու և քննության առարկա եղող Աշխարհացույցի մասին։ Աշ. Աբրահամյանը մի առ մի քննում է ակադ. Մանանդյանի բոլոր աղացույցները հոգուտ նրա կարծիքի, թե Աշխարհացույցը Խորենացուն է պատկանում, հերքում է այդ աղացույցները և իր կողմից բազմաթիվ անհերքելի աղացույցներ է բերում, որ այս Աշխարհացույցը պատկանում է Շիրակացուն Ի միջի այլոց՝ նա մի առ մի քննելով Պետ. Մատենադարանի Աշխարհացույցի 36 ձեռագիր օրինակները և նրանց ճյուղագրությունը կազմելով՝ ցույց է տվել, որ Խորենացու անունը կրում են Աշխարհացույցի նորագույն ձեռագրերը (սկսած 1600 թվականից), իսկ նրանից առաջ գրված հնագույն 7 օրինակ հեղինակի անուն չեն կրում։ Բերում է նաև մի շարք մատենագրական ցուցումներ, համեմատություններ Շիրակացու գրվածքների և Աշխարհացույցի։ Ինձ համար այլևս կասկած չմնաց, որ Աշխարհացույցը, անշուշտ, Անանիա Շիրակացու գործն է։ Այս բացատրությունը տալուց հետո, այլևս հարկ չեմ համարում իմ այս աշխատության մեջ գրածս փոփոխել, քանի որ իմ տարածախնությունն ակադ. Մանանդյանի հետ ոչ այնքան վերաբերում է Աշխարհացույցի հեղինակի անձին, որքան գրության ժամանակին և իմ պնդումները, թե Աշխարհացույցը 9-րդ դարի գործ չէ, այլ 7-րդ դարի կամ ավելի հին ժամանակի՝ դարձյալ մնում են իրենց ուժի մեջ։

ճերկու խմբագրություններից ոչ մեկը Մ. Խորենացու գրչից դուրս եկած ընագիրը չէ. այդ ընագիրն անհետ կորած է, եղած խմբագրությունները համառոտված են նրանից և կրում են հավելումներ ու ընդմիջարկություններ խմբագրողների և արտագրողների կողմից։

4. Աշխարհացույցի գրաքյան ժամանակը։ Հաստատելուց հետո, որ Աշխարհացույցը Մ. Խորենացու գրածն է, ակադ. Մանանդյանը դիմում է որոշելու Աշխարհացույցի գրության ժամանակը, որ նրա աշխատության կարևորագույն, հիմնական կետը պետք է լինի, քանի որ նա իբրև հաստատուն կռվան պիտի ծառայե նաև Պատմության ժամանակը որոշելու, Խորենացու առեղծվածը լուծելու համար։ Ինչպես սկզբում տեսանք՝ ակադ. Մանանդյանն իր ուսումնասիրության առաջաբանում հայտնում է, թե իրեն համար միանգամայն պարզ էր և անվիճելի, որ Աշխարհացույցը գրված է 9-րդ դարում, ուրեմն նրան մնում է բերել աղացույցներ, որպեսզի ընթերցողների համար էլ այս կետը պարզ և անվիճելի դառնա։

Որո՞նք են նրա աղացույցները։ Նախքան նրա աղացույցները մեջ բերելը հարկավոր է մի համառոտ ակնարկ նետել, թե Աշխարհացույցի գրության ժամանակի մասին ինչ հայացք են ունեցել ուրիշ բանասերներ։ Սեն-Մարտենն Աշխարհացույցի գրության ժամանակը դնում էր 9-րդ դարում կամ 10-րդ դարի սկզբում, հիմնվելով մի քանի աշխարհագրական հատուկ անունների վրա, որոնք այս ժամանակից առաջ չէին կարող հայտնի լինել։ Սակայն Աշխարհացույցի քննական հրատարակության մեջ (1845-ին) այդ անունները դուրս գցվեցին իբրև ձեռագրերի ընդմիջարկություններ, այնպես որ Սեն-Մարտենի կարծիքն այս կետում հերքվեց և այնուհետև ոչ մի հետևորդ չունեցավ (էջ 28—31 և 81)։

Սեն-Կրուան Աշխարհացույցը համարում էր ոչ Խորենացու գործ և գրված էր համարում 7-րդ դարում (էջ 27—28)։

Հյուբշմանը նույնպես Աշխարհացույցը համարում է ոչ Խորենացու գործ և նրա գրության հետագույն սահմանը (terminus post quem non) որոշում է 902 թիվը, այսինքն թե այս թվականից հետո Աշխարհացույցը չէր կարող գրված լինել (էջ 81—82)։ Իր Բերականության մեջ Հյուբշմանը Աշխարհա-

Զ-րդ դարի գործ լինելու համար մինչև այստեղ ակադ. Մանանդյանը ոչ մի ապացույց չի բերել, և գրեթե բոլոր բանասերներն այդ խմբագրությունները համարել են 7-րդ դարի գործ՝ սրանից հետևում է, որ այդ արաբական բառերն էլ մեր և Աշխարհացույցի մեջ մտել են արաբական շրջանի վաղագույն ժամանակներում, հենց 7-րդ դարում: (Հայտնի են արաբների արշավանքները, Դվինի գրավումն ու կոտորածը, 35 հազար մարդու գերի տարվելը՝ 642 թվին):

Դալով այն հարցին, թե այդ արաբական բառերը խմբագրողներն են ավելացրել, թե չուն հեղինակի (այսինքն Սորենացու) գրածն են, այս բարդ խնդիրը լուծելու համար պետք է նկատի առնել հետևյալ հանգամանքները.

Դեռ որոշված չէ, թե երկու խմբագրություններից որն է ժամանակով ավագը և որն՝ կրտսերը, որոշված չէ նաև, թե կրտսեր խմբագրողն սկզբնական օրինակից համառոտելու ժամանակ ձեռքի տակ ունեցել և օգտագործել է ավագագույն խմբագրությունը, թե ոչ:

Հայտնի չէ նաև, թե խմբագրողները բուն հեղինակի գրած բնագրից են համառոտել իրենց գործերը, թե եղել է մի միջանկյալ՝ նույնպես անհետացած և ընդմիջարկված խմբագրություն, որից և համառոտել են երկու խմբագրողները, կամ սրանցից մեկը համառոտել է բուն սկզբնագիր բնագրից, իսկ մյուսը՝ ընդմիջարկված, այժմ կորած խմբագրությունից մեկը: Իմ այս վերջին ենթադրությունը կամայական չէ. ինքը՝ ակադ. Մանանդյանը թույլ է տալիս, որ կարող են եղած լինել մի քանի սկզբնական բնագրեր («Անհրաժեշտ էր... նաև քննել Աշխարհացույցի սկզբնական բնագրի կամ բնագրերի հարցը, որոնցից ծագել են այժմյան խմբագրությունները», էջ 13—14)¹:

¹ Իբրև մի կողմնակի ապացույց մի ուրիշ ընդմիջարկված և այժմ կորած խմբագրության, կարելի է հիշել Ղևոնդ Երեցի մոտ բերված հետևյալ տողերը Աղամսիս գետի մասին. «Անցանէին ընդ գետն Աղամսիս (կամ Աղամսիսիս), որ ի կողմանս Տայոց ըզխեալ երթայ զհիւսիսով արեւմտից, անցանելով ընդ Եգեր՝ մտանէ ի Պոնտոս» (էջ 168): Համառոտ Աշխարհացույցը չունի Աղամսիս գետ, իսկ ընդարձակն ունի այսպես. «Ընդ որ իջանէ Յոն. գալով ի Սպերայ, անցանէ առ Թուրարս բերդով ի Կլարջս, եւ անտի յնգր, ընդ նեղալ ընդ Մրուդ եւ ընդ Մրիս գաւառս ի Պոնտոս ծով, զոր Եգերացիք կոչեն Աղամսիս եւ Թուրաք Կաղամար» (էջ 35): Մի ուրիշ տեղ գրում է. «Աղամ-

Այս պատճառով մենք Աշխարհացույցի բնագրի կամ բնագրերի և այժմյան խմբագրությունների փոխադարձ հարաբերությունն հարցնում խաբխափում ենք խավարի մեջ. և այս հարցնում մեր բոլոր դատողությունները, բնականաբար, ենթադրության բնույթ են կրելու:

Այս պայմաններում և ընդունելով ակադ. Մանանդյանի կարծիքը, որ այս արաբական անունները չեն կարող լինել խմբագիրների հավելումներ իրանց ունեցած բնագրի վրա, այլ որ նրանք ծագում են մի ընդհանուր աղբյուրից, կարելի է զանազան ենթադրություններ անել նրանց ծագման մասին:

1. Կարող էին այս ու նրանց հետ մյուս պարսկերեն և անհայտ ծագում ունեցող նյութերի անունները գտնվել մի բնագրում, որ գրված էր արաբական շրջանից առաջ և որի հեղինակն այս բառերին ծանոթացել է Հայաստանի շուկաներում, հատկապես Դվինում՝ վաճառվող ապրանքներից: (Հիշենք՝ ամպար, գմուռս, կինամոմոն, կնդրուկ, հալուէ, մուշկ և այլն):

2. Արաբական շրջանից առաջ գրված բնագիրը չէր պարունակում այդ բառերը, այլ մի միջանկյալ՝ մեր ձեռքը չհասած խմբագրություն ավելացրել է այս բառերը, կամ 7-րդ դարից առաջ, իբրև Հայաստանում ծախվող ապրանքների անուններ, կամ արաբական շրջանի սկզբներում, և այս խմբագրությունից օգտվել են մեզ հայտնի երկու խմբագրությունները:

3. Կարող էր մեզ հայտնի երկու խմբագրություններից կրտսերն աչքի առաջ ունենալ ավագագույն խմբագրությունը և նրանից վերցնել այս անունները:

4. Կարող էին, վերջապես, այս բառերը գտնվել այն սկզբնագրում, որ հեղինակը գրել է արաբական շրջանում, 9-րդ դարում, և հատկապես 9-րդ դարի երկրորդ կեսի սկզբներին (քանի որ, ըստ ակադ. Մանանդյանի, Սորենացու Պատմությունը գրված է Բուղայի արշավանքից հետո, 855—865 տարիների միջանկյալ շրջանում): Սակայն այս դեպքում մեր ձեռքի տակ եղած երկու խմբագրությունները, որոնք ծագած են 9-րդ դարի երկրորդ կեսի

սիս որ է Յոն. որ գայ ի Մեծ Հայոց» (էջ 27): Պարզ է, որ Ղևոնդն օգտվել է Աշխարհացույցի ուրիշ այժմ մեզ անհայտ խմբագրությունից կամ սկզբնագրից:

այդ բնագրերից՝ պետք է իջեցվեն գոնե մինչև 10-րդ դարի կեսերը (որպեսզի մի գրվածք հաջորդաբար երկու անգամ խմբագրութունների ենթարկվի, պետք է ամենաքիչը մի հարյուր տարի): Բայց այսպիսի ուշ ժամանակի գործ չեն համարում Աշխարհացույցի խմբագրութունները ոչ մի բանասեր, և ոչ ինքը՝ ակադ. Մանանդյանը: Հյուսիսային, ինչպես տեսանք, նրանց հետնադույն ժամանակը որոշում է 902 թվականը: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, այս ենթադրութուններից ամենաքիչ հավանականութունն ունի վերջինը, որ ընդունում է ակադ. Մանանդյանը:

Քաղերդ գետի մասին ընդարձակ խմբագրության մեջ երկու անգամ ասված է, թե տաճիկները նրան այժմ կոչում են Շիթիթմա, այսինքն արյունարբու: Ակադ. Մանանդյանը հավանական է համարում, թե այս արաբական անունը գետին կարող էր տրվել 8-րդ դարի վերջերում կամ 9-րդ դարում, երբ Հայաստանի հարավային մասում հաստատվել էին արաբական գաղութներ, և հիմնվել էին արաբական ամիրայություններ: Ուրեմն ըստ ակադ. Մանանդյանի, այս անվանակոչութունը կարող էր տեղի ունեցած լինել նաև 8-րդ դարում, այսինքն դարձյալ անկասկածելի ապացույց չէ, որ Աշխարհացույցն 9-րդ դարի երկրորդ կեսի գործ է: Ամենից հավանական է, սակայն, որ միայն ընդարձակ խմբագրության մեջ (մեզ հասած մի օրինակում) հանդիպող արաբական այս անունն ընդմիջարկութուն լինի ձեռագիրն արտագրող գրչի կողմից և ոչ խմբագրողի հավելումը, ուրեմն կարող է նաև ավելի ուշ ժամանակից լինել:

Աշխարհացույցի մեջ Ֆրանկները կոչված են «հօր աղգ» — այս հորջորջումը ակադ. Մանանդյանը հավանական նշան է համարում կապելու Կարլոս Մեծի ժամանակի հետ (768—814), երբ Ֆրանկները հաղթական կռիվներ էին մղել Սպանիայում Արաբների դեմ և ինքը՝ Կարլոս Մեծը, բարեկամական հարաբերություններ է ունեցել Հարուն ալ Ռաշիդի հետ (էջ 83): Բայց Ֆրանկները հզոր աղգ էին նաև այս ժամանակաշրջանից առաջ, Կարլ Մարտելի ժամանակ (689—741), որ 732-ին Պուատիեում Մավրերին ջախջախեց, վերջ դրեց Սարակինոսների առաջխաղացությանը ու փրկեց քրիստոնեական քաղաքակրթութունը, — նրա որդու՝ Պիպին Կարճհասակի ժամանակ (741—768), որ Ֆրանկների թագավոր օծվեց, նաև սրանից առաջ, դեռ 6-րդ

դարում, ինչպիսիք ժամանակ, որ իր իշխանության տակ նվաճեց բոլոր Ֆրանկներին և դարձավ Ֆրանկների պետության ինքնակալ պետ: Այս ժամանակներին ավելի հարմարում է ընդարձակ Աշխարհացույցի հիշատակությունը, թե Ֆրանկների կեսն ապրում է Գաղղիայում և կեսը՝ Գերմանիայում (էջ 15)¹:

Այսպես ուրեմն, Աշխարհացույցի երկու խմբագրություններն էլ չեն տալիս և ոչ մի անկասկածելի ապացույց, թե Աշխարհացույցի սկզբնական բնագիրը գրված է 9-րդ դարում և ոչ խաբարացույցի սկզբնական ընագիրը գրված է 9-րդ դարում և ոչ առաջ: «Հավանականությունները» հավանականություններ են և առաջ: «Հավանականություններ, ուստի և չէ կարող Աշխարհացույցը լրողություններ, ըստի և չէ կարող Աշխարհացույցը «որոշ և հաստատուն կովան» դառնալ (էջ 84), որի հիման վրա կարելի լիներ լուծել խորհրդացու առեղծվածը: Ընդհակառակը, խորհրդացու առեղծվածը լուծելու համար պետք է դիտել Հայոց Պատմության, որ շատ ավելի բազմակողմանի նյութեր է պարունակում նրա հորինման ժամանակը որոշելու տեսակետից, և այդ ժամանակը որոշելուց հետո կորոշվի նաև Հայոց Պատմության հեղինակի ապրած ժամանակը, Աշխարհացույցի հորինման ժամանակը, այսինքն՝ կլուծվի խորհրդացու առեղծվածը:

Նախքան խորհրդացու Հայոց Պատմության անցնելը, ակադ. Մանանդյանը կանգ է առնում «Մղոնաչափքի» (զանազան քաղաքների միջև եղած հեռավորության) և Սուտ Կալիսթենեսին վերագրված՝ Աղեքսանդր Մեծի Վարքի վրա: Ես դանց եմ անում երկուսի մասին էլ խոսելը: «Մղոնաչափք»-ը ոչ մի հարնչություն չունի Հայոց Պատմության հետ, իսկ Աղեքսանդրի Վարքը թեչունի Հայոց Պատմության հետ, բայց այնքան տարբեր են կարծիք պետ ունի հարնչություն, ժամանակի մասին, սկսելով 5-րդ դարից մինչև 9-րդ դարը, որ նա չէ կարող Հայոց Պատմության գրողի ժամանակի համար որոշ նյութ մատակարարել. ընդգրկության ժամանակի համար որոշ նյութ մատակարարել. ընդհակառակը, Պատմության ժամանակը որոշելով՝ ավելի հեշտ կլինի Վարքի թարգմանության ժամանակն էլ որոշել, մասնավորապես որ Վարքի մեջ գործածված բառապաշարը սերտ կապ ունի Հայոց Պատմության և Պիտոյից գրքի բառապաշարի հետ, որի մասին հետո խոսելու ենք:

¹ «Հզոր» բառը Աշխարհացույցի մեջ գործ է ածվում Մեծ, Ընդարձակ նշանակությամբ գետերի մասին: Հզոր աղգն էլ հավանորեն նշանակում է մեծ, բազմամարդ աղգ, ինչպես արդարև էին Ֆրանկները, և ոչ թե ուժեղ:

Ակադ. Մանանդյանը Հայոց Պատմութեան քննութեանը ձեռնարկում է կանխակալ կարծիքով: Աշխարհացոյցի ուսումնասիրութեան վրա հիմնված՝ նախապես նա համոզմունք է կազմել, թե Պատմութեանն էլ գրված պետք է լինի 9-րդ դարում, ուստի, Պատմութեանը քննելիս, նրա մեջ նա տվյալներ է որոնում այս կանխակալ համոզումն ապացուցելու համար: Հարցին այսպես մոտենալով՝ նա հաճախ անտես է անում իր համոզմունքին հակասող փաստերը, կամ նրանց տալիս է անհավանական բացատրութիւն, կամ փաստեր է գտնում այնպիսի տեղերում, որոնք ոչ-կանխակալ դիտողի աչքում զուրկ են որևէ նշանակութիւնից:

Մեթոդի այս սխալն արտահայտվում է նրա քննութեան ամբողջ ընթացքում և իր բացասական դրոշմն է դնում նրա հետաքրքրական, մանրակրկիտ քննութեան վրա:

Այս ընդհանուր դիտողութիւնից հետո դառնում եմ նրա թեզիսներին:

«Խորեմացու Պատմութեանը և Աշխարհացոյցը, — ասում է նա, — գրված են 9-րդ դարում՝ հայ վաճառականութեան գաղափարն ու Հայաստանի տարանցիկ առևտրի վերակենդանացման շրջանում» (էջ 117): Ակադ. Մանանդյանը բացատրում է, որ արաբական տիրապետութեան առաջին շրջանն աննպաստ էր Հայաստանում վաճառականութեան զարգացման համար: Բայց երբ 9-րդ դարում արաբական իշխանութիւնը, ներքին երկպառակութիւնների պատճառով, թուլացավ և Հայաստանը հանգրստացավ, և մյուս կողմից՝ երբ նույն այդ շրջանում Բագրատունիները, Բյուզանդիայի հետ բարեկամական հարաբերութիւններ պահպանելով, շատ զորացան և մեծամեծ կալվածների տեր դարձան Հայաստանի արևմտյան կողմերում ու վրաստանում՝ թե տեղական և թե տարանցիկ (տրանզիտային) առևտուրը զարգացավ, որ իր հերթին պետք է անդրադառնար նախարարական Հայաստանի սոցիալական կազմակերպութեան, ինչպես և նրա կուլտուրական, մինչև անգամ մտավոր կյանքի վրա:

Հայաստանի վերակենդանացման այն շրջանում հայ վաճառականները, նաև քաղաքացիները բարձր դիրք են ստացել, որի

համար ակադ. Մանանդյանը ապացուցց է բերում Խորենացու հետեյալ վկայութիւնը, որ, նրա կարծիքով, վերաբերում է ոչ թե Վաղարշակ Թագավորի ժամանակին, այլ հենց Խորենացու ապրած ժամանակին (այսինքն 9-րդ դարի երկրորդ կեսին). —

«Հրաման տայ [Վաղարշակ] և քաղաքացեաց մարդկան արդոյ եւ պատիւ լինել՝ առաւել քան զգեղջկաց, եւ գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս, եւ քաղաքացեաց մի կարի առ գեղջիօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց» (Բ., 8):

Նախ նկատելու եմ, որ ոչ մի հավանականութիւն չկա քաղաքացիների ավելի բարձր դիրքն ու պատիվը վերագրել Խորենացու ապրած ժամանակին, ինչպես եսթաղրում է ակադ. Մանանդյանը առանց որևէ հիմքի, այլ ավելի բնական է վերագրել հենց Վաղարշակի ժամանակին, ինչպես գրված է բնագրում: Ըստ Խորենացու՝ նախարարական տները հաստատեց ու կարգավորեց Վաղարշակը. բնական է, որ նա որևէ կարգ պետք է հաստատեր նաև մյուս դասակարգերի՝ քաղաքացիների և շինականների փոխադարձ հարաբերութեան նկատմամբ: Քանի որ ֆեոդալական կազմակերպութիւնը Հայաստանում վաղուց գոյութիւն ունէր իր անազատ շինականների դասակարգով, և քանի որ Հայաստանում շատ վաղուց գոյութիւն ունէին նաև քաղաքներ՝ իրենց քաղաքացի բնակիչներով (վաճառական, արհեստավոր, գործարանատեր և այլն), որոնք մեծամեծ առավելութիւններ ունէին շինականների համեմատութեամբ՝ պարզ է, որ վաղուց ի վեր պետք է գոյութիւն ունենար նաև իրավական ու սոցիալական տարբերութիւն այս երկու դասակարգերի միջև, և Խորենացին, գուցե գիտակցաբար, գուցե բնազդաբար, շատ ճիշտ է որոշել այդ դասակարգերի տարբերութիւնը ֆեոդալական հասարակարգը հիմնավորելու պահին: Վերոհիշյալ խոսքերը 9-րդ դարի վաճառականութեան զարգացման հետ կապելու ոչ մի հիմք չկա:

Գալով հատկապես վաճառականներին, որոնց շուրջն է այստեղ պտտվում հարցը, նկատում ենք, որ նրանց մասին ոչ մի

1 «Արդոյ եւ պատիւ լինել» բերականորեն սխալ խոսք է. պետք էր ընտրել Ա. ձեռագրերի ընթերցվածք. «կարգ և պատիւ լինել», այսինքն քաղաքացիների կարգը (դասակարգը) և պատիվը գոյություններից ավելի բարձր լինի, որ միանգամայն բնական է ֆեոդալական իրավակարգի ժամանակ:

Ֆիշտառակությունն չկա այս խոսքերում: Այս դեռ բավական չէ: Խորենացու ամբողջ Պատմության մեջ ոչ մի անգամ գործածված չեն «վաճառականություն», «վաճառական» բառերը, նույնիսկ այն տեղերում, երբ սպասելի էր: Արտաշես Բ-ի շինարարու-
թյունները պատմելով (Բ., 56, 59), թե ինչպես նա զարգացրեց
երկրագործությունը, երկիրը բազմամարդ զարձրեց նոր գաղութ-
ներ բերելով, ծովակներ լրացնելով, զետեղելով լրա-
յով ճանապարհորդություն, ձկնորսական գործիքներ և այլն
մասցրեց՝ Խորենացին ոչ մի խոսք չէ ասում վաճառականության
զարգացման մասին: Ողբի վերջում, որտեղ նա գտնւն խոսքերով
դատապարտում է բոլոր դասակարգերը — վարդապետը, կրօնաւորը,
վիճակաւորը, ժողովրդականը, զօրականը, իշխանը,
դատաւորը — նա վաճառականներ — չէ հիշում և չէ կշտամբում
նրանց պակասությունները:

Բաբերմամբ այդ Պատմութիւնը չէր կարող գրված լինել 9-րդ
դարում, այլ, անշուշտ, շատ առաջ:

Նախ տեսնենք, թե Հայոց Պատմութեան մեջ կան արդյո՞ք աշխարհի փաստեր կամ խոսքեր, որոնք չկարողանային դուրսբերուիլ ունենալ կամ ասվել 5-րդ դարում Ռազմատունյաց վերաբերմամբ։

1. Բազբրատունիք կարող էին տոհմական պատմիչ ունենալ 5-րդ դարում: Չեմ կարծում, որ այս հարցին բացասական պատասխան տրվի: Մամիկոնյանները 5-րդ դարում երկու պատմիչ ունեցան (չխոսելով Փավստոսի մասին). ինչու չպետք է մեկն ունենային և Բազբրատունիք, որոնք թե հղորությամբ և թե պիրքով բարձր էին կանգնած Մամիկոնյաններից: Իսկ տոհմական պատմիչը, ինչպես ցույց են տալիս օրինակները, պետք է աշխատե՛ր բարձրացնել տոհմի պատիվը, ցայտուն դուրս բերել նրա արիության գործերը, նույնիսկ մեղանչելով պատմական ճշմարտության դեմ: Խորենացին էլ, իբրև Բազբրատունյաց տոհմի 5-րդ տու՛թյան դեմ: Խորենացին էլ, իբրև Բազբրատունյաց տոհմի 5-րդ դարի պատմիչ, գնացել է նույն շավղով, բայց շատ ավելի չափավոր է, քան մյուս տոհմական պատմիչները և շատ ավելի լայն է նայել իր աշխատանքի վրա՝ Բազբրատունյաց տոհմի պատմու՛թյունն ընդարձակելով, Հայոց Պատմություն դարձնելով, բավա՛կան ընդարձակ տեղ տալով նաև մյուս նախարարական տներին ու նրանց գործունեությանը:

2. Խորհնացիին Բազրատունիներին կոչում է Արշակունյաց թագավորների թագազիր և ասպետ: Սա արդարանում է Սեբեոսի թագավորների թագազիր և ասպետ: Սա արդարանում է Սեբեոսի վկայությամբ, թե Բազարատ Փառազյանը հայրենի թագավոր պատվեց առաջին Արշակունի թագավորին և սրանից կոչվեց «ասպետ Հայաստանի երկրին»: Ազաթանգեղոսը Բազրատունի բառի փոխարեն գործ է ածում «թագազիր ասպետ» մակերիները:

Այս կոչումն արդարանում է նաև պաշտոնական գահնամա-
կով, որի մեջ Բագրատունի բառի փոխարին գործ էածված «աս-
պետն»։ Դիտելու է, որ թագադիր և ասպետ մակդիրները բնական
ու հասկանալի են հիմնգեորդ դարի պատմություն մեջ, երբ Ար-
շակունի թագավորներ զեռ գոյություն ունեին կամ գոնե նրանց
հիշատակը զեռ թարմ էր, ուրեմն թագադրություն ֆունկցիան էլ
զեռ գոյություն ունեւր կամ հիշվում էր. բայց այս մակդիրներն
իրանց նշանակությունը կորցրել էին Զորդ դարում, երբ Արշա-
կունիները, ինչպես և նրանց թագադիրները, վազուց դուրս էին

իջևե պատմության էջերից: (Հովհաննես կաթողիկոսն այս մակ-
դիրներից ոչ մեկը չէ գործածում Բագրատունյաց համար և ընդ-
հանրապես «ասպետ» մակդիրը 712 թվականից հետո գործ չէ
ածվում Բագրատունի իշխանների համար, այնինչ վաղագույն
շրջաններում ընդհանուր գործածություն ունեւ: (Տես Ալեքեյան—
Հայ Բագրատունիներու տոհմաճառը): Հենց այս «ասպետ» բառի
հաճախակի գործածությունը Խորենացու Պատմության մեջ նշան
է, որ այս Պատմությունը չէր կարող գրված լինել 9-րդ դարում:
Եւ, որ այս Պատմությունը չէր կարող գրված լինել 10-րդ դարում:

3. Խորենացիին Բագրատունիներին կոչում է «ազգ անա-
կան», «մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս»: Այս որոշումները
կան, «մեծ նախարարութիւն են արդյոք Բագրատունիներին 5-րդ դարում: Ան-
հարմարում են արդյոք Բագրատունիներին 5-րդ դարի առաջին կեսին սահ-
տարակույս: Գահնամակում, որով 5-րդ դարի առաջին կեսին սահ-
մանվում էին նախարարական բարձերը (հին բարձերի վերահա-
տատութեամբ), Սյունյաց գահից հետո երկրորդ տեղը հատկաց-
ված է Աստուխին, այսինքն Բագրատունյաց տոհմի իշխանին:
Վաճ Է Աստուխին, այսինքն Բագրատունյաց տոհմի իշխանին:
Ազգաթանգեղոսի Պատմութեան մէջ թագադիր ասպետները նա-
խարարների շարքերում երկու անգամ զետեղվում են չորս ըզնշխ-
ներից և Մարզպետական տնից հետո, մյուս բոլոր նախարարնե-
րից առաջ: Երբ վահան Մամիկոնյանը և ուրիշ մի քանի նա-
խարարներ որոշեցին ապստամբել Պարսից թագավորի դեմ՝ Հա-
յաստանի մարզպետութունը հանձնեցին Սահակ ասպետին, իբրեւ
աստիճանով ու պատվով ավագագուշին: Գալով Բագրատունիների
ժողովման հնութեան՝ ոչ միայն Խորենացիին, այլև Սեբեոսը նրանց
ժողովմը հասցնում են մինչև Հայկազյան իշխանների ամենահին
շրջանը:

2րջանը:
4. Խորենացին Բագրատունիներին տալիս է հրեական ծա-
գուում: Կարճիկ էր այդ բանը գրվել 5-րդ դարում: Թե ինչից
գրեցված Խորենացին հրեական ծագում է վերագրում Բագրատու-
նիներին, մինչդեռ իրեն հայտնի էր մի այլ ավանդություն, թե
նրանք ծագում են Հայկից (Ա., 22)՝ այս հարցով չեմ ուզում
զբաղվել: Դրված հարցին պատասխանելու համար պետք է նկա-
տել, որ Բագրատունիներին հրեական ծագում վերագրելիս է եղել
Մար-Աբասյան աղբյուրը, որին համեմատ է, բառազննական հի-
մունքով, և ինքը պատմագիրը (Ա., 22): Դարձյալ՝ Պատմության
մեջ մի քանի անգամ հիշատակվում է, թե Բագրատունիներն
Արշակունի առաջին հայ թագավորներից չարչարանքների և

ուայցիլ և թագավորի դայակ ու գործակից Սմբատին հիշատակել ու նրա գործերը պատմել, որից և օգտվել է Խորենացին:

7. Մի ոմն Տրդատ Բագրատունի, Սմբատի թոռը նրա աղջկանից, ամուսնացած է Տիրան թագավորի աղջկա հետ, իր տղեղության պատճառով արհամարհվում է կնոջից, ծեծում է նրան, մագերից քարշ տալով՝ սենյակից դուրս է գցում: Թագավորի երկյուղից՝ ապստամբում է նրանից, ապավինում է Սյունիք: Այստեղ մի անգամ ընթերքի ժամանակ սիրահարվում է մի գեղեցիկ գուսանին՝ Նազինիկին, և հենց սեղանի վրա հափշտակում է այդ աղջկան, տան տիրոջ և այլ բազմականների հետ կովեթով՝ առեանդում է աղջկանն ու փախչում (Բ., 63):

8. Սմբատ ասպետը, Բագրատի հայրը, Տրդատի համար էին է բերում Աշխադարի դուստր Աշխենին (Բ., 83):

9. Այս Սմբատի որդին Բագրատը հանդիսանում է մեկը չորս հայ գորավարներից, որոնց նշանակեց Տրդատը (Բ., 85), նույն պաշտոնում նա հաստատվում է Տրդատի մահից հետո, Խոսրով Փոքրի ժամանակ (Գ., 6), մասնակցում է պատերազմին հյուսիսականների ասպատակի դեմ, Վահան Ամատունու հետ միասին. վերջինս սպանում է ասպատակի պարագլուխ հսկային, և Սմբատն աննախաձեռնար թագավորին ղեկուցանում է Վահան Ամատունու քաջության մասին (Գ., 9):

10. Այս Բագրատի որդին, Սմբատ ասպետը, իբրև մանկական գնդի առաջնորդ-սպարապետ, մասնակցում է Զիրավի մեծ ճակատամարտին. կովի մեջ մեծ քաջություններ են գործում Սպանդարատ Կամսարականը և Մուշեղ Մամիկոնյանը: Հույն-հայկական զորքը հաղթում է, Մեհրուժանը փախչում է. Սմբատ ասպետը նրան հասնելով, հետը եղողներին կոտորում է, Մեհրուժանին ձերբակալելով՝ բերում «պսակում է» երկաթի շիկացած շամփուրով և այսպես սպանում (Գ., 97):

11. Սահակ ասպետը, Վաղարշակի աները, Հուենաց բաժնում կարված ունենալով, որոշում է մնալ Հուենաց բաժնում՝ Արշակ թագավորի մոտ: Բայց ինչ-որ ընտանեկան քսությունների պատճառով չարչարվում է Արշակից, ուստի փախչում է Պարսից բաժինը՝ Խոսրովի մոտ, նշանակվում է զորքի սպարապետ, ճնշում է Վանանդացոց ապստամբությունը և օգնում է երեք նախարար-

ների, որոնք Արշակի գանձերը հափշտակելով՝ փախչում էին Խոսրովի մոտ (Գ., 43—45):

12. Վուստ թագավորը կամենալով Հայոց նախարարների հետ համաձայնություն կայացնել՝ Սմբատ ասպետի միջոցով հաշտության առաջարկություն է անում. Սահակ կաթողիկոսը միջամտում է այս գործին, նախարարներին գումարելով՝ համաձայնություն պայմաններ է մշակում նրանց հետ և Սմբատ ասպետին ու Վարդան ստրատելատին ուղարկում է Պարսից թագավորի մոտ՝ բանակցություն: Հաշտությունը կնքվում է, որի հիման վրա և Հայոց թագավոր է նշանակվում Արտաշիր Վերջինը (Գ., 58):

Ահա, կարծեմ, այն բոլորը, ինչ որ Խորենացին գրել է Բագրատունյաց տոհմի և Բագրատունի անհատների մասին: Այս համառոտ քաղվածքը հարկավոր էր անել, փաստերով ցույց տալու համար, թե որքան անհիմն են բանասերների վերացական կերպով արտահայտած կարծիքները պատմության ոգու նկատմամբ, որից դուշակում են նրա 9-րդ դարի գործ լինելը: Բագրատունյաց տոհմի և Բագրատունի անձերի նկարագրության մեջ, որքան երևում է Խորենացու Պատմությունից՝ չկա ամենափոքր հետք՝ «տրամադրություն ստեղծելու ի նպաստ նախարարական Հայաստանի միություն և Բագրատունյաց թագավորության հաստատման», չկա ոչ մի արձագանք կամ արտահայտություն այն հիրավի «մեծ աղբեցություն, որ իններորդ-տասերորդ դարերում Բագրատունի իշխաններն ունեին և իշխան էին բովանդակ Հայաստան աշխարհի». չկա ոչ մի նշան կամ արտահայտություն հեղինակի «բարձր տրամադրություն և քաղաքական մոտալուստ ազատության ակնկալման»: Տրամադորեն հակառակն ենք տեսնում իրապես. հեղինակը հոռետես է, սգով համակված, հուսահատ, և քաղաքական ազատությունը համարում է հայի համար միանգամայն չքացած: Վկա են Ոլբի մեջ նկարագրված Հայաստանի սգալի՝ անհուսալի վիճակը և դառն գուշակություններն ապագայի համար: Վկա են պատմագրի սրտառուչ խոսքերը. «Ինձ այսօրիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս ընկիւ եւ իմոյ արեան առուք եւ հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ յայնժամ զալ փրկչին եւ զիս գնել, եւ առնորօք յաշխարհ զմուտն իմ լինել եւ նոցա տէրութեամբն խրախճանալ, եւ յարդեացս ալբիլ վտանգիցս: Այլ վաղ ուրեմն փա-

բարություններից ավագ և հզոր, գուշակելու, թե նրանք մի ժամանակ դարձյալ թագավորական պատվի պիտի հասնեն, ինչպես եղել են իրենց ծագումով: Ընդհակառակը, նա խորհուրդ է տալիս իր մեկենասին՝ չհավատալ մի քանի անհավաստի մարդկանց հիմար խոսքերին, որպես թե Բագրատունիք ծագում են Հայկից, ոչ այն պատճառով, որ Խորենացին արհամարհում էր այդպիսի ծագումը, այլ որովհետև ոչ մի ապացույց և հավանականություն հետք չկա այդ բանի համար (Ա., 28): Այսպես չէր ասի Խորենացին, եթե ծանոթ լիներ Բագրատունյաց ծագման և ճյուղագրություն մասին Սեբեոսի ավանդածին: Պարզ է, որ 5-րդ դարում Բագրատունյաց մասին գոյություն է ունեցել երկու կարծիք. մեկը հոգուտ նրանց հայկական ծագման, որ դեռ աղոտ ու անփաստ «ասեկոսե» է եղել, որ այնուհետև երկու հարյուր տարվա ընթացքում ձև ու կերպարանք է առել, պատմական բնույթ ստացել, ինչպես գտնում ենք Սեբեոսի մոտ: Մյուսը եղել է հոգուտ նրանց հրեական ծագման, որ հիմնված է եղել Մար-Արապյան աղբյուրի վրա («ի սմանէ ասէ լինել պատմագիրն զագղն Բաղրատունեաց») (Ա., 22), որ Խորենացին ընդունել է իբրև ստույգ, որ, նրա կարծիքով, ապացուցվում էր նաև հատուկ անունների ստուգաբանությունը (Սմբատ՝ Շամբատից, Աշոտ՝ Ասուդից և այլն): Բայց այս բավական չէ, որ Խորենացին չէ օգտվել իր սրամաղբություն տակ եղած նյութերից (9-րդ դարի վաթսուհակաթվականներին), Բագրատունիներին փառավորելու, նրանց թագավորելու մտքին ժողովուրդն ընտելացնելու համար: Նրա հուսահատ հոգին, հոռետեսությունը, ապագայի հարագույն օրերի գուշակությունը, արդյան վտանգները, նրա հառադույնը՝ «վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն թե արդեօք եւ վիճակ»—սրանք ոչ մի կերպ չեն կարող հարմարվել այդ ժամանակի (9-րդ դարի վաթսուհակաթվականներին) Հայաստանի բարեկեցիկ վիճակին, Բագրատունիների հզորության և նրանց մոտալուտ թագավորություն ակնկալության: Պայծառ իրականությունը և պատմագրի մոռյալ սրամաղբությունը հակասում են միմյանց:

Բոլոր վերոգրյալները նկատի առնելով՝ ես գալիս եմ բու-
լրովի՛ն հակառակ եզրակացության.—եթե Բագրատունյաց մա-
սին Խորենացու գրածներից կամենանք որևէ եզրակացություն

հանել նրա Պատմության գրության ժամանակի վերաբերյալ՝
այդ եզրակացությունը կլինի այն, թե Պատմությունը չի կարող
գրված լինել 9-րդ դարի երկրորդ կեսին, այլ շատ առաջ: Պատ-
մագիրը ծանոթ է այն գրության, որ տիրում էր Հայաստանում
9-րդ դարի վաթսուհակա՜ն թվականներին, չգիտեմ, որ Բագրա-
տունիների թագավորելու հարցը օրվա հարց է. ծանոթ է Բագ-
րատունյաց մասին Սեբեոսի գրածին:

Ակադ. Մանանդյանի հաջորդ թեղիսն այս է. «Խորհնացու
Պատմութեան ինքնբարդ դաբի գործ լինելը ենթադրվել է նաև
նախորդ հետազոտություններում», և հիշում է այն գիտնական-
ներին, որոնք այդ կարծիքը հայտնել են — Լա-Կրոզը, Նալա-
թյանցը, Ագոնցը, Մառը, իսկ վերջերս նաև Ակինյանը և Մարկ-
վարը (էջ 123)։

վարտը (էջ 123):

Հա-կրողի և Աղոնցի կարծիքներն ու ապացույցները վերը բերի և ցույց տվի, որ նրանք անհիմն են և ոչ մի կերպ չեն կարող ապացույց լինել Հայոց Պատմութեան՝ 9-րդ դարի գործ կարող ապացույց լինել ենթադրություններն ինքը ահադ-լինելուն: Ակինյանի բոլոր ենթադրություններն ինքը ահադ-Մանանդյանն էլ հերքում է իրավացի կերպով. ուստի, հենց ահադ-Մանանդյանի տեսակետից էլ արժեքից զուրկ է նրա «ուշագրավ» եզրակացությունը Պատմութեան ուշ ժամանակի գործ լինելու մասին, որ բոլորում է սխալ ենթադրություններից: Խալաթյանից կարծիքը, որ հիմնված էր ինքնաշարժ բանագրություն լրացված Պատմութեան, որով և որոշվում էր Հայոց Պատմու-թեան գրություն ժամանակին 8-րդ դարի վերջերում կամ 9-րդի սկզբում՝ նույն ահադ. Մանանդյանը չէ ընդունում, ասելով, որ «Խալաթյանի թե՛ բռնաձիգ համեմատությունները և թե՛ նրա ընդհանուր եզրակացությունը վիճելի են և կասկածելի» (էջ 124—5):

(էջ 124—5):
Մարկվարտի կարծիքը, որով Մար-Աբասի և Խորենացու
ժամանակը որոշվում է 9-րդ դարում՝ հենց ահադ. Մանանգյանի
վկայությամբ՝ «բավականաչափ հիմնավորված չէ» (էջ 127): Բայց
և այնպես նա մեջ է բերում Մարկվարտի եզրակացությունները,
և այնպես նա մեջ է բերում Մարկվարտի եզրակացությունները,
և այնպես նա մեջ է բերում Մարկվարտի եզրակացությունները,
և այնպես նա մեջ է բերում Մարկվարտի եզրակացությունները,
և այնպես նա մեջ է բերում Մարկվարտի եզրակացությունները,

թյունը, որ Արշակ արքան Փառնավազյան Բագարատին նշանակել է «իշխան եւ հրամանատար ամենայն թագաւորութեան», հարմարում է միայն «իշխանաց իշխան» Բագարատին. 4. Խորենացին... Բագրատունիների նախահայր է համարում Շամբատ-Սմբատին՝ «ղկոչեցեալն Բագարատ»՝ դրա պատճառն այն է, որ նա համակրում է Սմբատ Խոստովանողին և ասում Տարոնի հավատուրաց Բագարատին. 5. Խորենացու այս Շամբատ-Բագարատը նախատիպն է ուրեմն Սմբատ սպարապետի, որը 856 թվին վախճանվել էր Սամաբայում. 6. Խորենացին իր Պատմությունը գրել է այս Սմբատի որդւ՝ իշխանաց իշխան Աշոտի արքունիքում՝ որպէս մի հայկի հայկական պետութեան, որ նոր ստեղծվելու էր: (Համառոտելով բերում եմ ակադ. Մանանդյանի գրքից, էջ 127—8):

Մարկվարտի այս կարծիքները ակադ. Մանանդյանը — որքան և տարօրինակ է սպասել — շատ բարձր է գնահատում: «Մարկվարտը, — ասում է նա, — ինչպէս տեսնում ենք, Խորենացու ժամանակը որոշել է ճշգրիտ կերպով և իր կարծիքը հիմնավորել նաև Խորենացու Շամբատ-Բագարատի վերաբերյալ ուշադրով ու կարևոր իր դիտողութուններով: Նրա սրամիտ այդ եզրակացութիւնները, որ նոր լույս են սփռում Խորենացու հարցի վրա... կարևորագույն նեցուկներն են ըստ իս Խորենացու առեղծվածի լուծմանը» (էջ 128):

Ես տրամադծորեն հակառակ կարծիքի եմ Մարկվարտի վերոհիշյալ ենթադրութիւնների գնահատման հարցում: Ես ոչ միայն այդ ենթադրութիւնները չեմ գտնում «ուշադրով, կարևոր, ճշգրիտ, Խորենացու հարցի վրա նոր լույս սփռող, կարևորագույն նեցուկ Խորենացու առեղծվածը լուծելու», այլ ընդհակառակն՝ անհիմն, կամայական, բնագրերն աղավաղող, Խորենացու հարցն ավելի խճճող, որևէ նշանակութիւնից զուրկ, քմահաճ կարծիքներ: Իմ այս խիստ որակումներն առանց հիմքի չեն: Արդարև, Մարկվարտի առաջին երեք կարծիքները, որոնք կապ ունին Մար-Աբասի հետ՝ միանգամայն հակապատմական են և արժեքազուրկ, քանի որ այդ Մար-Աբասը Սերեոսի առաջին գլուխներում հիշված Մար-Աբաս Մծուրնացին է, իսկ այդ երկու գլուխները Սերեոսի գրածներն են 7-րդ դարի երկրորդ կեսի սկզբներին, ինչպէս անկասկածելի կերպով ապացուցված է (տես իմ

«Սերեոսի պատմութիւնը և Մովսէս Խորենացին» աշխատութիւնը): Նր և Ադոնցի իմ՝ այդ աշխատութեան մանրամասն քննութիւնը): Զէր կարող ուրեմն 9-րդ դարում ապրող իշխանաց իշխան Բագարատն իբրև կաղապար ծառայել 7-րդ դարում գրող Սերեոսի և նրա՝ Մար-Աբասի Փառնավազյան Բագարատին:

Զորքորդ կեսը մի անհիմն ու ծանր մեղադրանք է Խորենացուն, իբր թե սա, ատելով հավատուրաց Բագարատին և համակրելով Սմբատ Խոստովանողին՝ խարդախել է պատմութիւնը և Բագրատունյաց նախահայր է կոչել Շամբատ-Սմբատին, փոխանակ Բագարատին, ինչպէս ունի Սերեոսյան Մար-Աբասը: Խանակ Բագարատին, ինչպէս ունի Սերեոսյան Մար-Աբասը: Եթե այստեղ մի խարդախում կա՝ այդ կատարել է ոչ թէ Խորենացին պատմութեան վերաբերմամբ, այլ ինքը՝ Մարկվարտը նացին պատմութեան վերաբերմամբ: Բագրատունյաց նախահայրը Խորենացու վերաբերմամբ: Բագրատունյաց նախահայրը Խորենացու մոտ հիշված է հինգ անգամ, որոնցից երկու անգամ Շամբատ-Բագարատ զույգ անունով, և երեք անգամ միայն Բագարատ անունով: Ուրեմն Խորենացու մոտ Բագրատունյաց նախահայրը միշտ կրում է Բագարատ անունը, երկու անգամ Շամբատ անվան հավելւածով: Եթե Մարկվարտի տեսակետից դատեալ լինինք, պետք է ասեինք, թե Խորենացին համակրում է հավատուրաց Բագարատին, և ասում է Սմբատ Խոստովանողին: Մակայն Խորենացու Պատմութեան ուշադիր ընթերցողը Շամբատ-Բագարատ զուգադրութիւնից և «ղկոչեցեալն Բագարատ» խոսքի դարձվածքից կհաներ բոլորովին այլ և վերին աստիճանի հետաքրքրական եզրակացութիւն. այդ այն է, որ Խորենացին Բագարատ բառն ըմբռնում է ոչ թե իբրև մի անձի հատուկ անուն, այլ իբրև մակդիր, որ կցվում է հատուկ անվան և որ գործ է ածվում նաև առանձնաբար բուն հատուկ անվանը փոխարինելով, օրինակ՝ ինչպէս մենք սովոր ենք ասել Ներսէս-Շնորհալի լով, օրինակ՝ ինչպէս մենք սովոր ենք ասել Ներսէսի վերաբերմամբ: Այս բացակամ լով Շնորհալի՝ նույն Ներսէսի վերաբերմամբ: Այս բացատրութիւնը լիովին արդարանում է «բագարատ» բառի ստուգա-

1 «Ան զօրաւորի եւ իմաստնոյ որ ի Հրէիցն» Շամբատայ Բագարատ»: 2. «Այս Բագարատ նախածեալն ընծայ մատոյց զինքն Վաղարատ» (Ա., 3): 3. «Եւ զղկոչեցեալն Բագարատ որ ի Հրէիցն» (Ա., 7): 4. «Եւ զաղբալ որ ի Հրէիցն Շամբատայ Բագարատ որ եւ Թագաւորի եւ ասուելու» (Ա., 8): 5. «Եւ սմանէ նեղեալ որդիք Բագարատայ վասն զկուսապաշտելոյ» (Ա., 9):

բանությամբ, որ հին պարսկերեն լեզվով նշանակում է աստվածանվեր (baga-rata), կամ աստվածատուր (baga—data) (Հյուբշման—Հայերեն քերականություն, էջ 31): Խորենացուն, ինչպես երևում է, հայտնի չէ «բաղարատ» բառի պահպանական ծագումը և այս նշանակությունը, որովհետև նա «բաղարատ» բառը ծագեցնում է եբրայական բաղադիր (?) անունից: Այս դեպքում ավելի ևս նշանակալից է դառնում «բաղարատ» բառի իբրև մակդիրի գործածությունը, իբրև վաղմի ժամանակներից ավանդաբար մինչև Խորենացին հասած ու քարացած ձև: Որ բաղարատն իրոք մակդիր է, տոհմական անուն և ոչ թե մի անձի հատուկ անուն՝ այդ երևում է նաև Բագրատունի անունից: Ունի վերջավորություն թյամբ տոհմերի անուններ մեր հին լեզվում կազմվում են ընդհանրապես մակդիրներից, ինչպես՝ Պահլավունի, Արշակունի (արշակ բառի նախնական՝ թագավոր նշանակությունից), Սյունի (=Սիւնի), Արծրունի և այլն, այն ինչ անձերի հատուկ անուններից տոհմերի անուններ կազմվում են սովորաբար յան մասնիկով, օր. Կարեն, Սուրեն, Մամիկոն, Մանավազ, Ռուբեն և այլ հատուկ անուններից՝ Կարենյան, Սուրենյան, Մամիկոնյան, Մանավազյան, Ռուբինյան և այլ տոհմանունները:

Մարկվարտի հինգերորդ ենթադրությունը տապալվում է ինքնին, երբ, ինչպես հենց նոր տեսանք, պարզվեց, որ Խորենացին Սմբատ Խոստովանողի սիրուն չէ ծագեցրել Բագրատունիներին Շամբատ-Սմբատից:

Վեցերորդ կեսն անտեղի է կրկնակի. իշխանաց իշխան Աշոտի արքունիքում գրող Խորենացին գրած պիտի լիներ այդ Աշոտի հանձնարարությունը կամ նրան պետք է նվիրեր իր Պատմությունը և ոչ թե Սահակ Բագրատունուն: Մյուս կողմից՝ արդեն տեսանք, որ Խորենացին չէր էլ երազում մի նոր հայկական թագավորություն, «որ նոր ստեղծվելու էր»: Միթե մի ազգի հին պատմությունը չէ կարելի գրել առանց այդպիսի հետին մաքի:

Ես այսքան չէի կանգ առնի Մարկվարտի հիշյալ անհիմն և՛ անարժեք ենթադրությունների վրա, եթե չլիներ ակադ. Մանանդյանի այն տարապայման գովեստը: Պետք էր ցույց տալ, որ Մարկվարտի մատակարարած «կարևորագույն նեցուկները»

ծայրե ծայր փտած են և նրանց վրա կառուցված շենքն անխուսափելիորեն ենթակա է կործանման:

Ակադ. Մանանդյանը հիշում է Ն. Մառի անունը և բերում է նրա հետևյալ կարծիքը (Թարգմանում ևմ հայերեն). «Մովսես Խորենացու հայացքը բնորոշում է ոչ թե հին հայկական թագավորության իրականությունը (реальность), այլ պատմագրի ժամանակակցությունը, որ տալիս է առաջին Արշակունի թագավորի իդեալացրած պատկերը (представление), համաձայն իր ժամանակի իդեալներին, մոտավորապես ութերորդ-իններորդ դարում Քր. հետո» (էջ 125):

Սա մի չհիմնավորված վարկած է, որ կարող է լինել ճիշտ կամ սխալ. բայց նույն իսկ ճիշտ լինելու դեպքում այդ ազգային իդեալները նույնքան կարող են հարմարվել 5-րդ դարի երկրորդ կեսին, որքան և 8—9-րդ դարերին, քանի որ բոլոր այս ժամանակաշրջանում հայերի քաղաքական դրությունը միատեսակ էր — քաղաքական ինքնուրույնությունից զրկված, օտար ազգերի լծի տակ: Դեռ ավելի հավանական է այդպիսի իդեալների կենդանությունը 5-րդ դարում, երբ ազգային-քաղաքական ինքնուրույնությունը հիշատակը դեռ վառ ու կենդանի էր Հայոց մեջ, քան 8—9-րդ դարերում, երբ նա բնականաբար աղոտացած, գուցե և հանգած էր:

Տեսնում ենք, ուրեմն, որ ակադ. Մանանդյանի երկրորդ թեզիսում հիշված գիտնականների կարծիքներից հօգուտ Հայոց Պատմության՝ 9-րդ դարի գործ լինելու ենթադրության՝ ոչ մեկը հիմնավորված չէ և այդ ենթադրությունը նա չէ ապացուցում: Եթե այդ ենթադրություններից որեւէ մեկը կամ բոլորը միասին վերցրած ապացուցեին, թե Խորենացու Պատմությունը գրված է 9-րդ դարում (այս կամ այն տասնամյակում — սա անտարբեր է), ապա հազիվ թե ակադ. Մանանդյանն աշխատանք հանձն առնե՛ր՝ երկրորդ անգամ ապացուցելու այն, որ մի անգամ արդեն ապացուցված, վերջացած է:

Ակադ. Մանանդյանի հաջորդ թեզիսն է. «Խորենացու Պատմությունը գրված է Բուդայի արշավանքից հետո» (էջ 129): Այս թեզիսը նրա կառուցվածքի առաջին սյունն է, terminus antes quem non. Բուդայի արշավանքները տեղի ունեցան 852—855 թվականներին, ուրեմն, ըստ ակադ. Մանանդյանի, Հայոց Պատմությունը գրված է 855 թվից հետո: Սա վաղագույն ժամանակն

է, որից առաջ չէր կարող գրված լինել Պատմությունը: Հետնագույն ժամանակը, որից հետո չէր կարող Պատմությունը գրվել՝ ահադ, Մանանդյանը որոշում է Ջաքարիա կաթողիկոսի մահվան տարին, 875 թվականը (թե ինչու՝ հետո կտեսնենք): Այնպես որ Խորենացու Պատմությունը, ըստ ահադ, Մանանդյանի, գրված պիտի լիներ 855—875 թվականների միջև, Ջաքարիա կաթողիկոսի ժամանակ (855—876), «եալանորեն, սրա կաթողիկոսութեան սկզբնական տարիներում» (էջ 157): Այս վերջին որոշումն ահադ, Մանանդյանն ընդունել է անշուշտ այն պատճառով, որ Հայաստանի արհամարից վիճակի նկարագրությունը Ողբի մեջ շատ հարմար է գալիս այն իրոք արհամարից վիճակին, որի մեջ գտնվում էր Հայաստանը Բուդայի արշավանքների ժամանակ և նրանցից անմիջապես հետո, հիսուսական թվականների երկրորդ կեսին: Բայց այս որոշմամբ՝ ահադ, Մանանդյանն ընկնում է հակասության մեջ: Նա ինքն ասում է, թե Ողբի մեջ հիշված «աստանմունք և դրըդմունք» վերաբերում են 9-րդ դարի երկրորդ կեսում, Բուդայի արշավանքից հետո, տեղի ունեցած շարժերին, և պատմագիրներից վկայություն է բերում Դվինի աղետալի երկրաշարժի մասին (էջ 134—136): Իսկ այս երկրաշարժը, ինչպես ցույց են տալիս այդ պատմագիրները, տեղի է ունեցել 863 թվին (869-ին՝ ըստ Մ. Կադանկատպու): Դարձյալ՝ Խորենացու դավանաբանական վեճերից խուսափելը ահադ, Մանանդյանը բացատրում է նրանով, որ Պատմությունը գրվելու ժամանակ բանակցություններ էին վարվում Հունաց և Հայոց եկեղեցիների միջև միություն ստեղծելու նպատակով (էջ 149): Իսկ այս բանակցությունները տեղի ունեցան 864—867 թվականներին: Ուրեմն, նույն ահադ, Մանանդյանի այս երկու ցուցումների համաձայն, Պատմությունը պետք է գրված լիներ 863-ից հետո, 864—870 թվականների միջև: Բայց այս թվականը ահադ, Մանանդյանը դիտմամբ դանց է անում բերել, որովհետև այն ժամանակին բնավ չեն հարմարում Ողբի մեջ նկարագրված արհավիրքները:

Այժմ դառնանք այն վաստերին, որոնցով ահադ, Մանանդյանը հիմնավորում է իր թեզը:

Նախ նա Ողբից բերում է հետևյալ հատվածը. «Ի գերութիւն վարեցաւ Սեդեկիա, եւ Զորաբաբել ոչ ուրեք է, որ նորոգէ գպետութիւնն: Անտիոքոս բռնադատէ թողաւ զօրէնս հայրենիս».

եւ Մատաթիա ոչ ընդդիմակայէ. պատերազմ զմեզ շուրջ պաշարէ եւ Մակաբէ ոչ փրկէ», և այլն:

Նախ նկատենք, որ այս նկարագրության ոչ մի խոսքը չէր կարող գրված լինել 864—870 թվականներին, երբ ոչ գերի վաճառներ կային (բոլորը վերադարձել էին 862-ին), ոչ բռնադատություն կար կրոնի ու ռաւանալու (բոլորն ազատ համարձակ պաշտում էին իրենց կրոնը), և ոչ պատերազմ կար (խաղաղ անդորրություն էր վայելում երկիրը), բայց կար Զորաբաբել (իշխանաց իշխան Սշուտը), որի թագադրության՝ «պետությունը նորոգելու» մասին բանակցություններ էին վարվում, որոնք և պատկանում են հաջորդությամբ: Իսկ այս 864—870 թվականները, հենց ահադ, Մանանդյանի ցուցման հիման վրա, պետք է ընդունենք իբրև Պատմության գրության ժամանակ:

Բայց ընդունենք հիսուսական թվականների երկրորդ կեսը՝ Ջաքարիայի կաթողիկոսության սկզբնական տարիները: Նաև այս դեպքում Ողբի վերոհիշյալ խոսքերը չէ կարելի վերաբերել այն ժամանակամիջոցին:

Ձե կարելի վերաբերել ամենից առաջ Ողբի բնագրի հենց արտաքին կառուցվածքի՝ շարադրության ընթացքի հիման վրա: Հիշյալ հատվածը դուրս է գլլված մի պարբերությունից, որից առաջ և որից հետո խոսքը անտարակույս վերաբերում է 5-րդ դարի դեպքերին: Այդ հատվածը պարունակող պարբերությունից առաջ Խորենացին ասում է. «Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել, եւ յԱբրահամեանն հանգչել ի գոգս, եւ զհրեշտակացն տեսանել պարաւորութիւնս: Բայց անհոգող դու աշուրությամբ, եւ եղկելիք մեք, որ զրկեալք եմք (կամ զրկեցաք) ի հայրենի վերակացութեանէն»: Պարզ է, որ այս խոսքերը վերաբերում են ս. Սահակի ու Մեսրոպի մահվան և եկեղեցու այրի մնալուն, ուրեմն՝ 5-րդ դարին: Իսկ հատվածից հետո պատմագիրն ասում է. «Աւանդ զրկանացս, աւանդ թշուառական պատմութեանս... զիմրդ զմիտս իմ եւ զկողուս պնդեցից եւ հատուցից զբանս հարցն փոխանակ ծննդեանն եւ անդեանն: Քանզի ծնած զիս իւրեանց վարդապետութեամբն», և այլն. ուրեմն դարձյալ ս. Սահակի և Մեսրոպի մասին, դարձյալ 5-րդ դարը:

Հնարավոր է եւս թաղրել, որ ոչ միայն ճաշակավոր Խորենացին, այլև թեկուզ մի համբալ գրող, նկարագրեր 5-րդ դարի

դեպքեր, հետո հանկարծ, առանց որևէ առիթի, թռչեր Զ-րդ դարը, մի քանի խոսքով այդ դարի աղետները նկարագրեր և հետո էլի թռչեր 5-րդ դարը՝ նախընթաց խոսքը շարունակելու։ Սա անկարելի բան է, եթե այդ հատվածն իրոք վերաբերեր Զ-րդ դարին՝ ապա պետք կլիներ նրան ընդմիջարկություն համարել, այն աստիճան անտեղի կլիներ 5-րդ դարի անցքերի նկարագրություն մեջ։

Այդ հատվածը չի կարելի վերաբերել Զ-րդ դարի հիսուսական թվականներին նաև բովանդակության տեսակետից։ Հատվածի մեջ, ինչպես տեսանք, հիշված են երեք պատմական անձնավորություններ հրեաների պատմությունից — Սեդեկիա թագավոր, Մատթիա քահանա և Մակարե զորավար, որոնք հայտնի են իրենց գործունեությամբ։ Բնականաբար այս անձերին ու նրանց գործերին պետք է զուգադրվեն անձեր ու գործողություններ Հայոց պատմությունից և համեմատվեն հրեաների հետ։ Բայց այսպիսի զուգադրություն և համեմատություն մենք չենք տեսնում ահադ. Մանանդյանի բացատրության մեջ։ Նա հիշում է, որ Բուդայի արշավանքների ժամանակ... կալանավորվել ու Սամարա էին ուղարկվել Հայաստանի «գլխավոր»-ներն իրենց ընտանիքներով և բանտարկվել էին նաև «իշխանաց իշխան Բագարատը և Սմբատ սպարապետը»։ Բայց մի կողմ թողնելով, որ սրանց մեջ թագավոր և քահանա չկա, որ սրանց «ընդգլխավորություն», երկրորդ «փրկելու» մասին ակնարկություն չկա՝ հիշեցնում եմ, որ Ողբի հեղինակն առանձնապես թվում է. «Կապումն գլխաւորաց եւ բանտք յայտնեաց, յօտարութիւն վտարումն ազատաց եւ անթիւ նեղութիւնք ռամկաց», որ միանգամայն պատշաճում է ահադ. Մանանդյանի նշանակած հալածանքներին ու բանտարկության. այնպես որ Սեդեկիա-Մատթիա-Մակարեն բոլորովին բաց են մնում ահադ. Մանանդյանի բացատրության մեջ և իրենց զուգահեռը չեն գտնում Հայոց պատմություն մեջ։

Բոլորովին այլ կերպարանք կստանա այս հատվածը՝ եթե նրան վերաբերենք հիմնգրքի դարին։ Այս դեպքում հատվածում հիշված անձերն ու անցքերը իրենց կատարյալ զուգահեռները կգտնեն Հայոց պատմության մեջ, 5-րդ դարի 30—70-ական թվականներին։ Այսպես.

1. Սեդեկիա, Հրեաստանի թագավորը, դերի բռնվեց Նաբու-գոդոնոսորից և մեռավ Բաբելոնում բանտի մեջ ու նրանով վերջացավ Հրեաստանի թագավորությունը։ Սրա հետ պատմագիրը համեմատում է Հայոց Պատմության մեջ Արտաշիռ թագավորին, որ Վռամի հրամանով կանչվեց Պարսկաստան, այնտեղ արգելվեց ու մեռավ. նրանով վերջացավ Արշակունյաց թագավորությունը։

Բայց հրեաները բախտավոր էին համեմատաբար, որ Սեդեկիայից հետո ասպարեզ եկավ Զորաբաբելը, որ հրեական գերությունը Բաբելոնից հետ բերեց, տաճարը վերաշինեց և պետությունը նորոգեց. այնինչ հայերի մեջ այսպիսի մի Զորաբաբել դուրս չեկավ, «որ նորոգէր զպետութիւնն»։ (Եվ չնայելով սրան՝ Մարկվարտը կարծում էր, թե Խորենացին ապրել ու գրել է իշխանաց իշխան Աշոտի արքունիքում, իսկ ահադ. Մանանդյանը կարծում է, թե Խորենացին ունի մի հատուկ նպատակ՝ տրամադրություն ստեղծելու ի նպաստ Բագրատունյաց թագավորության հաստատման)։

2. Մատթիա։ Սեդեկիայի Անտիոքոս թագավորն ստիպում էր հրեաներին ուրանալ իրենց կրոնը և զոհել կուռքերին։ Նրա հրամանի դեմ դուրս եկավ Մատթիա քահանան, ընդգլխակայեց, բայց առանց աջողության. մահը վրա հասավ։ Նրա հետ պատմագիրը համեմատում է Ղևոնդ երեցին։ Պարսից Հազկերտ Բ. թագավորն ստիպում էր հայերին ուրանալ քրիստոնեությունը, երկրպագել կրակին։ Նրա հրամանի դեմ դուրս եկավ Ղևոնդ երեցը, ընդգլխակայեց, բայց նույնպես առանց հաջողության — բռնվեց ու նահատակվեց։

3. Մակարե։ Կրոնական պատերազմի ժամանակ Հուդա Մա-կարեն, ուխտապահ հրեաների գլուխն անցած՝ կռվեց Սեդեկիան իշխանության դեմ և մի ճակատամարտում ընկավ, չկարողանալով փրկել հրեաներին։ Նրա հետ պատմագիրը համեմատում է Հայոց Պատմության մեջ Վարդան Մամիկոնյանին (որ բանաստեղծներից կոչված է «Նոր Մակաբե»), որ նույնպես ուխտապահ հայերի գլուխն անցած՝ կռվեց Պարսիկների դեմ և Ավարայրի ճակատամարտում ընկավ, չկարողանալով փրկել հայերնից։ Ճակատամարտի նկարագիրը և ռազմական շարժումները, ինչպես բերված են ս. Գրքում (Ս. Մակ. Թ., 12—18), զրեթե բառացի կրկնվում են Նիդիի մոտ՝ Վարդանի վերաբերմամբ։

Կարևոր էր ցույց տալ, որ վերը բերված հատվածը, որի մեջ նշանակված են հատուկ անձեր ու գործողություններ, թե իր դիրքով շարադրության ընթացքում և թե իր բովանդակությամբ հարմարվում են 5-րդ դարի հայոց գեպքերին և ոչ թե 9-րդ դարին, ինչպես ենթադրել է ահադ. Մանանդյանը: Այնուհետև երկրորդական նշանակություն ունի Ողբի ընդհանուր և բանաստեղծական նկարագրությունը Հայաստանի աղետալի դրություն, որ կարող է հարմարվել շատ ժամանակների, և, ի միջի այլոց, միանգամայն համարվում է 5-րդ դարի վերը նշված շրջանին: «Հաւատ վաճառեալ ընդ սնտուի կենցաղոյս, հէնք եկեալ անհատք եւ յոլովից կողմանց. գերունն տանց եւ հափշտակութիւն ստացուածոց, կապունն զլիսաւորաց եւ բանտք յայտնեաց», և այլն. սրանցից ամեն մի կետ, ինչպես և շարունակություն մեջ «յօտարութիւն վտարունն ազատաց եւ անթիւ նեղութիւնք ռամկաց, առուն քաղաքաց եւ քանդունն ամրոցաց» և այլն, լիովին արդարանում են այն բազմաթիվ տեղեկություններով, որ հաղորդում են Եղիշեն ու Փարպեցին: Օրինակներն այնքան շատ են և հայտնի, որ ավելորդ ժամավաճառություն կլիներ մեջ բերելը:

Զիշտ է, այս ժամանակամիջոցում ոչ Եղիշեն և ոչ Փարպեցին, ոչ էլ Խորենացին իր Պատմության այլ տեղերում, չեն հիշում «դրդմունք եւ սասանութիւնք», այսինքն երկրաշարժներ: Սա, իհարկե, նրանից չէ, որ այդ ժամանակ երկրաշարժներ չեն եղել, այլ նրանից է, որ երկրաշարժները շատ սովորական երևույթներ են եղել լեռնային Հայաստանի համար ինչպես այժմ, այնպես էլ այն ժամանակ, որոնց առանձին հիշելու կարիք չեն զգացել, բայց Ողբի մեջ պատմագիրը հիշել է իբրև լրացումն աղետների նկարագրի: Նվ, բացի սրանից, երկրաշարժներ, ինչպես հիշեցինք, տեղի ունեցան 863—869 թվականներին, երբ աղետներն այլևս չկային:

Ահադ. Մանանդյանի հաջորդ թեզիսն է: «Ողբի մեջ հիշված «եռվիվ»-ը հավանորեն Ովայեցի Հովհաննես Ե. կաթողիկոսն է» (էջ 136): Չգիտեմ, ինչ կարիք ունեւ ահադ. Մանանդյանն այս թեզիսը դնելու և պաշտպանելու, քանի վոր ինքն էլ ընդունում է, թե Խորենացին իր Պատմությունը հորինելով «բարաւոնութեան» ձևով՝ վերագրում է այն Սահակ-Մեսրոպի աշակերտ համանուն

Մովսեսին (էջ 175): ուրեմն և «հովիվը» կարող էր շարունակել մնալ Սահակ կաթողիկոսը, պատմագրի ուսուցիչը, առանց Ովայեցի Հովհաննես կաթողիկոսին անհանգիստ անելու: Ովայեցի Հովհաննես Ե. (լատ Օրմանյանի՝ Դ.) կաթողիկոսի մասին այսքան գիտենք, թե նա կաթողիկոս էր ընտրված հակառակ իշխանաց իշխան Բագարատի կամքին, պարկեշտ վարքի տեր էր: Նրա մտերիմներից ոմանք նրան զրպարտում են Բագարատի մոտ, ինչ-ինչ հանցանքների մեջ մեղադրելով: Բագարատը հաճութամբ ըսում է զրպարտիչներին և հրաման է արձակում, որ ոչ ոք Հովհաննեսին կաթողիկոս չճանաչի: Հովհաննեսը քաշվում է մի վանք և այնտեղից բողոքում է Բագարատի ապօրինի հրամանի դեմ: Մյուս իշխանները դժգոհ են մնում Բագարատի վարմունքից, գումարվում է եկեղեցական ժողով. քննում են կաթողիկոսի դեմ եղած մեղադրությունները, բոլորը ճանաչվում են զրպարտություն: Նա վերադառնում ու գրավում է դարձյալ հայրապետական աթոռը, վախճանվում է 855-ին: Ահա բոլորը: Ի՞նչ նմանություն կա այս հովիվ Հովհաննեսի և Ողբի մեջ նկարագրված հովիվի—Սահակ կաթողիկոսի միջև: Ովայեցուն է վերաբերում Ողբը «վասն բառնալոյ եպիսկոպոսութեանն ի տանէ սրբոյն Գրիգորի», թե՞ Սահակ կաթողիկոսին, Լուսավորչի վերջին արուսեբնդին: Ովայեցուն է կոչում պատմագիրը «հայր իմ և քահանայապետ», որ նրան ուղարկել է արտասահման ուսումը կատարելագործելու և որի գերեզմանի վրա նա ողբ ասելով հառաչում է ողորմելի, թե՞ Սահակ կաթողիկոսին: Ո՞վ է վերջապես հովիվ հետ շարունակ հիշվող հովվակիցը, որ հովիվ բացակայության միջոցին հովվել է հոտը իբրև երկրորդ հայր, եթե ոչ Սահակ կաթողիկոսի զործակից Մեսրոպ-Մաշտոցը: Ովայեցու ժամանակ այսպիսի մի հովվակցի ոչ մի հիշատակություն չկա: Այսպիսի հարցեր անշուշտ իրեն տված կլինեն և ահադ. Մանանդյանը, առանց պատասխան գտնելու: Բայց և այնպես նա չէ գիմացել գայթակղության առաջ: Հովհաննես պատմագիր կաթողիկոսը պատմելով Ովայեցի կաթողիկոսի վերոհիշյալ գեպքը, ըստ իր սովորության մի քանի բառ փոխ է առել Խորենացու Ողբից, որ գրված է Սահակի մասին, այսինքն՝ «եկեղեցիք քրիստոնէից, որ երբեմն խրքնացեալն էր ի վարատմանէ փեսային՝ դարձեալ յինքն զփեսայն նորոգապէս պայծառանայր»: Ընդգրծ-

Վրած բառերը պատահում են Ողբի մեջ և կարող են հարմարվել ամեն մի կաթողիկոսի, որ ժամանակավորապես հեռացած է պաշտոնից: Այս երկու-երեք բառը բավական է եղել ակադ. Մանանդյանին՝ Ողբի հովվին նույնացնել Ովայեցի կաթողիկոսի հետ, որ այնքան նման է Սահակ կաթողիկոսին, ինչքան որ ամեն մի տերտեր նման է Ղևոնդ երեցին: Ահա թե ինչ է նշանակում որոնումն:

Այս առիթովով ակադ. Մանանդյանը մի ուշադրավ հայտնա-
գործություն էլ է անում: Նա դիտում է, որ 10—11-րդ դարերի
պատմիչները, որոնք խորենացուն համարում են Սահակ-Մաշ-
տոցի աշակերտ՝ առանձին պատկառանքով են հիշում նրա հռչա-
կավոր Պատմությունը և հեղինակին կոչում են բարձր գովեստ-
ներ արտահայտող մակդիրներով—մեծ քերթող, տիեզերահռչակ
վարդապետ և այլն. այնինչ Հովհաննես Պատմագիրը, որ իր
Պատմության առաջին մասը քաղում է գլխավորապես խորենա-
ցուց՝ նրա անունը միայն մի անգամ է հիշում, այն էլ առանց
մակդիրի—«Բովանդակաբար ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսէս
Խորենացու»։ Պատկառանքի ու ակնածության այս բացակայու-
թյունը խորենացու հանդեպ ակադ. Մանանդյանը բացատրում է
նրանով, որ Հովհաննես Պատմագիր կաթողիկոսը մոտ շփում է
աւենցել Բագրատունի արքունիքի հետ, լինելով ժամանակով խո-
րենացուն խիստ մոտ, ապրելով 9-րդ դարի երկրորդ կեսում՝
խորենացու ժամանակն ավելի լավ կարող էր գիտենալ, քան հա-
ջորդ հեղինակները (էջ 140—2)։ Ակադ. Մանանդյանն ուզում է
ասել, թե Հովհաննես Պատմագիրը ծանոթ լինելով խորենացու
կեղծարարության՝ դեպի նա չէ տածում այն հարգանքը, որ տա-
ծում են հաջորդ դարերի հեղինակները, որոնց հայտնի չէր այդ
կեղծիքը:

Ծիծաղելի և հիմար դերի մեջ է դնում ակադ. Մանան-
դյանը Հովհաննես Պատմագիրին: Դուռս է գալիս, որ Խորենացու
կեղծարարությունը (Սահակ-Մեսրոպի աշակերտ ձևանալը) մի
գաղտնիք է եղել, որ Հովհաննես Պատմագիրն իմացել է՝ Բագ-
րատունյաց արքունիքին մոտ ծանոթ լինելով, այնինչ 870 թվա-
կանից, երբ, ըստ ակադ. Մանանդյանի, Խորենացու Պատմու-
թյունը հրապարակ եկավ, ամեն մի կարգացող այդ «գաղտնիքը»
պիտի գիտենար, ամենքին հայտնի պիտի լիներ, թե այն Հայոց

Պատմությունը, որի մեջ հեղինակն իրեն ցույց է տալիս իբրև 5-րդ դարում ապրած ու գրած՝ Սահակ-Մեսրոպի աշակերտ, հենց այն Մովսես վարդապետն է, Խորյան գյուղից, որի հետ իրենք նստել վեր են կացել, որի քարոզները լսել են, որի եղբորը, եղբորորդուն... ամենքը ճանաչում են: Դուրս է գալիս դարձյալ, որ Հովհաննես Պատմագիրը, ճանաչելով հանդերձ Խորենացուն կեղծաբար և նրա Պատմությունը կեղծիք՝ այնու ամենայնիվ նրանից, իբրև հավաստի աղբյուրից քաղում է գլխավորապես իր նյութը Պատմության առաջին մասում, և այս բավական չէ, հանձնարարում է այդ կեղծ Պատմությունն ընթերցողներին, — «բովանդակաբար ցուցցե քեզ Պատմութիւնն Մովսէսի Խորենաց-ւոր»:

Եւ այց բանն այնպէս չէ, ինչպէս ենթադրում է ակադ. Մանանդյանը: Հովհաննէս Պատմագիրն իր Պատմութեան սկզբում հիշում է, «որ նախքան զմեզ քաջք եւ բանաստեղծք արգոյակապք եւ զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուտ ի վերուստ արձանագրեցին» (էջ 4), որպիսի գովեստն ամենից առաջ վերաբերում է «անտուտ ի վերուստ» Հայոց պատմութեանը գրող Մովսէս Խորենացուն: Իսկ թե ինչո՞ւ Խորենացուն մի անգամ հիշելիս չէ ավելացնում գովեստի մակերբ—քերթողահայր, տիեզերահռչակ վարդապետ և այլն, այդ պարզապէս նրանից է, որ Հովհաննէս Պատմագիրն իրեն էլ համարում էր քերթող, ուրեմն ըստ արվեստի Խորենացուն ընկեր, և կաթողիկոսական աստիճանով նրանից բարձր: Ինչպէս երևում է՝ ակադ. Մանանդյանն ինքն էլ շատ չէ հավատում իր ենթադրութեան համոզիչ լինելուն, որովհետեւ ասում է. «Իմ այս գիտողութեան ներքի դեմ կլինեն, անշուշտ, առարկութեաններ, սակայն ինքն իմ ընդհանուր եզրակացութեանը, որովհետեւ Խորենացու ժամանակի որոշման համար կան նաև ուրիշ հնարաններ, որոնք նեցուկ են ծառայելու վերոհիշյալ կարևոր ենթադրութեան» (էջ 142—3):

Ծանոթանալով այդ «ուրիշ հեղափոխներին»:

Սրանցից մեկն է աղադ. Մանանդյանի հետևյալ թեզիսը.

«Խորենացու հունասիրությունը հասկանալի է արմատական տիրապետության այս շրջանում» (էջ 143): Այս միտքն ապա-

ցողեցելու համար ակադ. Մանանդյանը դիտում է, որ արաբա-
ցոց հարձակողական քաղաքականությունն ու նրանց կատարած
ավերածությունները 775-ին և Բուղայի արշավանքների ժամա-
նակ, 852—855 թվականներին, հայ նախարարներին և մասնա-
վորապես Բագրատունիներին ծայր աստիճան հուզելու և զրգուե-
լու էին արաբական խալիֆայության դեմ, և ընդհակառակը, հենց
այս Զ-րդ դարում Հունաց կայսրությունը բարեկամական հարա-
բերություններ ուներ Բագրատունիների և Արծրունիների հետ
որոնց առատաբար բաշխում էր բարձր տիտղոսներ և կալված-
ներ (վկայություններ է բերում պատմությունից)։ Սրանց հե-
տևանքով հայ ազնվականության մեջ առաջ եկավ քաղաքական
հունասեր տրամադրություն, որ իր արտահայտությունն ունե-
ցավ նաև Հայոց մատենադրության մեջ. «ուստի և իններորդ
դարի հենց երկրորդ կեսում միանգամայն հասկանալի է խորե-
նացու հունասիրությունը և նրա հարգանքն ու սերը դեպի հու-
նական կրթությունը և ուսումը» (էջ 145—8)

Գալով այն հանգամանքին, որ Սորենացու պատմությունն մեջ ոչ մի հետք, ոչ մի ակնարկ չկա կրոնական դավանական այն տարածաշրջաններ և վեճերի մասին, որոնք մշտական առիթ էին հակաքաղկեդոնական հայերի և քաղկեդոնական հույների մոլեռանդ ու անհաշտ թշնամություն՝ ակադ. Մանանդյանը Սորենացու այս օտարոտի լուծությունը բացատրում է նրանով, որ այն ժամանակ Հունաց և Հայոց միջև բանակցություններ էին սկսվել կրոնական նախկին միությունը վերականգնելու համար, ուստի և Սորենացին զգուշանում է դավանաբանական վեճերի մասին որևէ արտահայտություն անելուց (148—9):

Սկսենք վերջին կետից: Կրոնական միություն ստեղծելու (խոսքն այն մասին է, ու չայերն ընդունեն քաղկեդոնական դավանաբանությունը) բանակցությունները վարվում էին 864—867 թվականների միջոցում, իշխանաց իշխան Աշոտի մասնակցությամբ, մինչև Փոտ պատերազմի գահընկեց լինելը 867 թվին (Օրմանյան, Ազգապատում, էջ 974): Ուրեմն, ըստ ահադ. Մանանդյանի, Խորենացին այս ժամանակամիջոցում պետք է գրեր իր Պատմությունը (որ համապատասխանում է Դվինի երկրաշարժի վրա ակնարկության Ողբում ըստ ահադ. Մանանդյանի): Բայց այս ժամանակ հայ ազնվականության տրամադրությունը

միտված էր. — մոռացված էին արաբական ավերածությունները, գերված նախարարները վերադարձել էին, երկրում տիրում էր նախորդություն, բարեկեցիկ վիճակ. Աշոտն իշխանաց իշխան էր նշանակվում ամիրայետից, խորհրդակցություններ էին կատարվում Աշոտին թագավորեցնելու համար. ազնվականների տրամադրությունը արաբական էր, բոլորովին հակառակ 10—15 տարի և ավելի առաջ տիրող տրամադրության, որը նկատի ունի ակադ. Մանանդյանը, բայց որ հակասում է Պատմությունը գրելու ենթադրված ժամանակի տրամադրության:

Գանք ահադ. Մանանդյանի դիտողությունների քննության:

Հայ պատմագրությունը, 7-րդ դարից սկսած մինչև 10-րդ դարը և ավելի ուշ, երևան է բերում մի ընդհանուր տեսլենց,— հունատեցություն՝ այն սխտեմատիկ հալածանքների, բռնությունների, արհամարհանքի, վիրավորանքի համար, որ Հայոց եկեղեցին կրում էր հույների կողմից քաղկեդոնական հարցի պատճառով: Այս հունատեցությունը երբեմն զսպված կերպով է արտահայտվում՝ քաղաքական նկատառումների պատճառով, ինչպես Սեբեոսի, Հովհ. կաթողիկոսի մոտ, և երբեմն դուրս է պոռթկում ուժգնությամբ՝ ինչպես ուրիշ հեղինակների մոտ: 9-րդ դարի երկրորդ կեսում զրոյ թորենացին, եթե քաղկեդոնական չէր— և այս բանը ոչ ոք չէ ասում— չէր կարող իր ազգային եկեղեցին հայհոյող ու հալածող հույների դեմ ուրիշ զգացմունք ունենալ՝ քան բուռն ատելություն: Եկեղեցիների միության հարցը, որ արծարծվեց Աշոտի և Փոտ պատրիարքի ժամանակ (864—7), և ոչ մի հետևանք չունեցավ՝ կարող էր, ենթադրենք, զսպել այս ատելության արտահայտությունը, բայց չէր կարող չքացնել այս զգացումը նրա հոգում և, համեմատյալ դեպք, չէր կարող փոխվել մոլեռանդ հուճասիրության: Ենթադրենք թե ազնվական դասակարգը քաղաքական հուշասեր արամադրություն ուներ. միթե թորենացին, այդ ինքնուրույն միաքը, համարձակախոս պատմագիրը, որ չէր քաշվում հին հայ թագավորներին «անբան, թուլամիտ, վայրենի, տխմար» կոչել, որ իր մեկենաս իշխանին հանդիմանում է տհասության և խաղության պատճառով, միթե այդ թորենացին առանց կծու հանդիմանության պիտի թողներ ազնվական դասակարգի այդ հուճասիրությունը քաղաքական շահերի պատճառով, երբ նույն այդ հույներն ազգային Հայոց եկե-

զեցուէն թշնամի էին և հալածում էին: Մինչև անգամ թույլ տանք անկարելին. ենթադրենք որ Խորենացին քծնում էր ազնվականներին, Աշոտին և այլն, հացկատակի դերում չէր համարձակվում նրանց տրամադրութեան դեմ գնալ. բայց այս դեպքում նա հույներին նկատմամբ պետք է առավել զնաված լեզու բանեցներ, թեկուզ չափավոր գովեստներ տար նրանց քաղաքական տեսակետից, այսինքն արտահայտեր հունական քաղաքական օրինատացիա: Բայց Խորենացու մեջ նկատում ենք բոլորովին այլ բան,— բռն, խոր, անվերապահ սեր, սեր ոչ թե դեպի հունաց քաղաքականութիւնը կամ եկեղեցին, այլ դեպի հունական կուլտուրան, գրականութիւնը, փիլիսոփայութիւնը, բանաստեղծութիւնը, առասպելները: Մար ու ձոր կա ազնվական դասակարգի քաղաքական հունասիրութեան և Խորենացու հունական կուլտուրայի սիրո միջև: Ո՛չ, Խորենացու հունասիրութիւնն 9-րդ դարի կեսում, վաթսուական թվականներին, միանգամայն անհասկանալի է, անբնական: Դա կլինէր միակ բացառութիւնը 5—12-րդ դարի հայ գրականութեան և եկեղեցական պատմութեան մեջ, կլինէր դավաճանութիւն Հայոց եկեղեցու ինքնուրույնութեան:

Խորենացու հունասիրութիւնը բացատրելու համար պետք է դեն ձգել այդ շրջանը (աբարական ավերածութիւնների, եկեղեցիների միութեան մասին բանակցութեան), ինչպես Ողբի «հովիւ» հասկանալու համար դեն ձգեցինք Ովայեցի Հովհաննես կաթողիկոսին, և նրա արմատները պետք է փնտենք դարձյալ 5-րդ դարում և հատկապես Խորենացու կենսագրութեան մեջ, որ կատարելապես բացատրում է այս հունասիրութիւնը: Նա երկար ժամանակ ապրում է Ալեքսանդրիայում, հունական կուլտուրայի լավագույն շրջանում, որտեղ շփվում էին իրար հետ Արևելքն ու Արևմուտքը. աշակերտում է նշանավոր մի գիտնականի, որին կոչում է նոր Պլատոն, ուսումնասիրում է ոչ միայն հունարեն լեզուն, հետադարձ արվեստը, եկեղեցական գրականութիւնը, այլև հունաց պատմութիւնը, փիլիսոփայութիւնը, զինարարութիւնը, բանաստեղծութիւնը. սոսկում է հունական կուլտուրայով, որի արտահայտութիւններն են, բացի հունասիրութիւնից, նաև հունաբան լեզուն, գեղարվեստական գրական ճաշակ, լայն աշխարհայացք, մտքի անկախութիւն, և բնականաբար, իր մոտին բարձր գիտակցութիւն, համեմատած իրեն ժամանակա-

կից ազգայինների հետ: Խորենացին եզակի հեղինակ է ոչ միայն հունասիրութեամբ, այլև այս առանձնահատկութիւններով, որոնք չէին կարող ստեղծվել հայ միջավայրում, 9-րդ դարի երկրորդ կեսում: Այդ միջավայրի արդյունքները մեզ հայտնի են,—8-րդ դարի վերջում տափակ Ղևոնդ Երեցը, 10-րդ դարի սկզբներում՝ փքուն ու դատարկ Հովհաննես Պատմագիր կաթողիկոսը: Այս դաժանների մեջ կանգնած է հսկա Խորենացին: Ո՞րտեղից բուսավայր հսկան, — իհարկե ոչ հայկական հողից, ոչ Մաքենոցաց վանքում, ուր հագել թե հունական լեզու սովորեցնեին: Այսպես ենթադրելը նույն է ասել, թե Սառուցյալ ովկիանոսի մի կղզու վրա բուսել է շքեղ արմավենի: Կուլտուրայի և գրականութեան վրա բուսել է շքեղ արմավենի: Կուլտուրայի և գրականութեան մեջ էլ էվոլուցիայի օրենքը գործում է անխափան: 9-րդ դարի երկրորդ կեսում, իբրև հայկական միջավայրի արդյունք, անկարելի է դնել Խորենացուն, բայց բնական է դնել 5-րդ դարում՝ արտասահմանում հունական լայն կրթութիւն ստացած, «եվրոպականացած» մի հեղինակ, որի այս կրթութիւնը բաղմակողմանի կերպով արտահայտվում է նրա Հայոց Պատմութեան մեջ: Նույն այս 5-րդ դարում բնական է դավանաբանական վեճերի բացակայութիւնը Խորենացու Պատմութեան մեջ, որովհետև այդ դարում այդպիսի դավանաբանական վեճեր Հայոց և Հունաց մեջ Գաղղիկոնական ժողովի պատճառով դեռ գոյութիւն չունեին:

Այս խորհրդածութիւնից հետո այլևս կարիք չեմ դրում կանգ առնել Ն. Մառի դիտողութեան վրա, որը մեջ է բերում ակադ. Մանանդյանը (էջ 144), մանավանդ որ ասորական աղբյուրներ գործածելու հարցի նկատմամբ, որքան հասկանում եմ, Ն. Մառի ասածները հակասում են միմյանց:

Հաջորդ թեզիսում ակադ. Մանանդյանը ցույց է տալիս, թե «խորենացու ժամանակ Հայաստանում նշանավոր կենտրոնավայր է եղել «Շիրակաշատ ավան»-ը, իսկ կարևոր ուսումնական կենտրոնի գավառը»: Թեզիսի առաջին մասն ապացուցելու համար նա բերում է հատված Աշխարհացույցի ընդարձակ խմբագրութիւնից, որտեղ ասված է, թե Ախուրյան գետը «անցանկով յեկեղեցի կուսէ Մարիկոպուլի, այսինքն Շիրակաշատ աւանի, և Մընայ և Երուանդաշատ քաղաքի, իջանէ յերասխ», (էջ 149):

Շիրակաշատի Մովրեկոպուլիս կոչվելուց ակադ. Մանան-

դյանը եզրակացնում է, որ այդ ավանը Խորենացու ժամանակ եղել է նշանավոր կենտրոնավայր, իսկ Շիրակավանը (հին անու- նով՝ Երազգաւորք) գահանիստ կենտրոն էր դարձել Շիրակի Բագ- րատունիների, և այնտեղ իշխանաց իշխան Աշոտի ժամանակ գումարվեց ժողով՝ Փոռ պատրիարքի գրությանը պատասխանե- լու։ Ակադ. Մանանդյանը ենթադրում է, թե Խորենացին, Ար- տաշատի ու Երվանդաշատի նմանությամբ, «Երազգաւորք—Շիրա- կաւանն» անվանել է «Շիրակաշատ աւան» և «Մաւրիկոպաւլիս» (էջ 149—151)։

Նախ պետք է դիտեմ, որ զուր է այստեղ խառնված Խորե- նացու անունը. Խորենացու Պատմության մեջ «Երազգաւորք», «Շիրակաւան», «Շիրակաշատ» և «Մաւրիկոպաւլիս» անուններից ոչ մեկը չկա։ Առաջին երկուսը պատահում են շատ հեղինակների մոտ, սկսած 7-րդ դարից, իսկ վերջին երկուսը՝ միայն Աշխար- հացույցի ընդարձակ խմբագրության մեջ (համառոտը չունի), և հայտնի չէ, թե այդ անուններն Աշխարհացույցի սկզբնագրում կային թե ոչ։ Երկրորդ՝ պետք է դիտեմ, որ «Շիրակաւան—Շիրա- կաշատ» փոփոխությունը կամայական է. դրանք տարբեր տեղեր են. «Շիրակաւան—Երազգաւորքը» (այժմ Բաշ-Շորագյալ) օդային գծով մոտ 12 կիլոմետր հյուսիս-արևելք է ընկնում Շիրակաշատ- Մաւրիկոպաւլիսից, որ մինչև այժմ էլ պահպանել է հին անվան կրճատ ձևը — Մեկրեկ (Ալիշանի «Շիրակ», քարտեզը), կամ Մավրիկ՝ ուսանական քարտեզներում, ուստի «Երազգաւորք—Շիրա- կաւանի» Բագրատունյաց արքունիք լինելուց չէ կարելի ոչ մի հետևություն հանել Շիրակաշատ—Մավրիկոպաւլիս նշանավոր կենտ- րոնավայր լինելու մասին։

Միակ ճիշտ հետևությունն Աշխարհացույցի ցուցումից այս է, թե բուն հայկական Շիրակաշատը հետո կոչվել է Մավրիկո- պոլիս, Մորիկ կայսեր անունով կամ նրա պատվին, ոչ առաջ քան 7-րդ դարի սկիզբը, որից հաջորդ հետևությունը կլինի, որ Աշխարհացույցի ընդարձակ խմբագրությունը կատարված է ոչ առաջ, քան վերոգրյալ ժամանակը։ Շիրակաշատի Մավրիկոպո- լիս կոչվելու պատճառը ճիշտ է բացատրում ակադ. Մանանդյանը. դա եղել է սահմանադրի «կայան և բանակատեղի հունական զորքերի» (հիշենք, որ նույնպիսի պատճառով կոմսին կոչվեց Ալեքսանդրոպոլ)։ Ուրեմն ակադ. Մանանդյանը շփոթել է «Երազ-

գաւորք—Շիրակաւանը» «Շիրակաշատ—Մաւրիկոպաւլիս» հետ և զուր է մեղադրում Աշխարհացույցի հեղինակին կամ խմբագրո- ղին անունների կամայական խառնախման մեջ։

Թեղիսի երկրորդ մասն ապացուցելու համար ակադ. Մա- նանդյանը մեջ է բերում Խորենացու Պատմությունից մի կտոր, որտեղ պատմագիրն իր ասածին վկայություն է բերում Եվսեբեոս Կեսարացու Եկեղեցական Պատմությունը, «...զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու։ Խնդիր արա- ցես ի Գեղարքունի, ի գաւառին Սիւնեաց...»։ Եվսեբեոսի Պատ- մության մի օրինակ Գեղարքունի գավառում գտնվելը ակադ. Մանանդյանը բավականաչափ ապացույց է համարում հայտնելու, թե Գեղարքունի գավառը Խորենացու ժամանակ եղել է կարևոր ուսումնավայր։ Բայց այս կարծիքը հիմնավորելու համար նա բե- րում է և այն փաստը, որ Սյունիքում՝ Սոթք գավառում գոյու- թյուն է ունեցել անվանի Մաքենոցաց վանքը, որ հիմնովին թյուր է անվանվել և այրվել է 827 թվին և քիչ հետո վերաշինվել ու պայ- ավերվել և այրվել է 827 թվին և քիչ հետո վերաշինվել ու պայ- ծառացել, որտեղ ուսել է Մաշտոց կաթողիկոսը, աշակերտելով վանքի վանահայր Ստեփանոսին։ Այս տեղեկությունն էլ հիմք է տալիս ակադ. Մանանդյանին ասելու, թե այս Մաքենոցաց վանքն 9-րդ դարում (ինչու ոչ 7-րդ դարում կամ ավելի կանուխ, այր- վելուց առաջ՝ ակադ. Մանանդյանը չէ ասում) նշանավոր ուսում- նավայր է եղել և ունեցել է անշուշտ մեծ գրադարան (երևի այս գրադարանում է եղել Խորենացու հիշած Եվսեբեոսի Պատ- մության մի օրինակը)։ Ն. Ալիշանը կարծիք է հայտնել, թե մության մի օրինակը)։ Ն. Ալիշանը կարծիք է հայտնել, թե Խորենացու գատախարակության առաջին շրջանը պետք է ենթա- մուծվի այս կողմերը, հավանորեն, «ի Մաքենիս», և ակադ. Մա- նանդյանը հավանական է գտնում այս ենթադրությունը (էջ 152—3)։

Սրանք բոլորը ենթադրություններ են, ապացույցի կարոտ, և ոչ մի դեպքում չեն կարող ապացույց ծառայել Խորենացու 9-րդ դարում ապրելուն։ Ընդհակառակը, եթե վերը բերված հատ- վածում կա որևէ տվյալ հեղինակի ժամանակը որոշելու համար՝ նա խոսում է հօգուտ Պատմագրի 5-րդ դարում ապրելուն և Մես- նա խոսում է Մաշտոցի աշակերտ լինելուն, որ, զժբախտաբար, անտես է լքում Մաշտոցի աշակերտ լինելուն, որ, զժբախտաբար, անտես է անում ակադ. Մանանդյանը։ Այդ տվյալը Պատմագրի հաղորդած տեղեկությունն է՝ «...զոր ետ քարգմանել երանելի վարդապետն

մեր Մաշտոց...»: Խորենացին ռորեղից կարող էր իմանալ այս մանրամասնությունը, որը Կորյունը չէ հաղորդում, եթե ոչ նույն իսկ Մեսրոպից, իր վարդապետից, կամ այդ գրքի թարգմանիչներից՝ Հովսեփից կամ Եղիշիկից, որոնք նրա պատմերով գնացել էին Ասորիք թարգմանություններ անելու: 9-րդ դարի հեղինակ Խորենացին այս մանրամասնությունը բնավ չէր գիտենա, և եթե նույնիսկ գիտենար և հիշեր՝ նա կասեր «երանելին Մաշտոց», «երանելի վարդապետն Մաշտոց», բայց ոչ թե վարդապետն մեր: Եթե Խորենացին Եվսեբիոսի Պատմության տեղը համարեր Մաքենոցաց վանքը՝ ուղղակի այս վանքի անունը կտար և ոչ թե իր մեկենասին կառավարիչը խուլյո ու խնդիր լինել Գեղարքունիք գավառում, որից դուրս էին գտնվում Մաքենիս գյուղն ու Մաքենոցաց վանքը: (Գեղարքունի գավառին մենք հետո կվերադառնանք մի այլ հարցի առիթով):

Հաջորդ թեղիսում ահադ. Մանանդյանն իր կառուցվածքի երկրորդ սյունն է դնում՝ Հայոց Պատմության գրություն ժամանակի հետնագույն սահմանը որոշելու համար: Նա ասում է. «Խորենացին, Կավանդեն, այն «Մովսես ֆերքոդ»-ն է, որը Զաֆարիա կաթողիկոսի հետ միասին գրել է «Ի փոխումն Աստուածամարն եւ պատկերի Յորին» ճառը» (էջ 155):

Այս ճառն ահադ. Մանանդյանը չէ տեսել: Սրա մասին նա այսքան տեղեկություն ունի, թե Երուսաղեմի մատենադարանի թիվ 413 ձեռագրում գտնվում է «Զաֆարիա կաթողիկոսի եւ Մովսեսի քերթողի ի փոխումն Աստուածամարն եւ պատկերի նորին» ճառը: Այս Մովսես քերթողը, ահադ. Մանանդյանի կարծիքով, հավանորեն հենց հռչակավոր «քերթողահայր» Մովսես Խորենացին է, «որի Պատմությունը հորինված է, ինչպես վերև տեսանք, նույն այս ժամանակաշրջանում՝ Բուդայի արշավանքից հետո» (էջ 155):

Իսկ մենք վերը տեսանք, որ Հայոց Պատմությունը չէր կարող հորինված լինել Զաֆարիա կաթողիկոսի ժամանաշրջանում (855—875)՝ Բուդայի արշավանքից հետո: Ուրեմն Մովսես քերթողի և Մովսես Խորենացու ժամանակակիցությունը, ուրեմն և նույնությունը, ինքնին տապալվում են:

Բայց շարունակենք: Խորենացու երկերի ժողովածուի մեջ (Վենետիկ, 1865) կա նաև մի գրվածք, հետևյալ ընդարձակ վեր-

նագրով — «Պատասխանի թղթոյն Սահակայ, յորում և բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի վայտն և թէ յյր ձեռն և զինչ եղև պատճառք խնդրոյն կամ թէ յումմէ բերաւ ի Հայս»: Այս գրվածքը, որ մարգարեություն ձևով պարունակում է տեղեկություններ Արծրունիների և Բագրատունիների թագավորության մասին՝ 10-րդ դարի գրական կեղծիք է, վերագրված Մովսես Խորենացուն, սրա բարձր հեղինակությունը վավերականություն ընծայելու համար գրվածքին: Կեղծիքն իբրև Խորենացու գործ ընծայելու համար՝ անհամ կերպով բազմաթիվ ֆրազներ ու արտահայտություններ են մուծված նրա մեջ Խորենացու Պատմությունից: Այս գրվածքի կեղծիք լինելը ճանաչված է բանասիրության կողմից, և ահադ. Մանանդյանն այս չէ հերքում: Ի՞նչ կապ կա Զաֆարիա—Մովսեսի ճառի և Կեղծ-Խորենացու գրվածքի միջև — չգիտենք, քանի որ առաջինը մեզ ծանոթ չէ: Ահադ. Մանանդյանն իրավացի է նկատում, որ այդ խնդիրը վերջնականապես լուծելու համար անհրաժեշտ է համեմատել այս երկու գրվածքները, որ դեռ կատարված չէ. այնուամենայնիվ նա միանգամայն հավանական է համարում, որ Կեղծ-Խորենացու գրվածքում Աստուածածնի պատկերի մասին բերված տեղեկությունները քաղված են, իրոք, Մովսես Քերթողի և Զաֆարիայի ճառից: Այս կամայական ենթադրության մեջ կարևորն այն է, որ ահադ. Մանանդյանը Կեղծ-Մովսեսի գրվածքը համարում է ավելի հետո գրված, Մովսես Քերթողի ճառից քաղվածաբար:

Այս տվյալներից ահադ. Մանանդյանը հանում է հետևյալ եզրակացությունը.

«Եթե Մովսես Խորենացին և «Մովսես Քերթող»-ն ապրել են միևնույն ժամանակաշրջանում (1), երկուսն էլ ահանավոր քերթողներ են (2), երկուսն էլ Մովսես են (3), երկուսն էլ ունեն գրվածքներ Հոգյաց վանքում գտնվող Աստուածածնի պատկերի մասին (4) — ավելի քան հավանական է, ըստ իս, որ նրանք պետք է լինեն միևնույն անձը» (էջ 157):

Այս չորս կետերից միակ ճշմարիտը երրորդն է — «երկուսն էլ Մովսես են»: Բայց Մովսեսներ շատ կան մեր հին ու նոր դրականություն մեջ, և միայն անվան նույնությունից չէ կարելի նույնացնել անձերը: Մյուս կետերն անհիմն են և անընդունելի:

Արդարեւ, Մովսես Խորենացու ապրելը Չաքարիա կաթողիկոսի ժամանակաշրջանում այն հիմնական կետն է, որն ապացուցելուն նվիրված է ակադ. Մանանդյանի այս երկասիրությունը: Ուրեմն տրամաբանորեն սխալ է ապացուցելն ընդունել իբրեւ ապացույց՝ մի ուրիշ բան ապացուցելու համար: Խորենացու և Մովսես քերթողի ժամանակակցություն հիման վրա կարելի կլիներ հավանական ենթադրություն անել՝ (բայց ոչ թե եզրակացնել) այդ երկու անձերի նույնություն մասին՝ եթե այդ ժամանակակցությունն ապացուցված լիներ. իսկ մենք, քայլ առ քայլ հետեւելով ակադ. Մանանդյանի թեզիսներին և մի առ մի նրանց քննելով՝ տեսանք, որ նրանցից ոչ մեկը չէ ապացուցում Խորենացու 9-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ լինելը կամ ժամանակակցությունը Չաքարիային:

Երկու Մովսեսին էլ ակադ. Մանանդյանը հորջորջում է իբրեւ ակամավոր քերթողներ: Որ Մովսես Խորենացին ակամավոր քերթող է, քերթողահայր, մեծ վարդապետ, տիեզերահռչակյալ քերթող և այլն՝ այդ գիտեն բոլոր հին մատենագիրները. նույնը խոստովանում են և մեր ժամանակի բոլոր բանասերները, նույն իսկ Խորենացու ամենատխերիմ հակառակորդները, մեծապես դժբախտաբար չափազանց չափազանց լուրջ ակադ. Մանանդյանից: Նրա անունը, բացի վերահիշյալ ճառի վերնագրից և գուցե Պիտոյից գրքի վերջաբանում նշանակվածից՝ ուրիշ տեղ չէ հիշվում, և ոչ մի մատենագիր նրան չգիտե (Մովսես քերթող Սյունյաց եպիսկոպոսն ուրիշ անձ է): Այնպես որ նրան, իբրեւ ակամավոր քերթողի, Խորենացու հետ դասակցելու իրավունք չունի ակադ. Մանանդյանը: Իսկ եթե այս Մովսես քերթողը նույն է Պիտոյից գրքի վերջաբանում նշանակված Մովսես քերթողի հետ՝ այս դեպքում, դատելով վերջաբանի բովանդակությունից, լեզվից ու ոճից՝ մերժելով պիտի մերժենք նրա նույնությունը Մովսես Խորենացու հետ (այս մասին քիչ հետո): Վերջապես ակադ. Մանանդյանի հիշած չորրորդ կետը, թե երկուսն էլ ունին գրվածքներ Հոգյաց վանքում գտնվող Աստվածածնի պատկերի մասին, որ պետք է հիմք ծառայեր Մովսես քերթողին և Խորենացուն միևնույն անձն ընդունելուն՝ ինքն իրեն ապավովում է, քանի որ, շինչպես տեսանք,

Խորենացուն վերագրված գրվածքը 10-րդ դարի կեղծիք է և, հենց ակադ. Մանանդյանի ենթադրությամբ, քաղվածորեն հորինված պետք է լինի Մովսես քերթողի — Չաքարիայի ճառից. ուրեմն այս դեպքում Խորենացին ոչ մի կապ ու չփում չունի Մովսես քերթողի հետ, և ինքը՝ ակադ. Մանանդյանն ընկնում է հակասություն մեջ:

Այսպիսով տեսնում ենք, որ Մովսես քերթողին Խորենացու հետ նույնացնելու օգտին ակադ. Մանանդյանի բերած չորս հիմքերից ոչ մեկը ոչ մի նշանակություն չունի: Այս տեսակետից ավելի հետաքրքրական է ակադ. Մանանդյանի հաջորդ թեզիսը Պիտոյից գրքի վերջաբանի նկատմամբ, քանի որ Պիտոյից գրքը, ընդհանրացած կարծիքով, Մովսես Խորենացու թարգմանածն է, իսկ նրա վերջաբանում հիշվում է Մովսես քերթողը՝ «արարող Պիտոյիցս տառի»: Այս թեզիսն է.

«Պիտոյից գրքի վերջաբանը հավանական է վերագրել Մովսես Խորենացուն» (էջ 158): Այս թեզիսում ակադ. Մանանդյանի արտահայտած ու պաշտպանած մտքերը կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Պիտոյից գիրքը թարգմանված է 6-րդ դարի առաջին կեսում (էջ 158): Ինձ թույլ եմ տալիս նրա այս խոսքը լրացնել — «կամ 5-րդ դարի վերջերում» — հիմնվելով նույն ակադ. Մանանդյանի վրա, որ իր «Հունաբան դպրոցում» առաջին շերտի (Պիտոյից, Փիլոն, Թրակացու քերականություն և այլ թարգմանությունների ժամանակը որոշում է՝ 6-րդ դարի առաջին կեսը, կամ 5-րդ դարի վերջերը) (տես «Հունաբան դպրոցը», էջ 223):

2. Պիտոյից գիրքը ենթարկվել է խմբագրությունների, կրել է հավելումներ, որոնցից մեկն է նրա վերջաբանը՝ «Մովսես քերթողի» վերնագրով (էջ 160):

3. Այս հավելում-վերջաբանը գրված է 9-րդ դարում (էջ 165, 167). նրա հեղինակն է Մովսես քերթողը, Չաքարիայի աշխատակիցը, որին ակադ. Մանանդյանը նույնացրել է Խորենացու հետ:

4. Պիտոյից գրքի թարգմանությունն անկարելի է վերագրել վերջաբանի հեղինակին, լեզվի և բառապաշարի մեծ տարբերության պատճառով, որ նկատվում է բուն գրքի և վերջաբանի միջև (էջ 162—167):

5. Խորենացու Հայոց Պատմութեան և Պիտոյից գրքի միջև սերտ կապ կա թե՛ գրելու ձևի, հեռադասական ուղղութեան և թե՛ բառապաշարի կողմից. երկուսի մեջ էլ անչափ շատ են հազվագյուտ հունական բառեր՝ հունաբան դպրոցի առաջին շերտից (էջ 159):

6. «Պիտոյից գիրքը (ոչ վերջաբանը) չէ կարող վերագրվել Խորենացուն, որ, ինչպես տեսանք, ապրել է իննեորդ դարում և իր Պատմութեանը գրել է Բուզայի արշավանքից հետո» (էջ 158):

Զանց եմ անում մյուս կետերը -- Թեոդորոս աշակերտի, Մաշտոցի և այլն մասին, որոնք կարևորութեան չունին ներկա հարցի լուծման համար:

Վերոհիշյալ կետերից անպայման ընդունելի են առաջինը, երկրորդը, չորրորդը և հինգերորդը: Կարելի է հավանական և ընդունելի համարել նաև երրորդը, սակայն մերժելով Մովսես քերթողի նույնացումը Խորենացու հետ, որ, ինչպես տեսանք, ոչ մի հիմք չունի:

Իսկ վեցերորդ կետն անընդունելի է, տրամաբանորեն սխալ պատճառաբանված և մասամբ հակասում է հինգերորդ կետին: Տրամաբանորեն սխալ է այն պատճառով, որ Պիտոյից գրքի թարգմանութեանը Խորենացուն չվերագրելու միակ ապացույց բերվում է այն, որ Խորենացին ապրել է 9-րդ դարում, այսինքն այն, ինչ որ վիճելի, ապացուցելի է: Հակասական է այն պատճառով, որ ակադ. Մանանդյանը մի կողմից ընդունում է «սերտ կապ» Խորենացու Պատմութեան և Պիտոյից գրքի միջև, մյուս կողմից անկարելի է համարում Պիտոյից գրքի թարգմանութեանը վերագրել վերջաբանի հեղինակ Մովսես քերթողին, և այնուամենայնիվ այս վերջինին նույնացնում է Հայոց Պատմութեան հեղինակ Մովսես Խորենացու հետ:

Այսպիսի մի հարց տանք. Խորենացու Հայոց Պատմութեան և Պիտոյից գրքի միջև լեզվական և մատենագրական սերտ կապ կա: Պիտոյից գրքի և նրա վերջաբանի միջև այնքան մեծ զանազանություն կա լեզվի և ոճի կողմից, որ անկարելի է միևնույն անձին վերագրել այդ երկու գործը: Այս դեպքում Խորենացին Պիտոյից գրքի հետ կարող է մի որևէ կապ ունենալ, թե՛ նրա վերջաբանի հետ, կամ թե՛ վերջաբանի հեղինակը, որ, ան-

շուշտ տարբեր է Պիտոյից գրքի թարգմանչից, կարճ է հեղինակ լինել Հայոց Պատմութեան: Անաչառ քննադատը, որ նախապաշարված չէ կանխակալ կարծիքով՝ անշուշտ կպատասխանէ. Խորենացին կարող է կապ ունենալ Պիտոյից գրքի հետ, իսկ վերջաբանի հետ չէ կարող կապ ունենալ, վերջաբանի հեղինակը չէ կարող հեղինակ լինել Հայոց Պատմութեան: Այսպիսի եզրահացութեանը բնական և պարտադիր է անաչառ քննողի համար. բայց ակադ. Մանանդյանը, ինչպես տեսանք՝ ճիշտ հակառակն է պնդում, որովհետև «երկուսն էլ Մովսես, երկուսն էլ ականավոր քերթող...» դատողությունը և Խորենացու Ողբի մի մասում Բուզայի արշավանքի արձագանքը կռահելը նրա աչքում ավելի նշանակություն են ունեցել, քան մատենագրական քննութեան երևան հանած անժխտելի փաստը:

Հետաքրքրական է դարձյալ, որ ակադ. Մանանդյանը մանրամասն բաղդատելով Պիտոյից գրքի վերջաբանը Պիտոյից գրքի ու դասական այլ հեղինակների հետ և ցույց տալով լեզվային մեծամեծ տարբերությունները մեկի և մյուսների միջև՝ աչքաթող է արել ամենակարևորը և վճռականն այս հարցում (այսինքն թե՛ վերջաբանի հեղինակ Մովսես քերթողը և Մովսես Խորենացին նույն անձն են, թե՛ տարբեր անձեր), — վերջաբանը չէ համեմատել Խորենացու Հայոց Պատմութեան հետ: Այս համեմատությունն անհրաժեշտ էր. նրա միջոցով կարելի կլիներ որոշել՝ արդյոք լեզվային և մատենագրական սերտ կապ կա վերջաբանի և Հայոց Պատմութեան միջև, որի հիման վրա կարելի լիներ այս երկու գործը միևնույն անձին վերագրել, կամ, որ նույն է՝ Մովսես քերթողին և Մովսես Խորենացուն նույնացնել, թե՛ այդ երկու գրվածքներն այնքան տարբեր են լեզվային և մատենագրական հատկություններով, որ նրանք չեն կարող միևնույն հեղինակի գործ լինել, ինչպես միևնույն հեղինակի գործ չեն Պիտոյից գիրքը և նրա վերջաբանը:

Թե՛ ինչու այս անհրաժեշտ համեմատությունը զանց է արել ակադ. Մանանդյանը՝ ես չեմ կարող ասել: Բայց ինչ որ նա բաց է թողել՝ ուզում եմ ես լրացնել:

Պիտոյից գրքի վերջաբանը, որ Խորենացու մատենագրություն մեջ (Վենետիկ, 1865) բռնում է երկու ոչ ամբողջ երես, բաղկացած է ընդամենը 62 տողից: Առաջին հատվածում հեղի-

նալը ցույց է տալիս, որ հետտորակա՛ն արվեստ սովորածը փա՛շ-
լում է եկեղեցական, հասարակա՛ն և դատաստանա՛կան բոլոր
հանգեսներում, ցանկալի և սիրելի է հանդիսանում իր ազգի և
աշակերտների մեջ: Երկրորդ հատվածում հեղինակը, որ իրեն
երկու անգամ կոչում է Մովսես (վարժապետ մակդիրով), հորդո-
բում է իր աշակերտին՝ Թեոդորոսին, որին անվանում է դարձյալ
երկու անգամ, հետևել հետտորակա՛ն արվեստը սովորելու: Երրորդ
հատվածում, հայտնի չէ թե մտքի ի՞նչ լծորդությամբ, պատմում
է հին առակը, թե Արամազդը հրամայել էր, որ բոլոր թոչուն-
ները մի տեղ հավաքվին, որպեսզի իրենցից զեղեցկագույնին
թոչունների թագավոր ընտրեն: Ճայը կամ ազոաֆլ ուրիշ թոչուն-
ների թափած փետուրներով զարդարվում է ու հուշակվում ամե-
նագեղեցիկը. բայց սազը, մոտ կանգնած լինելով, ճանաչում է
նրա վրա իր փետուրն ու պոկում. նրան հետևում են մյուս
թոչունները, և յուրաքանչյուրը պոկում է նրա վրայից իր փե-
տուրը. ճայը խայտառակվում է:

Մովսես քերթողը կամ առաջին անգամ ինքն է գործածել (այս վերջին բառերից 16-ը ակադ. Մանանդյանը մեջ է բերում իբրև ոսկեդարյան լեզվին և Պիտոյից — Փիլոնյան խմբի թարգմանությունների օտար բառեր, ուրիշ քսան բառ էլ նա նշում է իբրև Բագրատունյաց շրջանի մատենագրական երկերում գործածական ու սովորական բառեր (էջ 164—167)։

Արդ՝ այս 87 բառից, որոնք Մովսես քերթողը գործ է ածել
կրկու ոչ լրիվ երեսում, 62 տողում, ոչ մեկը չէ պատահում Մով-
սես խորենացու ամբողջ Հայոց Պատմութեան մեջ, 277 նույնա-
զիր երեսներում: Այս բառերը մասնագիտական չեն, տերմիններ
չեն, որոնք կարող են կիրառվել որոշ մասնագիտական գրվածք-
ներում. սրանք սովորական բառեր են, որոնք ամեն մի գրվածքի
մեջ էլ կարող են գործածվել, և սակայն խորենացին չէ գործա-
ծել: Մրանից հետևեցնում ենք, որ խորենացու բառապաշարը խո-
րապես տարբերվում է Մովսես քերթողի բառապաշարից: Եթե
սկսող. Մանանդյանը վերջաբանի 36 բառի համեմատությունից
եզրակացնում է, թե նրա լեզուն ոսկեզարի և Պիտոյից — Փիլո-
նյան խմբի լեզու չէ, այլ 9-րդ դարի լեզու՝ ավելի մեծ իրա-
վունքով մենք կարող ենք ասել, հիմնվելով 87 բառի գործածու-
թյան վրա, թե Մովսես քերթողի լեզուն խորենացու լեզուն չէ:

Բայց բառերը միայն խոսքի ատաղձն են կազմում: Երբ մենք դիտում ենք, թե հեղինակն այս ատաղձից վնչպես է խոսք ստեղծում, նրա կառուցվածքի թե առանձին զարգերի և թե ընդհանուր ճարտարապետության մեջ նկատում ենք անագին, անհաշտելի տարբերություն Մովսես Խորենացուց:

1. Մովսես քերթողը սիրահար է նամանաձայնությունների, արվեստական ջանք է գործ դնում կողք-կողքի շարերու նամանա-
հանջուն բառեր, օրինակ. «Գեղապարեսցես ընդ երջանիկ պարս
պերճացելոցն երգարանել ի պարերգակն ճեմարանի» (պ. և բ.
գրերի վրա):

«Հանդիպելով ի դուպարս բանամարտիցն ըմբերանեսցես հանճարեղ բանիւ զբանիւն պանծայեալսն» (Բ, 4):

«Ի բոլոր ազատերամս երաստից երանաւտ բարերանեսցիս»
(Է, Բ):

«Բաղձալի արհեստասէր համբակաց, ընդհանուր հռչակելով
դիտողական համբաւով» (հ):

«Ենթակայս իրի հռետորական հանդիսաւորաց, համանգամայն ուշեղազոյն պարմանեացն» (հ):

Այս բոլորը մի երեսի վրա: Խորենացուն միանգամայն օտար է նմանաձայնությունների գործածությունը:

Մովսես քերթողը սիրահար է փոխաբերական խոսքերի. նա փոխանակ բուն բառը գործածելով՝ ուրիշ երկու-երեք բառով աշխատում է տալ բուն բառի իմաստը, որով շատ անգամ մութ է մնում խոսքը: Օրինակ —

«Վեհագոյն վեհիցն պետաւոր», այսինքն Արամազդ:

«Օղապարբ... թեւահերձք», այսինքն՝ թռչուններ:

«Տխրերանդ հաւ», այսինքն՝ ճայ կամ ագռավ:

«Խորամանկ թռչուն զիշերասէջ», այսինքն՝ սագ (?) կամ քուէջ:

«Սեւաթոյր սարաս», այսինքն՝ սև փետուրներ, և այլն:

Այսպիսի փոխաբերություններ նույնպես օտար են Խորենացուն:

3. Սրանց հակառակ, Խորենացին սիրում է ճարտասանական ուրիշ ձևեր — նմանություն, բաղդատություն, հարցումն, բացադանշություն, բացադարձություն կամ բարաոնություն, որոնց միջոցով նրա խոսքը դառնում է պատկերավոր, կենդանի և ազդու (օրինակներն այնքան շատ են և մատչելի, որ ավելորդ եմ համարում մեջ բերել): Մովսես քերթողին օտար են այս ճարտասանական ձևերը:

4. Խորենացին այնպես առատ և տեղին է գործածում շաղկապները, որ միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում կապը նախադասությունների մեջ, մտքերի հաջորդականությունն այն աստիճան պարզ է դառնում, որ ընթերցողը կարողանում է հետևել հեղինակի մտածողության ընթացքին, ինչպես մի մարդ, որ փեթակի ապակե պատի դրսից դիտում է մեզվէ աշխատանքը և ջլժլժի վրա: Մովսես քերթողը զուրկ է այս միջոցից. վերջաբանի երկու երեսի վրա միայն մի անգամ պատահում է «իսկ» շաղկապը: Այս պատճառով նրա գրածը մութ է, մտքի հաջորդությունը՝ անորոշ, դժվարահասկանալի:

5. Խորենացու ոճը կենդանի է, շարժուն, թեթև, ազդու և այնքան կանոնավոր, որ չնայելով երբեմն գործածած երկար պարբերական (периодический) արտահայտության, հեշտությամբ

բմբռնվում է: Նա աշխատում է հասկանալի լինել և տպավորություն գործել: Մովսես քերթողի ոճը սրա հակապատկերն է — ծանր, միապաղաղ, անկենդան: Նա ոչ թե աշխատում է հասկանալի լինել, այլ զարմացնել ընթերցողին իր փքուն ճոռմաբան լեզվով, ինքնահնար բունազբոսիկ բառերով, աշխատում է ցույց տալ իր քերթողական արվեստը: Եթե Խորենացու ոճը նմանեցնենք մի լեռնային ակնակիր վտակի, որ ապառաժոտ հունով արագ հոսում է կարկաջելով և երբեմն քարավեժներ կաղմկելով՝ ապա Մովսես քերթողի ոճն ու լեզուն պետք է նմանացնենք մի կանգնած ու հոտած ձահձի:

6. Հիշելու է դարձյալ Մովսես քերթողի այս երկու երեսում հաճախ պատահած քերականական անկանոնությունները, որոնց շնորհիվ մի շարք խոսքեր քերականորեն միանգամայն անհասկանալի են մնում, ինչպես և անսովոր «ի ներ անձինդ» (= յանձին քում), «վարժապետիս քովին» (= քումդ վարդապետիս), որոնցից ազատ է Խորենացին ընդհանրապես:

Եթե լեզվի ու ոճի քննությունը կարող է առհասարակ իբրև որոշիչ միջոց ճանաչվել երկու գրվածքը մի անձի կամ տարբեր անձերի վերագրելու հարցում՝ ապա մենք հարկադրաբար պետք է ասենք, որ Պիտոյից վերջաբանը և Խորենացու Պատմությունը անշուշտ տարբեր հեղինակների գործեր են, և անկարելի է երկուսն էլ միևնույն անձին վերագրել, նրանց միջև անհաշտելի տարբերություններ կան լեզվի ու ոճի, իբրև հետևանք տարբեր գաղափարների, տարբեր ճաշակի, տարբեր բնավորության և տարբեր ընդունակության: Մովսես Խորենացին ընտիր ճաշակի տեր է, տաղանդավոր, վառ երևակայությամբ, զգայուն, գրելու արվեստին և հռետորական ձևերին նա տիրապետում է կատարելապես և գործ է ածում վարպետորեն ու հեղինակաբար: Նա քերթող է այս բառի հին՝ ածում վարպետորեն ու հեղինակաբար: Նա քերթող է այս բառի հին՝ տաղանդից, զուրկ է երևակայությունից ու զգացմունքից: Նա սովորել է գրելու արհեստը և հռետորական ձևերը, բայց անընդունակ է տեղին գործածելու. նա խոսքի արհեստավոր է, վատ արհեստավոր, նա քերթող է այս բառի այժմյան գծում նշանակությամբ:

Մովսես Խորենացուն և Մովսես քերթողին նույնացնել անկարելի է, մատենագրական տեսակետից ուղղակի հանցանք է:

Ակադ. Մանանդյանի վերջին թեզիսն է.—«Հայոց Պատմութեան» վերնագրում «Մովսես Խորենացի անունը հնդկական իսկական անունն է»։ Այս թեզիսը ոչ մի կասկած չէ հարուցանում այն բանասերների մեջ, որոնք Մովսես Խորենացուն համարում են 5-րդ դարի հեղինակ և Սահակ-Մեսրոպի աշակերտ։ Բայց այն բանասերները, որոնք Հայոց Պատմությունը համարում են ուշ ժամանակի գործ (8-րդ—9-րդ դարերի), մեծ դժվարության են հանդիպում այդ գործի հեղինակին որոշելու և անվանելու ժամանակ։ Եթե Հայոց Պատմության հեղինակն ուշ ժամանակ է ապրել, բայց կեղծել է իրեն իբրև 5-րդ դարի հեղինակ, ապա ինչպես բացատրել Մովսես Խորենացի անունը։ Երեք միջոց կա սրա համար.

1. Ենթադրել, թե գրքի իսկական հեղինակի անունը մեզ անհայտ է, բայց այդ անծանոթ հեղինակն իր գործը վերագրել է 5-րդ դարում ապրող, Սահակ-Մեսրոպի աշակերտ Մովսես Խորենացուն։ Բայց այս միջոցից խուսափում են հիշյալ բանասերները, որովհետև այս դեպքում բնականաբար հարց կծագեր, թե ով է այդ նշանավոր, իսկական Մովսես Խորենացին, որի անունով Պատմության անհայտ հեղինակը կամեցել է իր գրվածքը հեղինակավոր ու վավերական դարձնել, քանի որ այդպիսի նշանավոր մատենագրի մասին ուրիշ ոչ ոք տեղեկություն չունի, և նրա գրվածքները ոչ ոքի հայտնի չեն։ Դուրս կգար կրկնակի անտեղություն. մի կողմից՝ 5-րդ դարի մի նշանավոր հեղինակ, Մովսես Խորենացի, որի գրվածքներն անհայտ են, իսկ մյուս կողմից՝ 8-րդ—9-րդ դարերում երևան եկած մի նշանավոր մատենագրական երկ, որի հեղինակն անհայտ է։ Շատ հասկանալի է, որ այս դեպքում մենք Հայոց Պատմությունը կվերագրենք 5-րդ դարի այդ նշանավոր հեղինակին, Մովսես Խորենացուն, իսկ այս եզրակացությունը հակասում է այդ բանասերների կարծիքին, Հայոց Պատմության ուշ ժամանակի գործ լինելու մասին։

2. Ենթադրել, թե Հայոց Պատմության հեղինակը մի այլ անձ է (Ղևոնդ կամ ուրիշ մեկը), իսկ «Մովսես Խորենացի» անունները մտացածին են, այս անունները կրող անձ չէ եղել։ Այսպես էլ վարվում է Ն. Ալիսյանը, ենթադրելով, որ Ղևոնդ Երեցը գրել է Հայոց Պատմությունը, իսկ նրա մահից հետո մի այլ մարդ

հնարել է Մովսես Խորենացի անունները (տես վերը, էջ 19)։ Այս ենթադրության անտեղությունն այնքան ակնհայտ է, որ կարիք չկա բացատրություն։

3. Ենթադրել, թե Հայոց Պատմության հեղինակն իսկապես կոչվելիս է եղել Մովսես Խորենացի, բայց նա ապրել է ոչ թե 5-րդ դարում, այլ 9-րդ դարում։ Այս միջոցին էլ դիմում է Ակադ. Մանանդյանը՝ և նա այլ կերպ չէր էլ կարող վարվել, քանի որ նրա համար պարզ է եղել, որ Աշխարհացույցը և Հայոց Պատմությունը անշուշտ միևնույն հեղինակի գործ են, իսկ Աշխարհացույցի «Բոլոր» օրինակներն էլ¹, ինչպես և Հայոց Պատմությունը կրում են Մովսես Խորենացի անունը։ Բայց այս դեպքում ինչպես բացատրել այն մեծ հակասությունը, որ Մովսես Խորենացին այս անունով ապրելով ու գրելով 9-րդ դարում՝ Պատմության մեջ իրեն ձևացնում է Սահակ-Մեսրոպի աշակերտ, ողորմ է նրանց մահը, նրանց գերեզմանի վրա ողբ ասելով՝ ողորմելի հառաչում է և այլն։ Ակադ. Մանանդյանն այս հակասությունը բացատրում է նրանով, որ «Խորենացին թեև իր Պատմությունը հորինել է իր սեփական անունով, սակայն հետտրական բարաոնություն Մովսեսին»... «Խորենացու Պատմությունը, որ այժմ մեզ թվում է կեղծված ու խարդախված, ըստ երևույթի, գրված է պատմագրության հետտրական բացառիկ ու հատուկ ձևով, որ կարող էր թերևս հանդուրժելի համարվել Խորենացու ժամանակ» (այսինքն 9-րդ դարում) (էջ 175)։

Թող «բարաոնությունները», «գիմառությունները» և այլն մատենագրական սովորական ձևեր լինին հետտրական սքոլաստիկայի վերածնության այս շրջանում, 9-րդ և 10-րդ դարերում (էջ 175). բայց ակադ. Մանանդյանը պարտավոր էր գտնել մի օրինակ ցույց տալ, թեկուզ հայ, թեկուզ օտարազգի գրականություն մեջ՝ բարաոնական ձևով գրված այնպիսի մի ընդարձակ աշխատության, ինչպիսին է Հայոց Պատմությունը։ Այսպիսի բարաոնություն, ուրիշ խոսքով ասելով, աշխարհ խաբեբայություն, եղակի մի երևույթ է դառնում ինչպես մեր, այնպես էլ ընդհանուր գրականության մեջ։

¹ Ինչպես վերը տեսանք (էջ 24, ծան.), Աշխարհացույցի հնագույն օրինակները Մովսես Խորենացու անունը չեն կրում։

Թող Հայոց Պատմութիւնը կեղծված, խաբարխւած լինի—
նով է խանգարում մեզ այսպէս բնորոշելու այդ գործը, քանի որ
մեռած հեղինակը չէ կարող իր անվանարկված պատիւը պաշտ-
պանել, բայց ինչպէս կհամարձակվեր Մովսէս Խորենացին, որ
ապրում էր 9-րդ դարում, որին ամենքը ճանաչում էին, հետը
նիստ ու կաց ունեին, գրվածքները կարգում էին, աղբականնե-
րին ծանոթ էին, ինչպէս կհամարձակվեր նա իր գրքում իրեն
ցույց տալ իբրև հորս հարյուր տարի առաջ ապրած մարդ: Չէ՞
որ նրա սուտն ու խաբեքայութիւնը բոլոր ժամանակակիցներին
հայտնի կդառնար, և նրա Պատմութիւնը, իբրև կեղծիք, ընդմիջա-
կվարկարեկվեր: Եվ ինչ նպատակով այդ տաղանդավոր ու լուրջ
հեղինակը պետք է դիմեր այսպիսի մի խաբեքայութեան, կեղծի-
քի, որ նրան պետք է հարկադրեր՝ Պատմութեան բոլոր ընթաց-
քում կեղծարարի դեր կատարել այնպէս, որ կեղծիքը չբացվի,
այն ինչ այդ կեղծիքը պարզ և հայտնի էր ժամանակակիցներին:

Ակադ. Մանանդեանի այս վերջին թեզիսն էլ նույնքան
ապացուցված է, որքան նրա նախընթաց թեզիսները, և նույն-
քան համոզիչ, որքան Ն. Ալիքյանի՝ Մովսէս=Մովսէս մարգարե,
և Խորենացի=Խորեն անցի բացատրութիւնը:

Մ. Խորենացու բառապաշարը: Ակադ. Մանանդեանի իբրև
իր քննութեան հավելված գրել է մի հետաքրքրական ուսումնա-
սիրութիւն՝ «Մովսէս Խորենացու բառապաշարը» վերնագրով:

Ակադ. Մանանդեանի իր «Հունարան դպրոցը» հմտալից
աշխատութեան մեջ ժամանակագրական երեք շրջան է որոշում
այս դպրոցի գործունեութեան. առաջին շրջանն սկսվում է 5-րդ
դարի վերջերից և տևում է մինչև 6-րդ դարի կեսը. երկրորդ
շրջանը բռնում է 6-րդ դարի երկրորդ կեսը, իսկ երրորդ շրջանը
բռնում է գրեթե ամբողջ 7-րդ դարը: Արդ՝ քննելով Խորենացու
Հայոց Պատմութեան մեջ գործածված բառամթերքը՝ նա բե-
րում է—

100 բառ, որոնք պատահում են հունարան դպրոցի առաջին
շրջանում (էջ 181—190)։

30 բառ, որոնք բարդված են մասնիկներով հունարան ոգով
(որոնցից 24-ը պատահում են դարձյալ հունարան դպրոցի առա-
ջին շրջանում) (էջ 194—198)։

14 բառ, որոնք պատահում են հունարան դպրոցի հաջորդ

երկու շրջաններում (որոնց վրա ավելացնելու է և 6 բարդու-
թիւն հունարան ոգով) (էջ 192—194)։

10 բառ, որոնք հունարան դպրոցի բառամթերքում չեն պա-
տահում, թեպետ հունարան ոգով են կազմված (էջ 198—9)։

34 բառ, որոնք հունարան չեն, բայց թվում են նոր, որով-
հետև պատահում են է—Թ դարերի երկերում (էջ 199—206)։

Այս բառերի գործածութիւնը Հայոց Պատմութեան մեջ իրա-
վունք ե տալիս ակադ. Մանանդեանին դառն այսպիսի եզրակա-
ցութեան. «Որ Խորենացու հունարան լեզուն անկարելի է իջեց-
նել հինգերորդ դար՝ այդ այնքան պարզ է, որ ըստ իս չէ կարող
այլևս լինել վեճի առարկա: Միանգամայն պարզ է, որ Պատմու-
թեան բառապաշարի վրա որոշ ազդեցութիւն են ունեցել, բայց
Պիտոյից—Փիլոնյան թարգմանութիւններից, նաև հունարան
թարգմանութիւնների մյուս երկու խումբը: Իսկ ամենից կարեւորն
այն է, որ նույն այդ բառապաշարի մեջ նկատելի են անգամ
ավելի ուշ շրջանի բառեր, որոնք չեն հանդիպում ութերորդ դա-
րից առաջ և սովորական են ու ընդհանուր տարածված. Բազրա-
տունյաց շրջանի միջին հայերենում: Ուրեմն՝ Խորենացու Պատ-
մութեան լեզվի քննութիւնը վոչ միայն խոչընդոտ չէ նրա ժա-
մանակի մեր որոշման, այլև ուշագրավ մի նոր ապացույց է, որը
հաստատում է իր հերթին Խորենացու առեղծվածի վերոհիշյալ
լուծումը» (էջ 207)։

Եւ չեմ մտնի առանձին-առանձի բառերի քննութեան մեջ,
որ շատ երկար կլիներ, մանավանդ, որ այդ գործը կատարել են
ուրիշները: Եւ ավելի ընդհանուր կերպով կխոսիմ և Խորենացու
հունարան լեզվի հարցը կպարզեմ մի ուրիշ տեսակետից:

Հունարանութիւնը, վոր այնքան խոր ազդեցութիւն ու-
նեցավ մեր լեզվի վրա, ամենամեծ հեղաշրջումն էր, որին են-
թարկվեց մեր գրական լեզուն ամենահին ժամանակից մինչև
մեր օրերը: Ե՞րբ և ինչ պայմաններում ծագում առավ այդ հզոր
շարժումը, ով կամ ովքեր էին նրա հեղինակները—սրանք կարևո-
րագույն հարցեր են լեզվի և մատենագրութեան համար, բայց
որոնք շոշափված չեն ակադ. Մանանդեանի «Հունարան դպրոցը»
աշխատութեան մեջ: Նա բավականանում է միայն հերքելով Դա-
վիթ Անհաղթի մասին եղած ավանդութիւնը, բայց իր կողմից
որեւէ պատասխան չէ տալիս այս հարցերին: Նա հունարանու-

թյունը դիտում է իբրև մի տվյալ եղելություն և աշխատում է հունարան դպրոցի գրական արտադրությունների փոխհարաբերությունը որոշել ժամանակագրական և մատենագրական տեսակետներից: Հունարանությունյան ծագումը նա գնում է 6-րդ դարի սկզբներում, կամ 5-րդ դարի վերջերում, հիմնվելով Ղազար Փարպեցու թղթում հիշատակված փիլիսոփոս Մովսեսի անվան վրա, նկատելով, որ փիլիսոփոս կոչումը տրվում էր հունարան դպրոցի գրողներին, իսկ թե ով է այդ փիլիսոփոս Մովսեսը՝ գրանույ էլ չէ զբաղվում: Սա շատ քիչ է կամ ոչինչ է վերը դրված հարցերին պատասխանելու համար:

Բավարար պատասխան վերը դրված հարցերին, որքան ես ծանոթ եմ մեր հին գրականության, մենք կարող ենք գտնել միայն Պորենացու Պատմության մեջ: Նա պատմում է (Գ., 61), թե երբ Նփեսոսի ժողովից հետո (431) Եզնիկն իր ընկերներով վերադարձան Բյուզանդիոնից և իրենց հետ բերին ս. Գրքի հունարեն մի ընտիր օրինակ, Սահակը և Մեսրոպը, այդ թարգմանիչների օգնությամբ, ձեռնարկեցին մի անգամ (ասորերենից) փութանակի թարգմանվածը նորից հորինել, նորոգել: Բայց որովհետև, շարունակում է Պորենացին, նրանք հմուտ չէին մեր արվեստին՝ գործը շատ կողմերից թերի էր դուրս գալիս: Այս պատճառով մեծն Սահակ ու Մեսրոպ մեղ ուղարկեցին Աղեքսանդրիա, «ի լեզու պանծալի, ի ստոյգ յօղանալ ձեմարանին»: «Մեք» բառը (մերում արուեստի, զմեզ առաքեցին) Պորենացին գործ է ածում ոչ թե իր անձի մասին, — այսպիսի դեպքում նա սովորաբար եզակի ձև է գործածում, այլ մի խումբ ընկերների մասին:

Ողբի մեջ, երբ պատմում է իրենց վերադարձը և հուսահատությունը՝ շատ որոշ կերպով երևում է այս, երբ մեք և ես ձեռքը շարունակ փոփոխակի գործ են ածվում («Մինչ նոքա զմեքն յուսային դարձ եւ պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս»... և այլն (տես վերը, էջ 11):

«Արվեստ» բառը չէ նշանակում հունարենի դիտություն, քանի որ թե Սահակը, թե Մեսրոպը և թե Բյուզանդիոնից իր ընկերներով վերադարձած Եզնիկը լավ գիտեին այդ լեզուն, ինչպես շատ վկայություններ կան: Արվեստ, կամ ինչպես Ողբի մեջ կոչված է, ամենիմաստ արվեստ, ավելի ընդարձակ նշանակություն ունի, — լեզվի գիտական ուսումնասիրություն, քերական

նություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, որ հին ոճով փոչվում է քերթողական արվեստ և նոր ոճով՝ ազատական արվեստ, այսինքն այն դիտությունը, որ չէին սովորած Սահակը, Մեսրոպը և Բյուզանդիոնում սովորած թարգմանիչները, որոնք հունարենին հմուտ էին գործնականապես միայն:

Ուրեմն մի խումբ ընդունակ հայ երիտասարդներ ուղևորվում են Աղեքսանդրիա բարձրագույն քերթողական ուսում ստանալու: Քանի՞ հոգի էին դրանք և ովքեր էին — Պորենացին չէ գրում¹, բայց որ ինքն այդ խմբի մեջ գլխավոր և լավագույն ուժն է եղել՝ երևում է Ողբի մեջ հեղինակի՝ իր մասին ասածներից. «Ո՞վ ուրախացի ընդ յառաջադիմութիւն աշակերտիս, ով զհայրականն բարբառեսցի զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդոյս... մինչ նոքա զմերն յուսային դարձ և պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս եւ կատարեալագոյն յարմարությամբ»: Նրանք ուղևորվեցին Նփեսոսի ժողովից հետո, մի երկու տարի անց (մինչև որ թարգմանությունը նորոգելու ձեռնարկեին, համոզվեին, որ գործը թերի է դուրս գալիս), ուրեմն մոտավորապես 432—3 թվականներին: Գնացողները երեւի պետք է լինեին մոտ 20—22 տարեկան հասակում և Հայաստանում անշուշտ գործնականորեն սովորած պետք է լինեին փոքր ի շատե հունարեն:

Աղեքսանդրիայում նրանք լիովին ուսումնասիրում են քերթողական արվեստը, երկար ժամանակ, գիտական և գործնական աշխատանքների ընթացքում, լիովին ընտելանում են հունարեն լեզվին, նրա ոգուն, քերականական և բառակազմական հատկություններին, նախդիրներով կազմված բառերի նրբություններին: Նրանք տոգորվում են հունարենով, սովորում են հունարեն մտածել և իրենց հունարեն մտածածը հայերեն արտահայտել. — մի հոգեբանական երևույթ, որ միշտ նկատվում է երկար ժամանակ հայրենիքից դուրս ապրող, օտար լեզվի և գրականության մթնոլորտում ուսանող մարդկանց մեջ: Բնական է, որ այս կրթված ու հայրենասեր գրական գործիչները միտք կհղանային ոչ միայն հայերին ել մասնակից անել քերթողական արվեստի ուսման,

¹ Թերևս սրանցից լինեին «Գորգի, Բանան եւ ոմն Դաւիթ», որոնց անունները հիշում է Պորենացին մի ուրիշ տեղից (Ա., 6):

հայերենի վերածելով համապատասխան գրքեր, այլև ռեֆորմի ենթարկել հայերեն լեզուն, պատվաստելով նրան մասնիկներով բարդություններ կազմելու հատկությունն ու հունարենի համաձայնության ընտիր ձևերը¹։

Գրական գործունեության այսպիսի ծրագրով թարգմանիչներն Ալեքսանդրիայից վերադարձան Մեսրոպի մահից հետո, ուրեմն 439-ից հետո, բայց թե երբ՝ հայտնի չէ, գուցե բավական ուշ։

Ահա, բարձրագույն ուսում ստացած, քերթողական արվեստին հմտացած, հունարեն լեզվին ու նրա ոգուն սիրահար, գրական ու ռեֆորմատորական գործունեության եռանդով ոգևորված այս հեղինակավոր խումբն էր, որ հիմնադիր եղավ մեր մեջ հունարան գալրոցին, որի նախընծա վաստակները երևան կարող էին դալ և եկան 5-րդ և 6-րդ դարերի հայ գրականության մեջ։

Սրանց թվից մեջ լավագույն ուժն էր հանդիսանում Սուսանյանցին, ու թիսուհական թվականների սկզբին գրում էր. «այլ ծեր և հիւանդոտ եւ անպարապ ի թարգմանութեանց», ինչ որ անգամայն արդարապես է վերը բերված ժամանակագրական մով, որովհետեւ եթե նա 433 թվին 20—22 տարեկան լիներ՝ ապա 483-ին կլիներ 70—72 տարեկան։ Թրակացու Գերականությունը, որ կոչված է Արուստ Դիոնիսիայ քերականի, Պիտոյից գիրքը, Փիլոնի ճառերը, Հայոց Պատմությունն այս ժամանակաշրջանի գրական արդյունքներ են։

Այս հունարան գալրոցը, որի հիմնադիրներն ու առաջին գործիչները եղան Ալեքսանդրիայում ուսած վերոհիշյալ թարգմանիչները, երկարատև գոյություն պահպանեց Հայաստանում, 5-րդ դարի կեսերից սկսած մինչև 7-րդ դարի վերջը, և ունեցավ իր աստիճանական զարգացման շրջանները։ (Տես Հ. Մանանդյան, «Հունարան գալրոցը», էջ 14, 102, 111, 223 և այլն)։ Սկզբում հունարանությունը, բառակերտության և քերականական

¹ Մասնիկները միջոցով բառեր կազմելու հունարենի հատկությունը յուրացրել էր մեզանից առաջ լատիներենը, իսկ մեզանից հետո՝ սլավոներենը—առևերենը։

² Ինչպես շատերից նկատված է՝ Եղիշեն, անտարակույս, օգտվել է Փիլոնից, որ հունարան գալրոցի առաջին շրջանում է թարգմանված։

հունական ձևերի ու հունական ոճի գործածությունն նկատմամբ եղել է ավելի չափավոր, այնպես որ առաջին շրջանի հունարան գրվածքներում նկատվում է ընտիր հայկաբանություն՝ հունաբանություն խոսնա. այնուհետև հունարանությունն սկսել է հետզհետե ավելի և ավելի խորանալ, այն աստիճան, որ հայերեն գրվածքն այլևս անհասկանալի է դառնում նույնիսկ գրաբար լավ գիտցողին. հարկավոր է լինում նրանց թարգմանությունը տառացի թարգմանել հունարենի և այս հունարենի միջոցով հասկանալ հայերեն թարգմանությունը։ Այս երևույթն էլ բնական է, և սրա օրինակը տեսնում ենք այժմ էլ մեր լեզվում, որի մեջ օտարաբանությունը, և մասնավորապես ռուսաբանությունը, դողդոջուն քայլերով ու զգուշությամբ սկսվելով՝ ներկայումս շատ է զարգացել և երբեմն հասնում է անհասկանալի դառնալու աստիճանի ծայրահեղություն։

Հունարան գալրոցի այս հիմնադիրների և առաջին գործիչների շարքին է պատկանում Մովսես Պորենացին և ոչ թե 9-րդ դարի հունարան գրողների։ Սրան աղացույց է ծառայում Հայոց Պատմությունն իր լեզվի ու ոճի հատկություններով։

Պորենացու Պատմության լեզվի ընդհանուր նկարագիրն է՝ ճոխ և ընտիր հայկաբանություն, որի մեջ տեղ-տեղ ցրված են հունարանության տարրեր, ինչպես կանաչ դաշտի վրա գույնըղ-գույն ծաղիկներ, որոնցով դաշտը զարդարվում ու երբեքանգ է դառնում, առանց սակայն ընդհանուր կանաչությունը կորցնելու։ Պատմության այն հատվածները, որոնք զերծ են հունարան տարրերից—և այսպես է նրա մեծագույն մասը—այնքան ընտիր հայերեն են, դասական հայերենի ոգով, որ դժվար է զանազանել հայկաբանության լավագույն տիպարների լեզվից։ Այս մասերում Պորենացու լեզվի զանազանությունը Եզնիկի լեզվից կայանում է իսկապես նրանց ոճի մեջ, հեղինակների խառնվածքի մեջ։ Եզնիկը խորհուն է և հանդարտ, Պորենացին բանաստեղծ է և աշխույժ, բայց երկուսի էլ լեզվի աստղծը, բառերն ու քերականությունը նույնն են։ Այսպիսի լեզու 9-րդ դարում փնտռելը դուր աշխատանք է, իսկ Պիտոյից գրքի վերջաբանի լեզվի հետ նրան նույնացնելը նշանակում է լեզվային հատկությունները որոշելու կարողության բացակայություն։

Պորենացու հունարանությունը շատ չափավոր է ու ճաշա-

կազմուք Նա չէ խրտանեցնում ընթերցողին, ընդհակառակը, հեշտո՞թյամբ ու հաճությամբ է ընդունվում: Նրա գործածած հունարան բարդությունների մեծագույն մասը դեռ այսօր էլ ընդհանուր գործածական են մեր այժմյան գրական լեզվում: Իսկ նրա հու՞նարան շարադասության ձևերը (բացարձակ սեռական, հայցա՝ կան հոլովով ենթակա անորոշ դերբայի հետ, հայցական սեռի խնդիր կրավորական բայի մոտ, հարաբերականի և հարաբերյալի տեղափոխություն, երկրորդական նախադասությունների տեսակ՝ տեսակ կրճատումներ և այլն) այնքան սովորական ու ընտել դարձան հաջորդ հեղինակների համար, որ հայերեն քերականության ուսման մեջ մտան, իբրև հայերենի համաձայնության հատկո՞թյուններ: Ակադ. Մանանդյանը Հայոց Պատմության մեջ գտել է, ինչպես վերը տեսանք, 154 հունարան բառեր ու բարդո՞թյուններ, որոնք ցրված են Պատմության 277 էջերում, այսինքն մի քիչ ավելի, քան երկու էջում մի բառ: Այնինչ Պիտոյից գրքի վերջաբանը երկու ոչ լրիվ էջում ունի 43 հունարան բառեր, որոնց թվում հունական ոգով բարդություններ 20 հատ (վերա՞թեկ, հանդիպել, ըմբերանել, ներազրել, արտադատել, համատոհ՝ մեայ, ենթակայ, համանդամայն, առադրել, համաչուել, հոմերամ, ներանձն, արտաքաղել, բաղադրել, պարատեսող, համանման, ներ՝ գոյ, բացադրել, հոմազն, արտայայտել), ուրեմն մի էջում 22 հու՞նարան բառ, որոնցից 10-ը հունարան բարդության նախդիրնե՝ րով: Կարելի՞ բան է այս երկու լեզուն հունարանության կողմից իրար հետ համեմատել, մանավանդ թե նույնացնել:

Սորենացու Պատմության հունարանությունը հունարան
դպրոցի երկրորդ և երրորդ շրջանի հետ համեմատելն ավելորդ եմ
համարում. սրանց մեջ հունարանությունն այնպիսի ծայրահե-
ղության է հասնում, որ հայ կարդացողի համար անհասկանալի
է դառնում—սրանց մեջ ոչ միայն չկա հայկաբանություն, այլև
չկա նույնիսկ հայերեն լեզու, այլ կան հայերեն բառեր, մեծ
մասը ձուլված հունական կաղապարի մեջ: Եթե կամենայինք
որևէ համեմատություն անել Սորենացու և այս երկու շրջանի
հունարանությունների միջև՝ պետք է ասեինք. Սորենացու հու-
նարանությունն այնպես է հարաբերում Պիտոյից գրքի վերջա-
բանի հունարանության, ինչպես այս վերջինս հարաբերում է
հունարան դպրոցի երկրորդ և երրորդ շրջանի հունարանության:

Վերջաբանն անհամեմատ ավելի հունարան է, քան խորենացու
Պատմությունը. երկրորդ և երրորդ շրջանների թարգմանո-
ւթյուններն անհամեմատ ավելի հունարան են, քան Պրտոյից
գրքի վերջաբանը:

Սորենացու հունաբանությունը սահմանափակվում է երկու գավառում — լատակագմության մեջ (հունական կաղապարով և մասնիկներով բարդություններ հունական ոգով), և շարագասության մեջ, որոնց մի քանի օրինակը վերը բերի. բայց նա միանգամայն զերծ է հունաբանությունից ստուգաբանական ձևերում, որոնք անխափր պատահում են հունաբան գպրոցի բոլոր երեք շրջաններում էլ, օրինակ՝ սեռական հոլով ք մասնիկով (մարդոցը, մարդոցը), արական և ներգոյական հոլովներ ռւմ մասնիկով (ի տեսակում — նենթակայում), ներգոյական հոլով ն, ըն, նեք մասնիկներով (նամանակի, նը մեզ, ըն մարմնի, ի ներ անձինդ), երեք սեռի համար «մի» բառի զանազան գործածություններ (արական եզ, իգական մու, չեզոքական մի), իգական սեռի ցուցական դերանուններ (սա, սէ, սերա, նա, նէ, ներա), անցյալ հարակատարի ձև է նախադիր մասնիկով (կոփել — էկոփել, մեռանել — էմեռանել), կրավորական անցյալ դերբայի անսովոր հոլովում (սիրեցել), կրավորական անցյալ դերբայի անսովոր հոլովում (սիրեցելոց, ասացելոց), և զանազան խորթ հոլովական ձևեր — երկնայինց, մի ըստ միովէց, ի ներ զինչէութն, և այլն: Ուրեմն, Սորենացու լեզվային հմուտ՝ ճաշակը և առողջ բնազդը թույլ չեն տվել լեզվի օրգանական մասերին և հատկություններին դեպչել, ինչ որ սակայն անխափր կերպով արել են հունաբան գպրոցի մյուս ներկայացուցիչները:

Վերջապես, ակադ. Մանանդյանի բերած բառացուցակը պեր-
ճախոս ապացույց է, որ խորենացիին, իբրև հունարան մատենա-
գիր, դասվելու է անշուշտ այդ դպրոցի առաջին շրջանի մատե-
նագիրներին շարքը: Արդարև, այն հարյուր բառը, որ հայոց
դասական գրաբարի մեջ չեն պատահում՝ ընդհանուր են խորե-
նացու և առաջին շրջանի թարգմանիչների համար. այն երեսուն
հունարան բառակազմությամբ բառերից ունյապես ընդհանուր են
խորենացու և առաջին շրջանի թարգմանիչների համար քսան և
չորսը, այնպես որ այդ երկու խումբ բառերի վերաբերմամբ խո-
րենացին անպայման դասակից և ժամանակակից է հունարան
դպրոցի առաջին շրջանի թարգմանիչներին: Այս բանն ավելի

ցայտուն կերպով կերևար, եթե ակադ. Մանանդյանը բերած լիներ այն բազմահարյուրավոր բառերն ու հունարան բարդությունները հունական դպրոցի երկրորդ և երրորդ շրջաններից, որոնք խորհնացու մոտ չեն պատահում: Եթե այդ բազմաթիվ և մեծ մասամբ խժժական բառերի կողքին դնենք այն վեց հունական բարդությունները, որոնք ընդհանուր են խորհնացուն և այս երկու շրջանների թարգմանիչներին՝ չենք կարող ուրիշ կերպ դատել քան այն, որ այդ վեց բարդությունները խորհնացին չէ վերցրել երկրորդ կամ երրորդ շրջանի թարգմանիչներից, այլ ինքը կազմել է անկախաբար. կարծում եմ՝ եթե հունարան դպրոցի երեք շրջանների մատենագիրներն իրավունք ունեին հազարավոր բառեր ու հունական ոգով բարդություններ կազմել՝ այդպիսի իրավունքից զուրկ չէր և խորհնացին, մանավանդ որ ավելի ևս իրավունք ունեւ, լինելով միաժամանակ քաջ հայկաբան ու քաջ հելլենաբան և ունենալով զարգացած ճաշակ ու անկախ միտք:

Այսպիսով, քննելով ակադ. Մանանդյանի բերած բառամթերքը և համեմատելով խորհնացու հունարանությունը երեք շրջանների հունարանության հետ՝ ես գալիս եմ բոլորովին հակառակ եզրակացության, այսինքն՝ որ խորհնացու հունարանությունն անհամեմատ ավելի մոտ է հունարան դպրոցի առաջին շրջանի հունարանության, քան հաջորդ երկու շրջանների, և որ խորհնացու հունարանության համեմատությունն ըստ քանակի և որակի ապացույց է, թե Հայոց Պատմությունը գրված է հունարանության սկզբնական շրջանում մեր մեջ, այն է՝ 5-րդ դարի վերջերում:

Չեմ ուզում լռությամբ անցնել ակադ. Մանանդյանի ուրիշ երկու դիտողությունների մոտով, որոնցով նա կամենում է ապացուցել խորհնացու կախումը երկրորդ և երրորդ շրջանի գրվածքներից, ուրեմն ուշ ժամանակի հեղինակ է:

Առաջին դիտողությունը վերաբերում է խորհնացու հետևյալ հատվածին. «Ուրեք ուրեք գտեալ աշխատութեամբ, հաւաքեալ փոխեցին ի յոյն լեզու, որպէս զԱ. առ Ք, եւ զԶ եւ զԹ. առ Փ. եւ զԿ առ Ե եւ զՇ առ Թ: Եւ ժողովեալ զայսոսիկ արանց, զորոց եւ մեք զանուանսն հաւասարի գիտեմք՝ նուիրեցին ի փառս Հելլենացոց աշխարհին». (Ա., 2): Այս հանելուկային գրերը մեկնություն են գտնում Մանանդյանը իմաստասիրության թարգմանա-

կան գրվածքում հետևյալ կերպով. «...դժուականն Փլենիկեցիք գաին... դերաժտականն Թրակացիք, իսկ զԱստեղաբաշխականն Քազէացիք... իսկ զԵրկրաչափականն Եգիպտացիք» (Ման., գլ. Ժէ): Մանանդյանը գրեթե, ըստ ակադ. Մանանդյանի հետադատության, հունարան դպրոցի երրորդ շրջանում է թարգմանված, ուրեմն 7-րդ դարում. սրանից հետևելով ուրիշ պարզ է՝ խորհնացին, որ օգտվում է 7-րդ դարի գրվածքից՝ ավելի ուշ ժամանակի հեղինակ է:

Ես չեմ վիճում, որ խորհնացու մեջ ընդգծված խոսքերի և Մանանդյանը գրքից համառոտակի բերված հատվածի միջև կապ կա և որ Մանանդյանը գրքի հատվածը կարող է աղբյուր ծառայած լինել խորհնացու հանելուկային տառերին: Բայց ինձ թվում է, թե այստեղ մենք գործ ունինք մի սովորական ընդմիջարկության հետ: խորհնացին հանելուկներ չէ գործածում առհասարակ, ընդհակառակը, հանելուկային խոսքերը, այլաբանություններն աշխատում է պարզել, բացատրել (հմտ. ի Պարսից առասպելաց երկրորդ գլուխը, հայկական ժողովրդական վեպի առասպելների ճշմարտումը): Նա իր մեկենասին այդպիսի հիմար հանելուկ չէր առաջարկի: Ծարագրության կողմից էլ այդ նոտրագրված խոսքերը շատ հեշտությամբ կարող են նկատվել իբրև ընդմիջարկություն, քանի որ այդ խոսքերը դուրս գցելով՝ ծարագրության ընթացքում թերություն չի նկատվի: Այս ընդմիջարկությունը կատարված է խորհնացու Պատմության հին ձեռագրերից մեկում (մի մարդ այս տառերը գրել է իր օրինակի լուսանցքում. արտագրողը լուսանցքից փոխադրել է բնագրի մեջ) ածանցվել է այն մայր օրինակին (նեղակյումս կորած), որից ծագել են մեզ այժմ հայտնի բոլոր ձեռագիրները (տես խորհնացու Պատմության քննական հրատարակության առաջաբանը, հոգվ. 42, էջ Թ): Այսպիսի մի ուրիշ ընդմիջարկություն էլ եղել է Պատմության երրորդ գրքի 53-րդ գլխում. «Երեւութացեալ հոգւոյն աշաց Թաթ ձեռին աջոյ գրելով ի վերայ վիմի, Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Լ, զի որպէս ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն»: Այսպես էլ շատ անգամ տպվել ու թարգմանվել է խորհնացին և բազմաթիվ ենթադրությունների տեղիք տվել: Այնինչ համեմատությունից դուրս եկավ, որ այդ յոթը ձայնավոր գրերը միայն մի ձեռագիր ունի, իսկ մյուսները չունին, ուստի և իրավապես նրանք դուրս

զգլեցին քննական հրատարակութիւնից: Երկու դեպքերի դա-
նազանութիւնը սրանումն է միայն, որ առաջին ընդմիջարկու-
թիւնը կատարվել է հին ժամանակ, և այդ ժամանակից ուրիշ
ձեռագիրներ չունինք համեմատելու և ստուգելու համար, իսկ
երկրորդը կատարվել է նոր ժամանակ և ուրիշ ձեռագիրների հի-
ման վրա ուղղադրվում է:

Երկրորդ զիտողութիւնը վերաբերում է Խորենացու այս
խոսքին, թե «առաքինութիւն բանականին է խոհականութիւն»
(Ա., 1), որ, ահադ. Մանանդյանի ենթադրութեամբ, առնված է,
հավանորեն, Արիստոտելին վերադրված «Յադադս առաքինու-
թեանց» երկի հայերեն թարգմանութիւնից. — «Եւ է խոհեմու-
թիւն: առաքինութիւն բանականին», որ դարձյալ 7-րդ դարի
գործ է համարում ահադ. Մանանդյանը: Ես այստեղ փոխառու-
թիւնն չեմ նկատում: Այդ խոսքը, որի ընդհանուր իմաստն այն
է, թե բանականութեան արդյունքը կամ արտահայտութիւնը
խոհականութիւնն է, այնքան տարրական գաղափար է, որ Ալեք-
սանդրիայում ուսած և հունական փիլիսոփայութեան ծանոթ ան-
ձերի համար մի առած պետք է համարվեր, ինչպես հիմա մեղ
համար՝ երկու անգամ երկու = չորս խոսքը, և Խորենացին ինք-
նուրույն կերպով գործ է ածել այդ հունական առածն իր սեփա-
կան թարգմանութեամբ. նա գործ է ածում «խոհականութիւն»
բառը, որ շատ ավելի ճիշտ է, քան մյուս անհայտ թարգմանչի
գործածած «խոհեմութիւն» բառը:

*
* *
*

Ես կես առ կես հետևեցի ահադ. Մանանդյանի բոլոր թեզիս-
ներին ու զիտողութիւններին, որոնցով նա աշխատել է ապա-
ցուցել իր հիմնական միտքը, թե Խորենացու Պատմութիւնը
գրված է 9-րդ դարի երկրորդ կեսում, Բուդայի արշավանքներից
հետո: Իմ քննութիւնից երևում է, որ ահադ. Մանանդյանի թե-
զիսներից և զիտողութիւններից ոչ մեկը, և ոչ բոլորը միասին
վերցրած, չեն ապացուցում նրա հիմնական միտքը, ընդհա-
կառակը, նրանցից շատերն ապացուցում են արամաեզներն հա-
կառակը, այսինքն թե Հայոց Պատմութիւնը 5-րդ դարի գործ
է, գրված Սահակ-Մեսրոպի աշակերտ Մովսէս Խորենացու ձեռ-

քով: Արտաքուստ ճշմարտանման թվացող խաբուսիկ փաստերը,
որ ահադ. Մանանդյանը ճարտարորեն հավաքել ու դասավորել
է, կարող են համոզիչ թվալ նրանց, որոնք նրա այս աշխատու-
թիւնը հարեանցի կարգում անցնում են. բայց երբ մեկն այդ
փաստերը մի առ մի և մանրամասն զննում է՝ նրանք դուրս են
գալիս ոչ միայն անստույգ և անհավանական, այլև շատ անգամ
ուղղակի կոպտ են հեղինակի դեմ, բոլորովին այլ եզրակացու-
թեան են բերում: Այս պատճառով կարծում եմ, ես լիակատար
իրավունք ունիմ ասելու, թե ահադ. Մանանդյանի ներկա, հա-
մենայն դեպս խիստ հետաքրքրական, աշխատութեան մեջ Խորե-
նացու աւելի քան լուծված չէ:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Տ

Իմ այս գրվածքի սկզբում ես քաղվածքներն բերի ն. Ալի-
սյանի փաստերն ու տեսակետները (առանց քննելու, որ իմ ծրա-
գրից զուրս էր և որին կարիք էլ չկար), հետո մանրամասն քննե-
ցի ահագ. Մանանդյանի թեղիսներն ու զիտողությունները: Այս
երկու հեղինակների միջև մեծ նամանություն կա — երկուսն էլ
անպայման համոզված են, որ Խորենացու Պատմությունն ուշ
ժամանակի գործ է, մի գրական կեղծիք, և երկուսն էլ աշխա-
տում են մի հարմար ժամանակաշրջան գտնել մեր պատմության
ու գրականության մեջ՝ որտեղ և երբ կարելի լինեք գետեղել
Հայոց Պատմությունը և նրա անհայտ՝ ոչ Սահակ-Մեսրոպի աշա-
կերտ հեղինակին: Մեկն այդ ժամանակաշրջանը որոշում է 9-րդ
դարի սկիզբը, մյուսը՝ 9-րդ դարի երկրորդ կեսի սկիզբը: Երկուսն
էլ գործ են դնում ամեն հնարավոր, նույնիսկ բռնազրոսիկ մի-
ջոցներ՝ իրենց տեսակետները պաշտպանելու համար: Բայց եր-
կուսին էլ չէ հաջողվում:

Այս երեւոյթը խրատական է, որից պետք է հանել համա-
պատասխան եզրակացություն: Երկու հեղինակներն էլ, միևնույն
տեսակետն ունեցող, երկուսն էլ կատարելապես հմուտ 6—9-րդ
դարերի Հայոց պատմության և գրականության, որոնում են այս
ժամանակամիջոցում ամենահարմար տեղը՝ Հայոց Պատմությունը
տեղավորելու, երկուսն էլ օգտվում են պատմական, աշխարհա-
գրական, մատենագրական և լեզվաբանական աղբյուրների ընձե-
ռած բոլոր զենքերով, ամեն ջանք գործ են դնում իրենց տեսա-
կետը պաշտպանելու, բայց երկուսին էլ չէ հաջողվում: Մա իրա-
վունք է տալիս հետեցնելու, թե այսպիսի ջանքեր, եթե այսու-
հետե էլ լինին, նույնքան անհաջող կլինին, ինչպես այս երկուսը,
և, հետևաբար, Հայոց Պատմությունը և նրա հեղինակ Մովսես
Խորենացուն դարձյալ պետք է տանել 5-րդ դարը, ինչպես նրանք

ձանաչված էին ավելի քան հազար տարի, և որտեղից նրանք,
վերջին մի քանի տասնամյակների միակողմանի քննադատու-
թյան շնորհիվ իջեցվեցին ներքև: Այս պատճառով ես հարկ եմ
համարում վերստին արծարծել այս տեսակետը նոր լուսաբանու-
թյուններով՝ Խորենացու Պատմության և անձի վերաբերմամբ:

Ա. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԵԼ Է ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒՄ

Այս թեղիսն ապացուցվում է բազմաքանակ և բազմատե-
սակ փաստերով, որոնք բոլորը նույն կետին են հանդում և գե-
ղեցիկ կերպով ներքին համերաշխություն ունին: Այս փաստերը
Խորենացու քննադատներն անտես են արել, որովհետև սրանք
հակասում են իրենց այն համոզմունքին, թե Հայոց Պատմությունը
ոչ թե 5-րդ դարի, այլ ավելի ուշ ժամանակի գործ է: Բայց մի
մատենագիր ֆենել միայն մի տեսակետից, և աչքաքող անել այդ
տեսակետին հակասող փաստերը — սա միակողմանի ուսումնասի-
րություն է, որի հղրակացությունները, բնականաբար, կարող են
սխալ լինել:

Ես պետք է աշխատիմ այստեղ համախմբել այն փաստերը,
որոնք խոսում են հօգուտ այն բանի, որ Հայոց Պատմությունը
և նրա հեղինակ Մովսես Խորենացին պատկանում են 5-րդ դարին,
միևնույն ժամանակ անտես չանելով նոր քննադատության երևան
բերած փաստերը, որոնք հակառակ են այս տեսակետին: Իհարկե,
անշնորհակալ գործ է՝ այնքան բազմաթիվ քննադատների կողմից
վարկարեկված, կեղծիք հայտարարված մի գրական երկ պաշտպա-
նելը, ավանդական կարծիքի կողմնակից հանդիսանալը: Այսպիսի
մարդկանց համար պատրաստ են «ավանդապահ», «հնամուլ», «պահ-
պանողական» և նման հորջորջումներ: Բայց ես չեմ կարող
թագցնել, ինչ որ իմ խորին համոզմունքն է, չեմ կարող ժամա-
նակակից հոսանքին հետևող ձեռնալ՝ երբ այդ հոսանքը ես սխալ
եմ համարում:

Սկսում եմ Խորենացու կենսագրությունից, որի համար
գլխավոր նյութը մատակարարում է ինքը՝ հեղինակը: Նա պատ-
մում է, ինչպես վերը հիշեցինք, թե երբ Եփեսոսի ժողովից հե-
տո Սահակ կաթողիկոսը Մեսրոպի հետ ձեռնարկեցին ս. Գրքի

փութանակի կատարված թարգմանությունը նորից թարգմանե-
լու կամ նորոգելու հունարեն ընտիր օրինակից՝ գործը շատ կող-
մերից թերի էր դուրս գալիս, որովհետև նրանք «անգէտք էին մե-
րում արուեստի»: Ուստի երկու վարդապետները նրան՝ Մովսե-
սին մի քանի ընկերներով ուղարկեցին Ալեքսանդրիա, «ի լեզու
պանծալի, ի ստոյգ յօգանալ ճեմարանին»: Այնտեղ տարիներ դե-
գերելով, արվեստներին կատարելապես վարժվելով՝ վերադառնում
են Հայաստան, երբ Սահակն ու Մեսրոպն արդեն վախճանված
են լինում: Հայաստանում նա լավ ընդունելություն ու հանգիստ
չէ գտնում, ենթարկվում է ծաղրի, արհամարհանքի, վտանգների-
նրա ուսած արվեստը, գիտություններն անպետք են ճանաչ-
վում. տգետները նրա դեմ հալածանք են բորբոքեցնում (Բ., 92):
Թե այնուհետև ինչ է տեղի ունենում, այդ մասին նա չէ գրում:
Բայց տեսնում ենք, որ վերջը նա Բագրատունյաց Սահակ իշ-
խանի հանձնարարությամբ ձեռնարկում է գրել Հայոց Պատմու-
թյուն, որի մեջ շատ անգամ ներկայանում է մեզ իբրև հեղինա-
կավոր, բարձր գիրք ունեցող, իր արժեքը և նշանակությունը
լավ գիտակցող մի մարդ, ծերության հասակում, «անպարապ ի
թարգմանությանց», որին սիրելի և սովորական են գրական աշ-
խատանքները:

Իհարկե, մենք պարտավոր չենք հալած յուզի տեղ ընդու-
նել ինչ որ Խորենացին ասում է իր մասին և ոչ էլ մերժել առանց
համոզիչ պատճառների: Պետք է Պատմության մեջ կամ Պատմու-
թյունից դուրս տվյալներ որոնենք, որոնք կամ արդարացի են
կամ հերքեն այս տեղեկությունները:

Արդ՝ Պատմությունը մեզ մատակարարում է բավականաչափ
տվյալներ, որոնք արդարացնում են հիշյալ տեղեկությունները:

Բոլոր քննադատներն անխտիր խոստովանում են Խորենա-
ցու բարձր գրական արժանավորությունները, որոնցով նա գե-
րազանցում է բոլոր մյուս հայ պատմագիրներին: Նա ոչ միայն
կատարելապես տիրում է քերթողական արվեստին, որը գործ է
ածում մեծ հմտությամբ ու գեղարվեստական ճաշակով, ոչ միայն
լիովին գիտե հունարենը, որի հետևողությամբ ստեղծում է բազ-
մաթիվ հայերեն բառեր ու բարդություններ և օգտվում է նրա
համաձայնական ձևերից, այլև ծանոթ է հեղինակաւ պատմու-
թյան, բանաստեղծության, դիցաբանության, փիլիսոփայության,

որոնցից հարկավոր դեպքում օգտվում է: Նա գիտե Հոմերոսի
Իլիականը, հիշում է Եղիական պատերազմը, Տեփտամոսի Պրիա-
մոսին օգնություն ուղարկելը Զարմայրի մատնակցությամբ, գիտե
դյուցազն Աքիլլեսին, կաղ ու սրագլուխ Թերսիտեսին. գիտե
Ոդիսականը. Տրդատ Բագրատունու շահատակությունը նմանեց-
նում է Ոդիսեսին, որ կոտորում էր Պենեկոպեի սեղեսներին:
Գիտե Հերոդոտոսին, մատնանիշ է լինում նրա չորրորդ գրքի
վրա, որտեղ խոսվում է մայր ցամաքի բաժանման մասին (Հերո-
դոտոս, գիրք Գ., գլ. 40): (Սահակն այս հատվածը կա նաև Պրո-
կոպիոսի մոտ. Խալաթյանց, Армянские Аршакиды, II, էջ 3):
Գիտե Պատմոսին, որից մի ցիտատ է բերում—«իսկ արդ արդեօք
իցէ՞ սիրելոյ այլ ոք ես, քանզի եւ չէ իսկ ոք» (Պարսից առաս-
պելաց, Բ.), և իր ուսուցչին կոչում է նոր Պատմոս: Ճանաչում
է Սոկրատին, նրա թունավորումը աթենացիների ձեռքով համե-
մատում է Տրդատի թունավորման հետ նախաբարների ձեռքով:
Ծանոթ է Եւհեմերոսի փիլիսոփայության (թեև անունը չէ տա-
լիս) և ըստ այնմ մարդկացնում է հին աստվածներին,—Բեղին,
Հայկին, Շամիրամին, Արային, Վահագնին և այլն: Հմուտ է հու-
նական դիցաբանության և հաճախ ակնարկություն է անում նրա
կողմից «պերճ եւ ողորկ առասպելք», չորս Արամազդի դո-
ւրա (Հունաց «պերճ եւ ողորկ առասպելք»), չորս Արամազդի դո-
ւրա (Հունաց «պերճ եւ ողորկ առասպելք»), կենտավրոսներ, Պերիթես, Պա-
սիֆայե և այլն): Գիտե Եդրոսին, որի վարքից քաղում է տե-
ղեկություն Նեքսաներոսի և Կրեսոսի ժամանակցության: Այս
հիշատակությունները, որոնք բերվում են պատահական առիթ-
ներով, ցույց են տալիս, որ Խորենացին խորապես հմուտ էր
հեթանոսական Հունաստանի պատմության, դիցաբանության,
փիլիսոփայության և գրականության: Այս հմտությունը, քեր-
թողական արվեստի հետ միասին, նա կարող էր ձեռք բերել
միայն Ալեքսանդրիայում, որտեղ զեռ կենդանի էր հին հունական
կուլտուրան, կարող էր հեղինական հին ստեղծագործությունները
կարդալ Ալեքսանդրիայի մոզեում, բայց ոչ Բյուզանդիոնում, որ
5-րդ դարի 30—40-ական թվականներին ծփում էր աստվածա-
բանական վեճերով: Ժամանակով Խորենացուն մոտ ուրիշ հեղի-
նակներ Հունաստանում ուսած, ինչպես՝ Կորյուն, Եզնիկ, Գյուստ
կաթողիկոս, Ղազար Փարպեցի, երևան չեն հանում այսպիսի
հմտություն հեղինակաւ գրականության (Եզնիկի «Եզծ Կրօնից

Յունաց իմաստնոցն» ինքնուրույն չէ): Ավելացնենք սրա վրա ինչ որ պատմում է Խորենացին Ոլիմպիոդորոս գիտնականի նկատմամբ: Մի հայ մարդ (Գորգի կամ Բանան կամ Դավիթ) պատմում է հետևյալը. «Ո՛վ ծերեր, երբ ես Հունաստանում իմաստություն էի սովորում, մի անգամ իմաստուն և հմուտ գույն մարդկանց մեջ խոսակցություն բացվեց աշխարհագրության և ազգերի բաժանման մասին... այս մարդկանցից մեկը, կատարելագույնը, որ կոչվում էր Ոլիմպիոդորոս, հետևյալը պատմեց և այլն (Ա. 6): Այս Ոլիմպիոդորոսը, եգիպտական Թեբայից, հայտնի պատմաբան էր, որ գրել է պատմական մի գրվածք՝ 407—425 թվականները»¹: Ուրեմն, մի հայ ուսանող 5-րդ դարի առաջին կիսում լսում է եգիպտացի Ոլիմպիոդորոս պատմագրի ավանդած գրույցը և տարիներ հետո Հայաստանում պատմում է ծերերին, որոնց մեջ է գտնվել և ինքը՝ պատմագիրը: Սա մի կողմից ապացուցում է Խորենացու ապրելը 5-րդ դարում, մյուս կողմից շատ պատշաճում է Խորենացու տարիքին, որ 5-րդ դարի 80-ական թվականների սկզբին կլինեք շուրջ 70 տարեկան, ինչպես վերը տեսանք: Տարակույս չկա, որ Ոլիմպիոդորոսի գրույցի մասին պատմությունը չէր կարող գրել 5-րդ դարից հետո ապրող մի այլ պատմագիր:

Մի ուրիշ ապացույց էլ, որ Խորենացին եղել է Ալեքսանդրիայում, գտնում ենք Գ. գրքի 62-րդ գլխում, որտեղ բավական մանրամասն նկարագրում է Նեգիպտոսը, Նեղոս գետը և Ալեքսանդրիա քաղաքը. «Մտաք Նեգիպտոս, յաշխարհն համբաւատենչ, յանչափից հրաժարեալ ի ցրտոյ եւ ի օթոյ, ի հեղեղաց եւ յերաշտից, ի գեղեցկւումն մասին երկրի զգիրն ունելով, ամենագան պտղովք լցեալ եւ անձեռագործ պարսպեալ Նեղոսիւ, որ ոչ պահապանութիւն միայն, այլ եւ կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց յինքենէ եւ առողմամբ տէր զոլ պատահեաց եւ չորութեան եւ խոնավոյ ան երկրին գործաւորութիւն, եւ զանհոսն ի նմա գիւրածել գետոյն բերիւք՝ հանգիտակ

¹ Զուր է հեղադ. Մաշնադպանն այս Ուխմպիոդորոսին նույնացնում 6-րդ դարին փիլիսոփա Ուխմպիոդորոսին հետ (Հռոմարան դպրոցը, էջ 41): Այստեղ խառնն աշխարհագրության և ազգերի բաժանման մասին է. Ուխմպիոդորոսը հին պատմական և զրույցներ է պատմում. ուրեմն նա 5-րդ դարին պատմական է Ուխմպիոդորոսին է:

կղզւոյ առաստաղէտս առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամե-
նայն հոսելով, արոնմամբ երկոտասանից վտակաց: Յորում բա-
րեյարմար մեծն Ագեփսանդրիա է շինեալ քաղաք բարեծամանակ
ի մէջ ծովուն, ձեռագործ լին իսկառուցեալ (կամ ձեռագործ լին):

Գր. Խալաթյանցը, որ ամենամանրակրկիտ կերպով որո-
նում է աղբյուրներ, որոնցից կարող էր Խորենացին օգտվել՝
այս ցիտատի մեջ մատնանշել է միայն ընդգծված բառերը (Փի-
լոնի, Գր. Նազկանդացու և Սուռ Կալլիսթենեսի մոտ գործածված
ուրիշ առիթներով և ուրիշ տեղերի մասին): Սա նշանակում
է, որ Խորենացին վերոհիշյալ նկարագրության և մանրա-
մասնությունների համար աղբյուր չէ ունեցել, այլ գրել է իբրև
ականատես: Նույնը կարելի է ասել նաև քրիստոնյա Ալեքսանդ-
րիայի նկարագրության մասին, որ սեփական Խորենացուն
է, այնինչ հեքանոս Ալեքսանդրիայի նկարագրությունն առնում
է Սուռ Կալլիսթենեսից:

Ստեռն Գալլիսթրանստրից:

Ստերենացու հունասիրությունը, հատկապես նրա բարձր գնահատությունը հելլենական գիտության ու քաղաքակրթության, բնականաբար բխում են հենց նույն հանգամանքից, այսինքն՝ որ նա երկար ժամանակ ապրել է Ալեքսանդրիայում, վարձացել է հելլենական քաղաքակրթության շրջանում, յուրացրել է այնտեղի և այն ժամանակի գիտությունները, արվեստները և աշխարհայացքը, միտքն ու ճաշակը կրթել է այն միջաները և աշխարհայացքը, միտքն ու ճաշակը կրթել է այն միջաներում, ինչպես այժմ մենք ասում ենք՝ «եվրոպականացել է»։ Նույնպիսի երևույթ հերկայումս էլ հաճախ կարող ենք դիտել այն մարդկանց մեջ, որոնք երկար ժամանակ ապրելով և ուսանելով մի բարձր քաղաքակրթություն ունեցող երկրում կամ շրջանում, հետո վերադառնում են իրենց հետամնաց հայրենիք՝ աշխատելու և միշտ առիթ են ունենում համեմատելու իրենց աշխարհը լուսավորված աշխարհի հետ, որտեղ նրանք ուսում և կրթություն են ստացել։ Այսպիսի գիտակցական հունասիրություն, հիացմունք հելլենական քաղաքակրթությունից չէ նկատվում և չէ էլ կարող նկատվել մեր գրականության մեջ (բացառությամբ Գրիգոր Մազիստրոսի (11-րդ դար), որ գրեթե հունապարտ էր)։ Ընդհակառակը, մեր ամբողջ միջնադարյան գրականությունը, պատմական և կրոնական, 5-րդ դարից հետո, գունավորված է աղոտ կամ բացահայտ հունաստեցությամբ՝ կրո-

նական խտրութեան և ձուլների կողմից հայ եկեղեցու դեմ հա-
րուցված հալածանքների պատճառով:

Խորենացու հունարան լեզուն էլ նույն բանն է ապացու-
ցում և բնական ու հասկանալի է միայն 5-րդ դարի երկրորդ
կեսում կամ վերջին քառորդում: Նա միաժամանակ թե դասական
է և թե հունարան, կազմում է անցման շրջան, հունարանութեան
սկզբնավորութեան շրջան, երբ էվուլյուցիայի օրենքով, հունարա-
նությունը պետք է մեղմ ու չափավոր արտահայտութեան ունե-
նար: Նրա լեզվի դասականութեանն ապացույց է, որ նա պատ-
կանում է դասական շրջանի մատենագիրներին կամ նրանց ան-
միջական հաջորդին է, իսկ չափավոր հունարանութեանը նշան է,
որ նա մեկն է այդ գրական ուղղութեան հիմնադիրներից, սկսող-
ներից: Եվ մի ավելի մեծ իրավունքով և ավելի կշռված համոզ-
մունքով կարող էր ձեռնարկել այսպիսի մի մեծ գրական հեղա-
շրջման՝ քան նա, որ հոգով սիրահար էր հունական քաղաքա-
կրթութեան և կատարելապես հմուտ էր թե մայրենի լեզվին և
թե հունարենին, ինչպիսին էր Ալեքսանդրիայում ուսած Մովսես
Խորենացին:

Դավանաբանական վեճերի բացակայութեանը՝ Խորենացու-
Պատմութեան մեջ դարձյալ բնորոշում է նրան իբրև 5-րդ դարի
գործ, երբ Հունաց և Հայոց եկեղեցիների մեջ տարաձայնութեան
դեռ չկար Քաղկեդոնի ժողովի պատճառով, և երկու եկեղեցիները
դավանաբանորեն մի էին: Առաջին անգամ Հայոց եկեղեցին իր
բացասական վերաբերմունքը դեպի Քաղկեդոնում ընդունված
եքվաքնակութեանն արտահայտեց 6-րդ դարի սկզբներին,
506—8 թ. թ., և այս ժամանակից սկսած՝ հերձված՝ պառակտում
է ընկնում երկու եկեղեցիների միջև, շատ խոշոր կրոնական և
պատմական հետեանքներով, և այս ժամանակից սկսած Հայոց
պատմական և կրոնական գրականութեան բնորոշ գիծն է կազ-
մում հունատեցութեանը: Բայց մենք շուտով կտեսնենք, որ Խո-
րենացին անմասն չէ դավանաբանական վեճերից, միայն բոլո-
րովին տարբեր հողի վրա, — հայ եկեղեցու ծոցում, — և կբացա-
սրենք դրա պատճառը:

Խորենացին Մեսրոպ-Մաշտոցի կենսագրութեան և գրերի
գյուտի պատմութեան նվիրում է ամբողջ ութ գլուխ (Գիրք Գ.,
գլ. 47, 52, 53, 54, 57, 58, 60, 67), չհաշվելով Ողբը, ընդհանրա-

պես հետեւելով Կորյունին, բայց ավելի բացահայտ, կապակցված
և տեղ-տեղ լրացնելով Կորյունի բաց թողածը: Այսպիսի մանրա-
մասնությունը բնական և հասկանալի է Մեսրոպի անմիջական
աշակերտի և ժամանակակցի կողմից, որ ցանկացել է լիակատար
կերպով պատմել ու անմահացնել իր սիրած ուսուցչի գործը և
որի համար գրերի գյուտը դեռ չէ կորցրել իր թարմութեանն ու
թողած տպավորութեանը ժամանակակիցների վրա: Հետագա պատ-
միչներն այն անզուգական անձին և նրա հորինած ազգային այ-
բուքներն հաղիվ թե մի քանի տող են նվիրում, չնայելով որ
իրենց արամադրութեան տակ ունենին թե Կորյունի գրած վարքը
և թե Խորենացու Պատմութեանը: Այս մասում հետաքրքրական
է, որ Խորենացին մի այլ տեղ հիշում է Եվսեբիոսի Եկեղեցական
Պատմութեանը, «... զոր ետ թարգմանել երանելի վարդապետն
մեր Մաշտոց ի հայ լեզու» (Բ., 10), «վարդապետն մեր» բնորոշ
խոսքերով: Այս վերջին մանրամասնությունը Կորյունը չունի:
Ավելի նշանավոր է գրերի գյուտի մոմենտի նկարագրութեանը—
տեսիլքի նման մի երևույթ՝ աջ ձեռքի թաթ, որ գրում էր վեմի
վրա, և գրածի հետքը տպավորվում էր: Կորյունի մոտ այս մո-
մենտը մուծ է և անորոշ—«... որում պարգեւէր իսկ վիճակ յա-
մենաշնորհողէն Աստուծոյ հայրական չափուն ծնեալ ծնունդս
նորոգ եւ սքանչելի սուրբ աջովն իւրով նշանագիրս հայերէն
լեզուին»: Այս մուծ խոսքերից Խորենացին չէր կարող ստեղծել
իր նկարագրութեանը, չէր կարող և իրենից հնարել, քանի որ
նրա նկարագրած պատկերը մի սեալ իրողութեան է, տեսաբա-
նական պատրանք—լուսեղեն ռեֆլեքս, որի էությունը սակայն
ինքն էլ չգիտեր, այլ երևույթը համարում էր կատարված «ի
վերնոցն տուելոց շնորհաց», ինչպես գրում է 53-րդ գլխի վեր-
նագրում: Միակ հավանական ենթադրութեանն է, որ Խորենա-
ցին այս նկարագրութեանը գրել է հենց Մեսրոպի խոսքերից,
երբ նա աշակերտներին պատմելիս է եղել, թե ինչպես տեղի
ունեցավ գյուտը, ուսանց նույնպես գիտեալու, թե իր տեսած
աջը և գրերը՝ հենց իր սեփական ձեռքն է եղել և իր գրած գրե-
րը: Կորյունը գյուտի այս մանրամասնութեանը չգիտե, որով-
հետեւ դասակից չէ եղել տարիքով կրտսեր Խորենացուն և Մես-
րոպի պատմածին ներկա չէ եղել:

Նույնը պետք է ասել և ս. Սահակի վերաբերմամբ: Խորե-

նացին նրան նվիրում է ինը գլուխ (Գ., 49, 51, 57, 61, 63, 64, 65, 66, 67), չհաշվելով Ողբը և ուրիշ տեղերում եղած մանր հիշատակությունները: Սահակի քաղաքական ու տոհմական գործունեության մասին խորհնացին պատմում է այնպիսի մանրամասնություններ, որոնք բացակայում են Ղազար Փարպեցու մոտ և ծանոթ չեն ուրիշ աղբյուրներից: Մասնավորապես նշելու է Սահակ կաթողիկոսի կատարած դերը Գահնամակը կազմելու գործում (գլ. 51 և 65), որով հասկանալի է դառնում մեր ձեռքը հասած այդ Գահնամակը: Ս. Սահակի գործունեության, տեղեկությունների ճշտության վերաբերյալ այսպիսի մանրամասնությունը հասկանալի կդառնա այդ կաթողիկոսի աշակերտի և ժամանակակիցի համար: Հետագա հեղինակները շատ կարճ են հիշատակում ս. Սահակի կյանքն ու գործունեությունը, իսկ նրա դերը քաղաքական ու տոհմական հարցերում բոլորովին չեն հիշում:

Ինչպես հայտնի է, Փավստոսի Պատմությունը պարունակում է Հայոց պատմության ժամանակաշրջանը Տրդատի մահից հետո մինչև Հայաստանի երկու մասի բաժանվելը, իսկ Ղազար Փարպեցու Պատմությունը, իբրև Փավստոսի շարունակություն, սկսվում է այս բաժանումից և հասնում է մինչև ս. Սահակի և Մեսրոպի մահը (նրա առաջին դրվագը): Խորհնացու Պատմության երրորդ գիրքն ընդգրկում է ճիշտ այս երկու շրջանները: Սակայն եթե նա առաջին մասի համար, մինչև Հայաստանի բաժանումը, որպես աղբյուր ուներ Փավստոսի Պատմությունը, որից ազատորեն օգտվել է, երկրորդի համար այսպիսի աղբյուր չուներ: Ղազարի Պատմությունը շատ քիչ բան է տալիս այս շրջանի թագավորների, նրանց փոխարարներության, նախարարների շարժումների մասին: Պարսից Շապուհի թագավորության մասին և ոչ մի խոսք չէ տալիս, բացի այն, թե նա նշանակվեց Հայաստանի թագավոր, իսկ թե նա Հայաստան ոտք կոխել է, թե ոչ՝ նույնիսկ չէ հիշատակում: Իսկ այս շրջանը խորհնացին նկարագրել է բավական մանրամասն, կենցաղային կենդանի դիպվածներով: Այս տեղեկությունների համար նա գրավոր աղբյուր չուներ, ուրեմն գրել է իբրև ժամանակակից կամ ժամանակով փոքր ինչ հեռու, ինչպես ինքն էլ ասում է (Գ., 1): Եվ նրա ժամանակագրությունն էլ այս մասում (380 թվականից սկսած) ստույգ է, ինչպես

շեշտում է նրա հակառակորդ Ա. Մ. Գարագաշյանը (Քննական Պատ., մասն Գ, էջ 210—11):

Իերենք և մի այլ բնորոշ օրինակ: Խորհնացին պատմում է (Գ., 60), թե Մեսրոպը և Սահակը Հովսեփին ու Եղնիկ Կողբացուն ուղարկեցին Միջագետք՝ թարգմանություններ անելու, խոստանալով, որ երբ իրենց թարգմանած գրքերը բերեն՝ ապա նրանց նույնպիսի գործով կուղարկեն Բյուզանդիոն: Բայց նրանք քսու մարդկանցից լուրեր ստանալով, իբրև թե Սահակն ու Մեսրոպը մտադիր են ուրիշներին ուղարկել Բյուզանդիոն՝ առանց ուսուցիչների հրամանն ունենալու, ինքնազուլու գնում են Բյուզանդիոն: Նրանց ընկերներն էլ՝ Ղևոնդ և Կորյուն, նրանց նախանձելով՝ իրենք էլ իրենց կամքով գնում են Բյուզանդիոն: Հետո նույն քաղաքն են հասնում Հովհան և Արձան, որոնք թեպետ ավելի վաղ էին ուղարկված, բայց ճանապարհին երկար տնտնացին, «յուլաբար ուղեւորեալ եւ ծուլաբար դեգերեալ»: Այս պատմությունը հետաքրքրական է նրանով, որ մասամբ հակառակ է Կորյունի պատմածին և մասամբ նոր է: Հովսեփի և Եղնիկի մասին Կորյունն ասում է, թե նրանք ուսուցիչների պատվերը կատարելով և թարգմանությունները նրանց ուղարկելով՝ այնուհետև գնացին Բյուզանդիոն: Ղևոնդի և իր մասին այսքան է հիշում, թե դեպք եղավ գնալ: Հովսեփի և Արձանի Բյուզանդիոն գնալը բոլորովին չէ հիշում և Արձանին նույնիսկ չգիտե: Թվում է, թե խորհնացին ավելի ճշմարիտ է (Կորյունն սքողել է ընկերների և իր թերությունները): Բայց այսպես թե այնպես՝ խորհնացու փուռ դնելն այս երեք գույգին էլ, նրանց անհնազանդ կամ ծուլ դուրս բերելը կարող է բացատրվել անձնական նկատմով միայն: Խորհնացին ուզում է ցույց տալ, թե բոլոր աշակերտների մեջ ինքն է միայն հնազանդ եղել իր ուսուցիչներին և ուսման մեջ առաջադեմ: Չնչին մի փաստ, բայց հոգեբանական տեսակետից կարևոր ապացույց, թե խորհնացին աշակերտ է եղել Սահակին ու Մեսրոպին:

Վերջապես, խորհնացու հոռետեսությունը և հուսահատ հոգին հասկանալի և բնական են 5-րդ դարում, մինչև 80-ական թվականների կեսը, Վահանի հաշտություն կնքելը պարսիկների հետ: Մի կողմից հեղինակը խորին վշտով ողբում է Արշակունյաց թագավորության բարձումը և քահանայապետության դադարումը

Հուսովորչի ցեղից: Այսպես կվարվեր այնպիսի մի մարդ, որը ժամանակով մոտ է այդ աղետալի անցքերին և անձամբ իր վրա էլ զգում է նրանց հետևանքը: Մյուս կողմից նա մռայլ գույններով տեսնում է իր հայրենի երկիրը, առանց լավագույն վիճակի հուշի.—այս դրությունն էլ լիովին համապատասխանում է Հայաստանի բարոյալքված վիճակին, երբ անձնական շահի համար հավատաբարությունը սովորական երևույթ էր դարձել, երբ առաքինի մարդիկ արհամարհված էին և ասպարեզից հեռացած, երբ իշխանները, մի-մի ավազակ դարձած, ասպատակում էին ու կողոպտում երկիրը, իսկ Վահան Մամիկոնյանի ստամբակությունը Պարսից դեմ, սակավաթիվ ընկերներով Պարսիկների դեմ վարած անհավասար կռիվը հաջողության ոչ մի հավանականություն չուներ, մինչև մի անակնկալ դիպված,—Պելոգի մահն ու նրա բանակի բնաջինջ կոտորվելը Ղեկիթաղների կոլում և Վաղարշի թագավորելը 484-ին,—վճռական քաղաքական փոփոխություն առաջ բերին Պարսկաստանում և փրկարար հանդիսացան Վահանի ու Հայաստանի համար:

Բացի այս փաստերից, Հայոց Պատմությունը մատակարարում է մեզ բազմաթիվ կողմնակի նյութեր, որոնց հիման վրա կարող ենք կազմել հեղինակի բնութագրերը, ծանոթանալ նրա հոգեկան հատկություններին, որոշելու համար, արդյոք նա կեղծարար է, թե իրոք այն է, ինչ որ իր մասին ասում է, խաբեբա է, թե արդարամիտ հեղինակ: Հիրավի, եթե Հայոց Պատմությունը 5-րդ դարի գործ չէ, այլ ավելի ուշ ժամանակի, այս դեպքում նրա հեղինակը գուցե կգա մի ինքնակոչ կեղծարար և խաբեբա—սա անժխտելի եզրակացություն է: Բայց Պատմությունը հիմք տալիս է այսպիսի եզրակացություն անելու:

Կեղծարարն ամենից շատ հոգ է տանում, որ իր կեղծիքը չբացվի. նա աշխատում է ծածկվել, չերևալ ընթերցողին, նրա հետ գործ չունենալ: Հայոց դարձի խմբագրողը միայն առաջաբանում ու վերջաբանում հիշում է իրեն՝ իբրև Հռոմից Հայաստան եկած, Ագաթանգեղոս անունով մեկը, որ իբր թե պատվեր է ստացել Տրդատ թագավորից՝ գրել Հայոց դարձի պատմությունը, և պատվերը կատարել է: Այնուհետև, ամբողջ պատմության ընթացքում, ոչ Ագաթանգեղոսը և ոչ կեղծարար խմբագրողն այլևս հանդես չեն գալիս—պատմությունն անանուն է:

Այսպես չէ Հայոց Պատմության մեջ. այստեղ հեղինակը միշտ մեր աչքի առաջն է իբրև քննադատող, գովող կամ պարսավող, ուրախացող կամ վշտացող, ընթերցողին հաշիվ տվող. նա, կարծես, պատմադիր չէ, այլ ընթերցողի կողքին նստած զրուցընկեր: Նրա անհատականությունը, նրա եսը ամեն տեղ զգում է կարգացողը, ենթարկվում է նրա հոգեկան տրամադրության: Հայոց Պատմությունը գրելու առաջարկությունն ստանալով Սահակ Բագրատունուց՝ հայտնում է, թե այս խնդրի միջոցով նրա հոգուն ավելի վաղ ծանոթացավ, քան անձին, որ այդ խնդիրը սիրելի է իր ճաշակին և սովորության, գովում է նրան: Երբ Սահակը խնդրում է գրել Պարսից առասպելների մասին՝ հանդիմանում է նրան, թե ի՞նչ տարօրինակ սեր ունիս այսպիսի փուշ ու սուտ առասպելներին. սա պետք է վերագրել քո մանկական հասակին և խաղամիտ տհասության: Սիրող անձը սիրած մարդու համար իր եսը կմոռանա. ահա ես էլ իմ ձեռքով շարադրում եմ այն խոսքերն ու գործերը, որոնք ես ասում եմ և որոնք լսելն իսկ միայն զգվանք է պատճառում: Սրանք կեղծարարի կեղծիք ու խոսքեր չեն, այլ ռեալ մարդու և ռեալ իրականության արտահայտություն: Ամբողջ գիրքը լիքն է այնպիսի տեղերով, որոնց մեջ արտահայտվում է հեղինակի անձնավորությունը. բոլորը բերել՝ կնշանակիր մի քանի տասնյակ էջ քաղվածքներ, անել. բայց չեմ կարող չհիշել նրա զանգատը Նրկորդ գրքի վերջին գլխում:

Պատմելով Տրդատ թագավորի թունավորումը՝ հեղինակը շարունակում է. «Եւ զի այսօրիկ ճշմարիտ այսպէս՝ միւլթարեացուք մերովք վտանգիւքս եւ մեք. զի եթէ ընդ փայտ դալար դայս արարին, ասէ Քրիստոս, իսկ ընդ չորն զի՞նչ լինիցի: Արդ եթէ ընդ սուրբս աստուծոյ եւ որք ի թագաւորութենէ զինքեանս նուստացուցին այս է, զի՞նչ մեր բանս առ Աստուծոյ յաղագս ի ձէնջ վտանգիցս, որոց վտանգք եւ աղքատութիւն սեպհական է: Այլ սակայն ասացից: Ո՞վ ոք ի ձէնջ թօշակս յաղագս մեր, ո՞վ ոք վարդապետացն մաղթանս, ո՞վ ոք բան յօթարեցուցանող կամ յորդորական, ո՞վ ոք յերթալս մերում բեռնաբարձս, ո՞վ ոք ի դալն մերում հանգիստ, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատարասեաց: Թողից դայն, զի եւ ոչ զլեզուս չարս եւ զտգիտութիւն հանդերձ սնտաի փառամոլութեամբ եւ կատաղի լեզուանութեամբ ասանձահարեցէք, այլ նիւթ նոցա անմտութեանն զձեր ուսումնա-

Ամփոփելով վերը գրվածները, գտնում ենք, որ Հայոց Պատմությունը տալիս է բավականաչափ ապացույցներ՝ արդարացի-ներու խորհնացու իր մասին հաղորդած տեղեկությունները, թե նա Սահակի և Մեսրոպի աշակերտն է, նրանց հրամանով գնացել և ուսել է Ալեքսանդրիայում, ուրեմն և նա Ծրդ դարի հեղինակ է. տալիս է նաև բավական ապացույցներ, որ նա անկեղծ ու արդարախոս հեղինակ է, որի վկայությունն իրավունք չունինք չհավատալու: Որ նա իր ժամանակակիցներից կրել է նեղություններ, արհամարհանք՝ սրա ապացույցը հետո կրեքենք, բացատրելով պատճառները: Առայժմ դառնանք Պատմությունից դուրս արտաքին աղբյուրների, որոնք հաստատում են խորհնացու անձի և նրա Պատմության վավերականությունը:

Վրաց հին գրականություն մեջ պահպանված է մի պատմական գրվածք Հայոց հին Պատմության մասին՝ հետևյալ վերնագրով¹. «Հայոց թագավորությունը՝ սկսած Նոյի որդուց». [այս տեղեկությունները]² գտնված լինելով Պատմութի մեջ՝ ներկայացրած են այս գրքում նախար[ար]ական տոհմերի մասին քաղված քննարկ հանգերձ: Այս գրվածքը անանուն հեղինակի գործ է, Ծրդ դարի երկրորդ կամ առաջին կեսից, ինչպես ցույց է տալիս պրոֆ. Մելիքսեթ-բեկը:

Այս «Պատմութից» բերում եմ քաղվածք, դուգահեռաբար ղնելով խորհնացու Հայոց Պատմությունից համապատասխան տեղերը:

Պատմութիւն

Նոյի որդուց անունները՝ Սեմ, Բամ և Յաֆետ՝ գտնված են մարաց կամ պարսից լեզվով. թարգմանաբար հետևյալն են՝ Զրուան, Տրտան և Յապետ³:

Մովսես Խորենացի

«Հաւ առնելով իմոց բանից... ի բերոսեանն Սիրիլայ... Զրուանն եւ Տրտանն եւ Յապետութէ լինէին իշխանք երկրի, որ ինձ թուին Սեմ, Բամ եւ Յաբեթ: (Ա., 6):

¹ Բերում եմ պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի թարգմանությունը. նրա «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» հեռաքրքրական աշխատությունից, Երևան, 1934, էջ 74:

² Պատմութենի Յապետ (սիրիական Յապետոս) ձևը խորհնացու Յապետութէի դեմ, ինչպես և Ռիփատի անունը, որ խորհնացու մոտ չկա և թիրաթի գիրքը ճյուղագրության մեջ՝ շատ հեռաքրքրական են խորհնացու այժմյան բնագրի քննության համար, բայց իմ նպատակից դուրս է: Համեմայն դեպք այս ճյուղագրությունն ըստ խորհնացու է և ոչ ըստ ս. Գրքի:

Յաֆետը ծնեց Գամբելն, Գամբելը ծնեց Ռիփատին, Ռիփատը՝ ծնեց Թիրասին, Թիրասը ծնեց Թորգոմին (Թորգոմոյին):

Թորգոմոն ծնեց Հայկին Սա՝ Արմենեկին:

Արմենեկը՝ Արմայիսին

Սա՝ Ամասիային:

Ամասիան ծնեց Գեյլային:

Սա՝ Հարմային:

Հարման ծնեց Արամին:

Արամը ծնեց Արայ-գեղեցկին:

Արայն ծնեց Անուշավանին:

Սա՝ Պատերին:

Պատերը ծնեց Աբբակին²:

Աբբակը ծնեց Գալվանին:

Սա՝ Փանասկորին³:

Փանասկորը՝ Հովանակին:

Սա՝ Վաշտակին:

Վաշտակը՝ Հայկակին:

Հայկակի մասին ասում են, որ նա Բելթոդի օրոք էր: Նա առաջ բերեց անմիտ ապստամբություն, որի ժամանակ սպանվեց: Ապա...

Ամբայի:

Առնակ:

Շավարշ:

Նուարար:

Վստամ:

Կար:

...Զարմայր⁴:

Յաբեթ ծնանի գրամեր:

Գամբել ծնանի

գթիրաս¹

Թիրաս ծնանի գթորգոմ:

Թորգոմ ծնանի գՀայկ:

Հայկ ծնանի գԱրամանեակ (գԱրմենեակ)

Արամանեակ (Արմենեակ) ծնանի գԱրամայիս:

Արամայիս ծնանի գԱմասիայ:

Ամասիայ ծնանի գԳեղամ:

Գեղամ ծնանի գՀարմայ:

Հարմայ ծնանի գԱրամ:

Արամ ծնանի գԱրայն գեղեցիկ:

(Գ., 5)

Արայեան Արայի որդի Անուշավան Պարէտ:

Աբբակ:

Զաւան:

Փառնակ: Սուր:

Հաւանակ:

Վաշտակ:

Հայկակ:

Զամանէ ասէն լինել առ Բելթոսիւ եւ ամբոս իմն արարեալ անխորհուրդս եւ մեռանել ի նմին:

Ամպակ:

Առնակ:

Շավարշ:

Նուարար:

Վստամկար:

Գոռակ, Հրանտ, Ընձար:

¹ Տես 102 էջի ² Ժողովրդագրություն:

² Բնագրում Արշակ. աղավաղությունն առաջ է եկել վրացական խոսքերի Բ և Շ գրերի շփոթությունից:

³ Փանասկոր (սիրիական Փանասկոր) առաջ է եկել Փառնակ և Սուր անունների իրար խառնվելուց:

⁴ Կարից հետո պահպանում են վեց անուն: Հաջորդ երեք անունը՝ «Ամպակ», «Կամպար Միուստան», աղավաղություն է խորհնացու համալսման ցրված շարված բառերին, որ վրացի թարգմանիչը համարել է հատուկ անուններ:

Մավազնա.
Կամպար.
Միտոսեվտա, ուղարկվեց եթիոպա-
կան զորքի հետ և սպանվեց հեյլե-
նական հերոսներից:

Հրաչե.
Փառնեվազ.
Պաճոյճ.
Կոռնակ.
Փառս.
Մյուս Հայկ.
Երվանդ սակավակեաց.
Տիգրան մեծն:

Գրտկ. Հորոյ. Զարմայր.
Սա աւագնական Պափամու-
ի Տեւտամայ առաքեալ ընդ ե-
թովպացի զօրուն՝ մեռանի ի բա-
ջացն Հելլենացւոց: (Ա., 20):

Պարոյր, որդի Սկայորդուոյ.
Հրաչեայ.
Փառնաւազ.
Պաճոյճ.
Կոռնակ.
Փառս.
Միւս Հայկակ
Երուանդ Սակաւակեաց
Տիգրան: (Ա., 22):

Շարունակելն ավելորդ է: Որեւէ թյուրիմացութեան առաջն
առնելու համար պետք է հիշել, որ Սերեոսի Պատմութեան (առա-
ջին դարութեան) մեջ բերվում են անունները Հայկից սկսած
մինչև Շավարշ, որին հաջորդում է Փառնավազ: Մյուս անուններն
ու տեղեկությունները պակասում են:

Անկասկածելի փաստ է ուրեմն, որ 9-րդ դարում վրացերեն
լեզվով խմբագրված Պատմութիւնի աղբյուրը անշուշտ խորհրդացու
Հայոց Պատմությունն է. նշանակում է, Հայոց Պատմությունն
այնքան հուշակված ու տարածված պետք է լիներ, որ 9-րդ դա-
րում մինչև իսկ Վրաստան հասներ և այստեղ աղբյուր ծառայեր
քաղվածորեն Հայոց պատմություն գրելու: Այս անհերքելի փաստը
միայն բավական է հիմն ի վեր կործանելու ինչպես՝ ահագ. Մա-
նանդյանի, նույնպես և Ն. Ալիսյանի կառուցվածքները Հայոց
Պատմութեան 9-րդ դարի գործ լինելու մասին, իրենց բոլոր
ապացույցներով:

Նույն 9-րդ դարում մի վրացի հեղինակ, նրանց նշանավոր
Արսեն Սափարացի կաթողիկոսը, պատմելով այն մասին, թե

և տրոհել է ըստ իր հասկացողութեան: Այսինքն՝ հայերեն բնագիրը — սա
աւագնական Պրիմալու ի տեւտա (մայ)... դարձել է Մավազնա Կամպար Միտ-
տեվտա: Աղավաղությունը ճանաչել և բացատրել է պրոֆ. Մելիքսեթ-Բեկը
(էջ 74):

Յ «Փառս» ունին խորհրդացու միայն երեք ձեռագիր. մինն էլ ունի
Փառս, մյուսները և Հովհ. կաթողիկոս ունին «Փառս», որին համապատաս-
խան է և վրացերենը: Ուրեմն «Փառս»-ն ուղղելի է «Փառս»:

Պոմիտաս կաթողիկոսը Հոհան Մայրապետիցու հետ ինչ միջոցնե-
րով էին կալում Բաղկեդոնի ժողովի կողմնակիցների դեմ՝ ի միջի
այլոց ասում է. [Պոմիտասը] «Մեկնաբանեց հերձվածողական
գրություններն Տիմոթեոս Աղեքսանդրացւոյ, որ Կուզ կոչվեց և
Պետրոս Թափիշինը, որը Գայլ կոչվեց» և Սեվերոսի և այլ հերձ-
վածողների, և [այս գրությունները] մակագրեց [այնպես], իբրեւ
թե ուղղափառ վարդապետների՝ սուրբ Սահակի և Մովսեսի ճա-
ռերն են, և այսպիսի կեղծիքով հավատացրեց ամբողջ երկիրն
Հայոց»¹: Մովսեսի ճառը բարեբախտաբար պահպանվել է, նա
յուրագրված է առաջին անգամ Ար. Տեր-Միքելյանի ձեռքով,
Սամուել Անեցու Հավաքածոյին իբրեւ հավելված (Վաղարշապատ,
1839, էջ 255—261) և կրում է հետևյալ վերնագիրը. «Երանելոյ
մեծի քերթողհօրն Մովսէսի եպիսկոպոսի»: Նույնը տպված է և
«Գիրք Թղթոց» ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1901, էջ 22—28) և
կրում է «Երանելի մեծ քերթողհաւերն Մովսէսի Խորենացի եպիս-
կոպոսի» վերնագիրը: Սրա մեջ «Խորենացի» միջանկյալ է թվում,
բայց Խորենացի անվան հիշատակությունը նոր բան չէ ավելաց-
նում, քանի որ քերթողհայր Մովսէս անելով բոլորը՝ հասկանում
էին և հասկանում են Խորենացուն:

Այս ճառն ընդհանրապես ճանաչված էր կեղծիք². կեղծման
ժամանակը, լեզվից դատելով՝ ահագ. Մանանդյանը որոշում է
6-րդ դարը կամ ամենաուշը 7-րդ դարի սկիզբները³: Այս ճառի
մասին Արսեն կաթողիկոսի հաղորդած տեղեկությունը միանգա-
մայն հաստատում է այս երկու կետը, այսինքն թե նա կեղծիք
է և 7-րդ դարի գործ է, բայց իր կողմից թանգագին նորու-
թյուն է հաղորդում կեղծողի և կեղծելու դիտավորութեան մասին:
Այս դիտավորությունը քիչ հետո կբացատրենք. այստեղ միայն
հարկավոր է նկատի առնել, որ 7-րդ դարի սկզբում այնքան
հուշակված և հեղինակավոր էր քերթողհայր Մովսեսի (Խորենա-
ցու) անունը, որ կարևոր էին համարում նրա անունով կեղծ
ճառ հորինել հայ ժողովրդին խաբելու համար:

Նույն Արսեն կաթողիկոսը մի քիչ հետո պատմում է, թե

¹ Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»,
էջ 73—74:

² Տե՛ս, ի միջի այլոց, Օրմանյան, Ազգապատում, էջ 50:

³ Հունարան գաղտնի, էջ 255:

ս. Սահակը, Մաշտոցը, նրանց աշակերտները՝ Ղևոնդ, Հովսեփ մեկնաբանեցին սրբերի գրվածքները, բարի սերմեր ցանեցին հայոց մեջ. բայց հերձվածողները (այսինքն Քաղկեդոնի հակառակորդները) «ատրաշեկ կրակով դիտմամբ խոցեցին նրանց հոգիներն ու անմեղ ժողովրդին, և ինքը՝ Մովսես քերդողը նախազգուշացրեց նրանց կործանումը, բայց հերձվածողները նրան էլ չլսեցին»։ (Վրաց աղբյուրները, էջ 40—41)։

Այստեղ դարձյալ Մովսես քերդողը (Խորենացին) հանդես է գալիս որպես մեղ լավ հայտնի Սահակին, Մեսրոպին և նրանց աշակերտներ Ղևոնդին ու Հովսեփին ժամանակակից և ակնարկություն է լինում Խորենացու Ողբի վրա։

Խորենացու Պատմության և նրա անձի մասին եղած այս երեք վկայությունները 9-րդ դարի վրացական աղբյուրներից են։ Խորենացու մասին 8-րդ դարից մենք մի պայծառ վկայություն ունինք Հովհան Օձնեցու «Ընդդէմ երեսութականաց» ճառի մեջ։ Նա ասում է, թե Սուրբ Հոգին մերոնցից [Հայերի միջից] էլ դուրս բերեց լուսավորիչներ՝ առաջին լուսավորչից հետո. «Զերկոսին գնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ և զՄաշտոց, և զամենեսին զընտրեալսն զարբանեակս նոցուն և զգործակիցս, զԵղնակ և զայլսն, և զամ որ ըստ նոցանէ և ոչ հետի ի նոցանէ զմեծն իմաստասիրաց և զհոգեակեալն ընդ տիեզերս զտէր Մովսէս. որք էին միանգամայն արուեստաւորք, թարգմանիչք և ուղղափառք» (Հովհան Իմաստասէր, Վենետիկ, 1833, էջ 66)։

Ուրեմն Հովհան Օձնեցի կաթողիկոսը (վախճանված 727-ին) ամենամեծ գովեստներով հիշատակում է մեծ իմաստասեր, հոգեակավոր Մովսեսին, ժամանակով ոչ հետո Սահակից, Մեսրոպից, Եղեկից, իբրև արվեստավոր (քերթողական արվեստի հմուտ) և թարգմանիչ։

Յոթերորդ դարը հարուստ է վկայություններով Մովսես Խորենացու և նրա Պատմության մասին։

Յոթերորդ դարի վերջերին Անանիա Շիրակացին գրել է մի ժամանակագրություն, որ սկսվում է Ադամից և հասնում է մինչև իր ժամանակը—685 թվականը։ Այս ժամանակագրության սկզբում հանվանե հիշված են «Մովսէսի Խորենացույ և Անդրէասի»։ Եւ հիշովի, ժամանակագրության առաջին մասը, Ադամից մինչև Նոյ, բառացի առնված է Խորենացու Պատմությունից։ Նոյի

որդիներից սկսած մինչև Պարսից Աքեմենյան հարստությունը առնվում է Անդրեասից (թարգմանություն Հիպոլիտի ժամակագրությունից), իսկ շարունակությունը մինչև 685 թվականը գրել է ինքը՝ Շիրակացին։

Տվյալ գրվածքն այս ձևով հայտնի է եղել Գր. Խալաթյանցին (Армянские Аршакиды, էջ 52—54, նրա մի հին օրինակը կա ՀՍՍՌ Պետ. Զեռագրատանը, գրված 971 թվին)։ Նա չէ կարողացել հերքել իրողությունը, թե այս աշխատությունը գրել է Շիրակացին և թե նրա մեջ հիշված է Մովսես Խորենացին, որից էլ արտագրված է մի քանի էջ, մի ապացույց, որ տապալում էր նրա հետազոտության ամբողջ կառուցվածքը։ Այս անելանելի զրույթներից դուրս գալու համար նա պարզապես հետևյալն է ասում Խորենացու հատվածի մասին.

„Быть может оно впоследствии присоединено к готовому уже сочинению Андреаса, как подходящее к нему вступление“.

Դուրս է գալիս Խալաթյանցի կարծիքով, թե Շիրակացին ժամանակագրությունը գրելիս բաց է թողել սկզբնական ժամանակը և չէ գրել «Մովսէսի Խորենացույ և Անդրէասի» վերնագիրը. դարեր անցնելուց հետո մի բարի մարդ լրացրել է նրա թերին և ավելացրել «Մովսէսի Խորենացույ» բառերը։

Ահա թե ինչ բռնազրոսիկ միջոցների են ստիպված լինում դիմել այն բանասերները, որոնք Խորենացու Պատմությունը 8—9-րդ դարերի գործ են համարում։

Սերետս եպիսկոպոսը 661 թվին իր Պատմության Գ գլխի վերնագրում գրում է. «Երկրորդեցից ի պատմագրացն Մովսէսի Խորենացույ և Ստեփանոսի Տարաւնացույ, հաւաստի և ճշմարիտ մատենագրաց, զորդի ի հաւրէ ճանաչել», և գլուխն սկսում է Խորենացու Պատմությունից արված քաղվածքով։ Այս բացահայտ վկայությունը, որ ապացուցում է Խորենացու Պատմության վկայությունը 661 թվին, բանասերների կողմից դարձյալ կասկածի ենթարկվեց, որովհետև ընդունում էին, թե այստեղ հիշված Ստեփանոս Տարաւնացին ոչ այլ ոք է, քան Ստ. Տարաւնացի Ասողիկը, որ գրել է 1004 թվին. սրա վրա հետո ավելացավ և նորագույն կարծիքը, թե Մովսես Խորենացին 8—9-րդ դարերի պատմիչ է։ Ուստի այս ամբողջ գլուխը և նրան հաջորդող երկու գլուխ-

ները (=հին տպագրութիւնների Բ. դպրութիւնը) հայտարարվեցին ու ժամանակի և անհայտ հեղինակի գործ, որ պատահմամբ ընկել է Սեբեոսի Պատմութեան սկիզբը: Բայց հետո ապացուցվեց, որ Ստ. Տարաւնեցին Ասողիկը չէ, այլ մի ուրիշ հնագույն պատմիչ, որի անունը բացի այստեղից հիշվում է նաև ուրիշ տեղերում՝ երեք անգամ, և որի գրած ժամանակագրութիւնից մի հատված գտնվեց ու հրատարակվեց (այս մասին տես Սեբեոսի նոր հրատարակութեան առաջաբանը, էջ 10-11):

Նույն Սեբեոսի Պատմութեան առաջին գլխում, որտեղ նա գրում է ըստ Մար Աբաս Մծուրնացու, մի քանի անգամ գործ է ածված՝ «Բէլն Տիտանեան», «աբբայն Տիտանեան», «Տիտանն»: Նույն հորջորջումը գտնվում է նաև Խորենացու Պատմութեան մեջ: Երկու հեղինակներից մեկն անշուշտ օգտվել է մյուսից: Քննութիւնն անկասկածելի կերպով ցույց տվեց, թե այս հորջորջման ստեղծողը Խորենացին է և միայն Խորենացին կարող է լինել, իսկ Սեբեոսի Մար Աբաս Մծուրնացին (ուրեմն հետո, մինչև 628 թվականը) օգտվել է Խորենացու Պատմութիւնից:

Պատմութեան նույն գլխում (էջ 3) գրված է՝ «չոգաւ բնակեցաւ յերկիրն Արարադայ, ի տանն որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ հաւրն՝ և եղբարքն հանդերձ»: Քննութիւնը ցույց տվեց, որ այս անորոշ խոսքերն ու ակնարկութիւնը քաղված են Խորենացու Ա. գրքի 2 գլխից և միայն Խորենացու Պատմութեան այս գլխի միջոցով կարելի է հասկանալ Սեբեոսի գրածը:

Նույն Պատմութեան 10-ի գլխում (էջ 135) Դիմի եկեղեցական ժողովի դատարանական թղթում, որ գրված է 654-ին, կամ 643-ին, կա մի հատված, «ԶԹէանով ոմն զԼին մարդ զաշակերտ Պիւթադորայ հարցեալ եղև, թե յետ քանի աւուր մերձաւորութեան ի կին մարդ արժան է յարքունիս մտանել: Եւ նա ասէ. «յիւրմէն նոյն աւրին, յաւտարէն և ոչ բնաւ»:

Քննութիւնը ցույց տվեց, որ հատվածն առնված է Պիտոյից գրքից, որ բանասիրութեան ընդհանուր կարծիքով, Մովսես Խորենացու թարգմանութիւնն է (վերջին երեք ապացույցների մասին մանրամասն տես Սեբեոսի նոր հրատարակութիւնը, ծան. 8, 9 և 69):

Ուրեմն Սեբեոսի Պատմութիւնը պարունակում է չորս վկա-

յութիւն, որ Խորենացու Պատմութիւնը (և Պիտոյից գրքի թարգմանութիւնը) գոյութիւն են ունեցել 661, 645, 628 թվականներին:

Մի ուրիշ փաստաթուղթ, որով հաստատվում է, թե 7-րդ դարում հայտնի է եղել մի նշանավոր ու հեղինակավոր անձ՝ Մովսես քերթողահայր կամ Մովսես Խորենացի անունով՝ այդ վերը հիշված կեղծ ճառն է, այս հեղինակին վերագրված, որ մտել է Գիրք Թղթոցի մեջ, նրա մասին հետո դեռ կխոսինք:

Վեցերորդ դարը պատմական գրականութիւնից զուրկ է, ուստի և Խորենացու անվան հիշատակութեան առիթ ու տեղ չկա: Այս դարում գրված է եղել Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի Պատմութիւնը, որ մեր ձեռքը չէ հասել: Նշանակելու է սակայն որ Օրբելյանն իր Պատմութեան մեջ երեք անգամ առիթ է ունենում Պետրոս Սյունյաց եպիսկոպոս-պատմագրի անունը տալու, և երեք անգամն էլ հիշում է, թե նա եղել է Մովսես Խորենացու աշակերտը, հավանորեն այս տեղեկութիւնը հանելով Պետրոս եպիսկոպոսի Պատմութիւնից: Ժամանակագրորեն այս տեղեկութիւնը ոչ մի դժվարութեան չէ հանդիպում: 5-րդ դարի ութսուութիւնը ոչ մի դժվարութեան չէ հանդիպում: Մովսես Խորենացուն կանական թվականներին ապրող ծերունի Մովսես Խորենացուն կանական թվականների օրերում աշակերտ լինել Պետրոս եպիսկոպոսը, որ մատենագրեց 6-րդ դարի առաջին կեսում:

Հինգերորդ դարից մինչև ունինք Չաղար Փարպեցու կարևոր վկայութիւնը Մովսես փիլիսոփոսի վերաբերմամբ: Իր Թղթի մեջ առ Վահան Մամիկոնյան, իրեն արգարացնելով ստախոս արեղաների մեղադրանքների դեմ՝ վերջը ասում է. ենթադրենք թե ես մեղավոր եմ և իրավացի եմ կրում իմ պատիժը, բայց ինչպէս ուրիշ առաքելական մարդիկ այսպիսի և դեռ սրանցից է՝ ավելի նեղութիւնների հանդիպեցին այս աշխարհում և խստագույն վշտերի մեջ վախճանեցան:

Սրանից հետո թվարկում է հալածանքների ենթարկված մի շարք անձերի անուններ (այստեղ բնագրից մի թուղթ ընկած լինելով՝ շարքը, դժբախտաբար, թերի է մնում):

Այս անձերի մեջ առաջին տեղում հիշատակում է Մովսես, փիլիսոփոսին հետևյալ խոսքերով. «Երանելի փիլիսոփոսն Մովսէս, որ արդարեւ մինչդեռ էր ի մարմնի՝ ցանկ երկնային զօրացն էր քաղաքակից. ոչ ապաքէն ի տեղոջ է տեղի աբեղեանդ Հայոց

հալածական արարին: Ո՞չ զլուսաւորիչն եւ զտգիտահալած գրեանն նորա առ անգիտութեան փաթաղ-իկէս կոչէին. և այլ բազում ինչ իրօք թշնամանեալ՝ յետոյ ապա յաղագս այլոց ամօթոյ՝ զխարէական ղեպիսկոպոսութիւնս նման ղեղոց մահու արբուցեալ հեղձուցին զսուրբն: Որոյ ի ժամ վախճանին զինչպիսի ահաւոր նգովս գրով ի վերայ գլխաւորաց քահանայութեանդ ասացեալ է՝ ձեզէն իսկ գիտէք տեղեկացեալք: Սրան հաջորդում է թուղթն ընկած տեղը. թվարկման վերջում ավելացնում է. որ սրանք այսպէս թշնամանվել են, հայհոյանքներով հալածվել՝ ոչ թե մենք լսել ենք հեռավոր ժամանակներից մեզ հասած զրույցներից, այլ հենց մեր ժամանակ սրանք պատահեցին, և մենք ինքներս բոլորը տեսանք (Ղ. Փարպեցի, Թիֆլիս, 1904, էջ 202—3):

Ուրեմն՝ Ղազար Փարպեցին վկայում է, որ իրենից բիշ ժամանակ առաջ ապրելիս է եղել մի շատ նշանավոր մարդ, Մովսես անունով, որին նա կոչում է լուսավորիչ և փիլիսոփոս (նույն է թե քերթող, որ այս Մովսեսը գրած է եղել տգիտահալած գրքեր, որ նրան արհամարհել են ու հալածել տեղից տեղ: Այս վկայութիւնները միանգամայն համապատասխանում են այն տեղեկութիւններին, որ իր մասին Խորենացին հաղորդում է Ողբում և Բ. գրքի վերջին գլխում: Ղազարը դարձյալ վկայում է, թե այդ Մովսեսին, վերջը, ուրիշներից ամաչելով, եպիսկոպոս ձեռնադրեցին և այսպիսով նրա բողոքի ձայնը խեղդեցին: Այս վկայութիւնն էլ ստուգվում է այն հեղինակավոր, ինքնավստահ և իշխողական տոնով, որով խոսում ու դատում է Հայոց Պատմութեան հեղինակը¹: Այս փաստերին շատ լավ հարմարում է այն հին

¹ Այն բանասերները, որոնք Փարպեցու հիշած Մովսես փիլիսոփոսին չեն ուզում նույնացնել Մովսես Խորենացու հետ, սովորաբար իբրև հիմք բերում են այն առարկութիւնը, թե այս երկու անձերի նույն լինելու ղեպքում՝ Փարպեցին պետք է հիշած լիներ Խորենացու Պատմութիւնը Այս առարկութեան դեմ պետք է նկատել, որ Փարպեցին իր թուղթը գրում է գայրացած՝ զագագած հոգով, իբրև հանիրաւի հալածված և այս վիճակում նա առանց քաշվելու հիշում է հալածանքով իրեն վիճակակից Մովսեսին և նրա տգիտահալած գրքերը: Իսկ իր Պատմութիւնը գրելիս նա հալածանքներից ազա՞ն էր, վախելում էր Վահան Մամիկոնյանի հովանավորութիւնը, և քանի որ հայտնի էր Խորենացու հակախրոնիկները ղեպի Մամիկոնյան տոհմը՝ անտախտութիւն կլիներ իր բարեկամի, մեկենասի՝ Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնյանի

ավանդութիւնը, թե Գյուլտ կաթողիկոսն անհայտութեան մեջ գտել է իր աշակերտակից Մովսեսին և նրան ձեռնադրել եպիսկոպոս: Այս մասին հետո ավելի մանրամասն:

Բացի սրանից, Ղազարը ցույց է տալիս, թե ովքեր են եղել հալածիչները և թե հալածանքները անհատական բնույթ չեն կրել, այլ ուղղված են եղել որոշ դասակարգի մարդկանց դեմ:

Առ ժամանակ թողնելով հալածանքների և նրանց լուսաբանութիւնը՝ ամփոփենք վերոհիշյալ տվյալները Մովսես Խորենացու և նրա Պատմութեան ժամանակի մասին:

Մենք տեսանք, որ Խորենացու իր անձի մասին հաղորդած կենսագրական տեղեկութիւնները լիովին արդարանում են նրա Պատմութեան մեջ: Որ նա երկար ժամանակ ապրել է Ալեքսանդրիայում, կատարյալ հունական կրթութիւն է ձեռք բերել, ի միջի այլոց «ամենախմաստ արվեստ», այս երևում է նրա լայն աշխարհայացքից, Հունաց պատմութեան, փիլիսոփայութեան, քաղաքատեղութեան, ղրիցարանութեան ծանոթութիւնից, նրա ձաշակով քերթողական ոճից, նրա հունագիտութիւնից և հռոմասիրութիւնից: Որ նա եղել է Սահակի և Մեսրոպի աշակերտ՝ այս երևում է նրա անկեղծ սիրուց և երախտագիտութիւնից գեպի իր վարդապետները, նրանց կյանքի ու գործունեութեան նկարագրութեանը այնքան ընդարձակ տեսք տալուց իր Պատմութեան մեջ, որտեղ, ի միջի այլոց, հաղորդում է այնպիսի մանրամասնութիւններ, ոչ չկան Կորյունի և այլ աղբյուրների մեջ: Որ նա 5-րդ դարի վերջին քառորդի հեղինակ է՝ այս երևում է Պատմութեան վերջին մասերի ժամանակագրութեան ճշտութիւնից, այն մանրամասն պատմական տեղեկութիւններից, Հայաստանի երկու մասի բաժանվելուց հետո, որոնք ուրիշ աղբյուրների մեջ չկան և որոնք ինքը գրել է իբրև ժամանակակից կամ ժամանակով փոքր ինչ հեռու (ինքն էլ ասում է. «Որ ինչ առ մերով ժամանակաւս եղեալ կամ դոյզն ինչ հեռի՝ զրուցեցից քեզ անսխալ» (Գ., 1): Իսկ որ նա հալածանքներ է կրել՝ այդ էլ լրացնում է Ղազար Փարպեցին: Որ նա կեղծարար, խա-

նկառմամբ՝ Պատմութեան մեջ հիշատակել հակամաքիկոնյան պատմագրին: Բացի սրանից՝ նա կարող էր նույնիսկ ծանոթ էլ չլինել Խորենացու Պատմութեան, որ միայն մի քանի տարի առաջ էր գրվել և ընդօրինակութիւններով զեռ բազմացած ու ընդհանրացած չէր:

բերա մարդ չէ՝ երևում է Պատմության շատ տեղերի քննու-
թյունից:

Հայոց Պատմությունից հանված այս տեղեկությունները հաստատվում են մի շարք հավաստի տեղեկություններով և փաս-
տերով՝ 5—9-րդ դարերի հայ և վրացական գրավոր աղբյուրնե-
րից: Դազար Փարպեցին գիտե իրենից քիչ ժամանակ առաջ աղ-
բած լուսավորիչ և փելիսոփոս (քերթող) Մովսեսին: 7-րդ դարի
սկզբներում Մովսես Սորենացու անունն այնքան հռչակված է
եղել իբրև նշանավոր գրական անձի, որ նրա անունը շահագոր-
ծել են՝ նրա անունով մի կեղծ ճառ հորինելու՝ երկաբնակներին
գեմ կռվելու համար: Նույն դարի 60-ական թվականներին Սե-
բեոսը չորս անգամ հիշում է Մովսես Սորենացու Պատմությունն
ու Պիտոյից գիրքը և օգտվում է նրանցից: Նույն դարի 80-ական
թվականներին Անանիա Շիրակացին իր ժամանակագրության
մեջ հիշում է Մովսես Սորենացուն և նրանից առնում ժամանա-
կագրությունը Ադամից մինչև Նոյ: 8-րդ դարի սկզբներում Հոհան
Օձնեցի կաթողիկոսն ամենամեծ գովեստներով հիշում է Մովսե-
սին իբրև ժամանակով ոչ հեռու եզնիկից: 9-րդ դարում Վրաս-
տանի Արսեն կաթողիկոսը երկու անգամ հիշատակում է Մովսե-
սին՝ իբրև շատ հեղինակավոր հոգևորականի՝ Սահակ կաթողիկոսի
անվան հետ: Նույն 9-րդ դարում մի ուրիշ անանուն վրացի

1 Եթե մեկը կամենա առարկել, թե Դազարի, Օձնեցու, Արսեն կաթո-
ղիկոսի հիշած նշանավոր տիեզերահռչակ Մովսեսը, որ, նրանց ասելով, աղբե-
լիս է եղել 5-րդ դարում, ժամանակով մոտ եզնիկին և Փարպեցուն, ուրիշ
Մովսես է և ոչ թե Սորենացին՝ ապա նա պարտավոր պիտի լինի ցույց տալ
թե ով է այդ բազմահռչակ Մովսեսը, որ այլուստ հայտնի չէ, որոնք են նրա
աղբատանույթ գրքերը, որոնք անձանոթ են մնացել, և ի՞նչ գրական արդյունք-
ների համար այդ Մովսեսն արժանացել է այնպիսի բարձր գովեստների: Այդ
Մովսեսը միայն Սորենացին կարող է լինել, և նրա ամենանշանավոր գործը,
որով արժանացել է նման գովեստների՝ միայն նրա Հայոց Պատմությունը:
Եթե ներկայումս, երբ քննադատությունը Հայոց Պատմության պատմական
արժեքը շատ նվազեցրել է, երևան է հանել նրա բազմաթիվ սխալները, և
այնուամենայնիվ այդ Պատմությունը համարում է մի եղական մատենագրա-
կան հիշատակարան, ապա հին դարերում, երբ այս մերկացումները չէին եղել,
և Պատմության ամեն մի խոսքն ընդունվում էր իբրև պատգամ՝ այդ Պատ-
մության հարգն ու հրապույրն անչափ բարձր էր, նա համարվում էր Հայոց
սուրբ գիրքը, և այդ պատճառով էլ նրա հեղինակ Մովսեսն արժանացել է
այնքան բարձր և անօրինակ գնահատումների:

հեղինակ ընդարձակ քաղվածքներ է անում Մովսես Սորենացու
Պատմությունից, առանց հեղինակի անունը տալու:

Այսքան բազմակողմանի, մեկը մյուսի հետ համերաշխ և
համաձայն փաստերը լիակատար իրավունք են տալիս եզրակաց-
նելու, թե Մովսես Սորենացին արդարև ապրել է 5-րդ դարում,
եղել է ս. Սահակի և Մեսրոպի աշակերտ և գրել է Հայոց Պատ-
մությունը 5-րդ դարի վերջին քառորդում:

Բ. ՄԵՐ ԶԵՌՔԸ ՀԱՍԱԾ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ՍԿՋԲՆԱԳԻՐԸ ԶԷ, ԱՅԼ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ Է ԱՎԵԼԻ ՈՒՇ
ԺԱՄԱՆԱԿԻ

Այն տվյալները, որոնցից վերոբերյալ եզրակացությունը
հանցի՝ մեծ մասամբ հայտնի էին կամ կարող էին դուրս բերվել
Հայոց Պատմության ուշագիւր և անկանխակալ ուսումնասիրու-
թյունից: Բայց նրանք ուշագրության չառնվեցին այն բանա-
սերների կողմից, որոնք վերջին 50—60 տարվա ընթացքում
Պատմությունն ուսումնասիրելիս գտան փաստեր, որոնք մատ-
նանշում էին պատմական անցքեր և աղբյուրներ 7—9-րդ դա-
րերից, որոնց հիման վրա էլ նրանք այս Պատմության գրու-
թյան ժամանակն իջեցրին մինչև 9-րդ դարը: Ոչինչ կարելի չէր
լինի առարկել այս մեթոդի գեմ՝ եթե նրանք միաժամանակ
նեղություն հանձն առնեին հերքելու բոլոր այն փաստերը, որոնք
խոսում են իրենց եզրակացության գեմ: Հիշավի, եթե Հայոց
Պատմությունն 8—9-րդ դարերի գործ է, և նրա հեղինակը 5-րդ
դարում ապրող Սահակի-Մեսրոպի աշակերտ Մովսես Սորենացին
չէ, ապա ի՞նչպես բացատրել այն բազմաթիվ փաստերը, որոնք
վկայում են հօգուտ այս բանի: Պետք էր մի առ մի հերքել այս
բոլոր փաստերը, գտնե բացատրել այնպես, որ նրանք չհակասեին
իրենց եզրակացության: Հակառակ դեպքում ստացվում է մի
անօրինակ բան. մի կողմից՝ Սորենացու Պատմությունը 5-րդ
դարի գործ է. սրա համար կան բազմաթիվ չհերքված փաստեր.
մյուս կողմից՝ Սորենացու Պատմությունը 8—9-րդ դարերի գործ
է. սրա համար բերվում են ուրիշ բազմաթիվ փաստեր, որոնց մի
քանիսն անհերքելի է: Տրամադժորեն հակադիր այս երկու տե-
սակետներից մին է ճշմարիտը:

Այս հակասութիւնն առաջ է եկել վերջին տարիներէ քննադատութեան միակողմանիութիւնից: Բանասերները, նկատելով Խորենացու Պատմութեան մեջ պատմական անցքեր կամ աղբյուրներ, որոնք 5-րդ դարից հետո եւն տեղի ունեցել կամ գրվել՝ արանց բացատրութեան համար դիմել են ամենահեշտ ճանապարհին—եզրակացրել են, թե մի պատմութիւն, որ պարունակում է տեղեկութիւն 6-րդ դարում կատարված անցքի մասին՝ կամ իբր աղբյուր գործ է ածել 7-րդ դարի մի գրվածք՝ բնականաբար պետք է գրված լինի այդ պատմական զեպքից կամ այդ գրական աղբյուրից հետո: Այս մեթոդն ընդունելի է միայն է, երբ գործ ունինք մի անհայտ գրվածքի հետ, որի ոչ գրութեան ժամանակն է հայտնի, և ոչ հեղինակը. բայց այս մեթոդն անընդունելի է Խորենացու Հայոց Պատմութեան վերաբերմամբ, քանի որ անկասկածելի բազմաթիվ ապացույցներ կան նրա վավերականութեան—5-րդ դարի գործ լինելուն: Այս զեպքում բանասիրութիւնը, հանդիպելով Հայոց Պատմութեան մեջ ուշ ժամանակներ մատնանշող պատմական անցքերի կամ աղբյուրների՝ պետք է ուշի ուշով քննէր այս անցքերն ու աղբյուրները, ինչպես արավ Կոնիքիքը, կամ պետք է գտներ մի այլ բացատրութիւն, որով հարթվէր այդ աչքի ընկնող հակասութիւնը:

Առանց քննութեան մեջ մտնելու, թե Հայոց Պատմութեան մեջ մատնանշված անցքերը կամ աղբյուրներն իրոք ավելի ուշ ժամանակի են պատկանում, և *à priori* ընդունելով այդպիսի անցքերի և աղբյուրների գոյութիւնը կամ հնարավորութիւնը՝ ես գտնում եմ, որ այդպիսի հակաժամանակագրական փաստերն ուրիշ բնական և հավանական բացատրութիւն ունին: Այդ բացատրութիւնն այն է, որ մեր ձեռքը հասած Հայոց Պատմութիւնը Մովսէս Խորենացու գրած սկզբնագիրը չէ, այլ խմբագրութիւն է այդ սկզբնագրի, և խմբագրողը կամ խմբագրողներն սկզբնապիսի մեջ փոփոխութիւններ են մտցրել—ինչ-ինչ մասեր զուրս գցել, ուրիշ մասեր ավելացրել, լեզուն, ոճը կոկել՝ համապատասխան իրենց դիտումներին, իրենց ունեցած տեղեկութիւններին կամ ճաշակին:

Ոչ մի արտասովոր ու անբնական բան չկա այս կարծիքի մեջ. գրվածքների հետագա խմբագրութեան զեպքեր շատ կան նաեւ մեր հին մատենագրութեան մեջ, և Խորենացու Պատմու-

թիւնը, որ ամենից շատ կարգացվող գիրքն էր և իբրեւ ընթերցանութեան դասագիրք էր ծառայում, հարկավ, կարող էր և պետք է նախարկվել խմբագրութեան ու մշակումների թեւ ըստ լեզվի և թեւ ըստ բովանդակութեան:

Ինչպես հայտնի է, Ղազար Փարպեցու Պատմութեան սկզբում մի ընդարձակ հատված կար, որի մեջ պատմված էր գրերի գոյութիւնը, բառ առ բառ նման Խորենացու պատմածին: Այս բանը տեղիք էր տվել զանազան ենթադրութիւններին: Բայց Փարպեցու քննական հրատարակութեան աշխատանքների ժամանակ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) բաղդատեց էջմիածնի մատենադարանի՝ Փարպեցու Պատմութեան երկու ձեռագիրները, որոնցից մեկն արտագրված էր մյուսից, և զուրս եկավ, որ այդ հատվածը մայր ձեռագրում չկա, այլ մուծված է երկրորդի մեջ, այն էլ Խորենացու անգրանիկ՝ Ամատեղաւմի տպագրութիւնից (1695-ին): Այսպիսով այդ հատվածը ճանաչվեց ընդմիջարկութիւն, և քննական հրատարակութեան մեջ Փարպեցու Պատմութեան բնագրից զուրս գցվեց: Նույն Փարպեցու Պատմութեան մեջ այսպիսի մի ընդմիջարկութիւն է ս. Սահակի տեսիլն ու նրա մեկնութիւնը, որտեղ ակնարկութիւններ կան 9-րդ և 10-րդ դարերի անցքերի մասին: Եթե մենք ունենայինք Փարպեցու հին ձեռագիրներ, 8—9-րդ դարերից, կտեսնեինք, որ նրանց մեջ բացակայում են տեսիլն ու մեկնութիւնը, ուրեմն և հանգիստ խղճով նրանց էլ զուրս կգցէինք իբրեւ ընդմիջարկութիւններ. բայց քանի որ այդպիսի հին ձեռագիրներ չկան՝ տեսիլն ու մեկնութիւնը Պատմութեան մեջ մնում են խիստ կասկածի տակ, իբրեւ ընդմիջարկութիւններ. բայց այս տեսիլքի ու նրա մեկնութեան հիման վրա մենք Փարպեցու գրութեան ժամանակը չենք իջեցնում մինչև 10-րդ դարը, ինչպես անում ենք Խորենացու նկատմամբ:

Կորյունի «Վարք սրբոյն Մեսրոպայ» մեկ հասել է երկու խմբագրութեամբ: Ընդարձակն սկզբնագիր է, Կորյունի գրածը, իսկ համառոտը խմբագրութիւն է ավելի ուշ ժամանակի և կրում է Խորենացու ազդեցութեան հայտնի հետքեր: Ենթադրենք թե սկզբնագիրը կորած լինէր, և մենք նրա մասին տեղեկութիւն չունենայինք: Այս զեպքում բնականաբար սկզբնագիր պետք է համարեինք համառոտը, և առաջ կգային անվերջ կասկածներ ու

ենթադրություններ Կորյունի անձի, նրա ապրած ժամանակի և վարքի գրության ժամանակի մասին, քանի որ համառոտի լեռն և ուրիշ գրական աղբյուրների ազդեցությունը նրա վրա՝ պետք է հակասեին այն տեղեկության, թե Կորյունը Մեսրոպի ավագագույն աշակերտներից մեկը և նրա գործակիցն է եղել։ Մոտավորապես այսպիսի մի գրություն ստեղծվել է Խորենացու Պատմության համար։

Մի ուրիշ լավագույն օրինակ էլ Շիրակացու Աշխարհացույցն է։ Մինչև 1881 թվականը բոլոր բանասերները միամտորեն հավատացած էին, թե մինչև այդ ժամանակ մի քանի անգամ տալագրված Աշխարհացույցն սկզբնաղբի է, բուն հեղինակի գրածը՝ Նույնիսկ Սուքրին, որ 1881 թվին հրատարակեց ընդարձակ Աշխարհացույցը, ֆուրմ էր նույն կարծիքին, թե սկզբնաղբին այն հին համառոտն է, իսկ իր հրատարակած ընդարձակը՝ նրանից խմբագրված է հավելումներով։ Մանրամասն քննությունը միայն երևան հանեց, թե ոչ համառոտը և ոչ ընդարձակն սկզբնաղբի չեն, այլ երկուսն էլ, մեկը մյուսից անկախ, խմբագրված են մի ավելի ընդարձակ սկզբնաղբից, որ այժմ անհետ կորած է։

Ճիշտ այս բանն է տեղի ունեցել և Հայոց Պատմության վերաբերմամբ. մեր ձեռքը հասած Պատմությունը խմբագրված է Խորենացու գրած սկզբնաղբից, որ այժմ անհետ կորած է։ Եթե Աշխարհացույցը երկու անգամ մեկը մյուսի հետևից կարող էր ենթարկվել խմբագրության, նույնն ավելի մեծ հավանականությամբ կարող էր պատահել և Պատմության հետ, որ Աշխարհացույցից անհամեմատ ավելի հաճախ էր կարդացվում, շատ էր տարածված և իր տենդենցներով կարող էր անհամապատասխան լինել այս կամ այն դարում Հայաստանում տիրող տենդենցներին, ուրեմն և կարիք պետք է զգացվեր նրան տեղ-տեղ փոփոխության ենթարկելու, հարմարեցնելու ժամանակակից տենդենցներին։

Մեր ձեռքը հասած Պատմության խմբագրությունը լինելը դժբախտաբար չենք կարող հաստատել Պատմության բազմաթիվ ձեռագիրների բաղդատությունով, որովհետև սրանք բոլորը շատ նոր ժամանակից են։ Հայոց Պատմության ամենահին ձեռագիրը, որ հասել է մեր ձեռքը՝ Էջմիածնի թիվ 249 ձեռագիրն է (Կարե-

նյանի ցուցակով՝ 242)։ Սրա նորոգված մասերը 1567 և 1684 թվականներից են, իսկ հնագույն մասը, որ գրեթե Պատմության երկու երրորդ մասն է կազմում՝ 14-րդ, գուցե և 13-րդ դարից է (տես Մովսես Խորենացու Պատմություն, Թիֆլիս, 1913, Առաջաբան, էջ ԺԺ—ԻԱ)։ Իսկ 5-րդ դարից մինչև 13-րդ դարը, ութ հարյուր տարի ժամանակ, շատ ընդարձակ շրջան էր, երբ կարող էր տեղի ունենալ այս խմբագրությունը։ Այս շրջանից, թեև ուղի 9-րդ դարից, ոչ մի ձեռագիր մեզ չէ հասել, որ կարողանայինք համեմատել նորագույն ձեռագիրների հետ և երևան հանել տարբերությունները հին ձեռագրի և նորերի միջև։ (Նորագյուտ հնագույն Պատմիկի մասին քիչ հետո)։

Բայց եթե Խորենացու Պատմության ձեռագիրները մեզ այս հարցում չեն օգնում՝ պատահաբար մի կողմնակի ցուցմունք կա, որ լիովին ապացուցում է Խորենացու սկզբնաղբի այլալից լինելու փաստը և որի մասին գրել եմ դեռ 1892 թվի գեկտեմբերին¹։

Որովհետև հարցը շատ կարևոր է, իսկ իմ հոգվածը շատերին հայտնի չէ և անմատչելի է՝ հարկ եմ համարում համառոտակի բերել նրա բովանդակությունն ու եզրակացությունը։

Փրանսիացի հայագետ Ա. Կարրիերը 1892 թ. օգոստոսին և գեկտեմբերին տալագրեց «Հանդէս ամսօրեայ»-ում երկու հոդված, որոնց մեջ քննության էր առնում Խորենացու Պատմության Բ. գրքի 83-րդ (ՁԳ) գլուխը։ (Այս գլխում Խորենացին պատմում է, թե Դիոկղետիանոսի Մաքսիմինա դուստրն ամուսնացավ Կոստանդ կեսարի հետ, որ Հռոմի Կոստ թագավորի որդին էր, Հելենա պոռնիկից ծնված։ Տրդատը հարսանիքի ժամանակ ծանոթանում է Կոստանդիանոսի հետ. Կոստանդի մահից հետո Դիոկղետիանոսը նրա տեղ կայսր է նշանակում Կոստանդիանոսին։ Սա դեռ կեսար եղած ժամանակ կռվի մեջ հաղթվելով՝ երազում տեսնում է մի խաչ՝ վրան դրված. «Այսու յաղթեա», խաչը սիւղնոյն (signum, զինվորական նշան) դարձնելով՝ հաղթում է Թշնամիններին։ Վերջն իր կնոջից հրապուրվելով՝ քրիստոնյաների դեմ հալածանք է հարուցում, որի պատճառով հիվանդանում է երեկանդական բորոտությունով (ծանր տեսակի բորոտություն, որի ժա-

¹ Տես «Մուրճ» ամսագիր, 1892, գեկտեմբեր, էջ 1852—1863։

մանակ մարմնի մորթի փղի մորթի նման կարծրանում է, խտ-
րուկ): Բժիշկները և կախարդները չեն կարողանում օգնել: Քուր-
մերը խորհուրդ են տալիս՝ փոքրիկ երեխաներ մորթել, արյունը
հավաքել ավազանի մեջ և տաք-տաք լողանալ նրանց արյունով,
որով բժշկություն կգտնէ: Բայց Կոստանդիանոսը խղճահարվում
է երեխաների լացից, մայրերի ողբից, և լավ է համարում հի-
վանդ մնալ, քան այնքան երեխաներ մորթոտել: Այս մարդասի-
բույթյան փոխարեն առաքյալները գիշերը տեսիլքում երևում են
նրան և պատվիրում են մկրտվել Հոռմի Սեղրեստրոս եպիսկոպո-
սից, որով բժշկություն կգտնէ: Կոստանդիանոսը մկրտվում է,
քրիստոնյա է գտնւում, առողջանում է, և նրա առաջ աստված
ջնջում է բռնավորներին, ինչպես համառոտ պատմում է Ադա-
թանգեղոսը:

Կարբիները ցույց տվեց, որ այս գլխի բովանդակությունը,
տեղ-տեղ բառացի կերպով, վերցված է Սեղրեստրոսի ընդարձակ
Վարքի հայերեն թարգմանությունից, որ կարող էր կատարված
լինել ամենավաղը 6-րդ դարի կեսերին (հետո այս թարգմանու-
թյան ժամանակը իջեցվեց մինչև 7-րդ դարի վերջին քառորդը).
ուրեմն խորենացու Պատմությունը, որի մեջ իբրև աղբյուր գործ
է անված 6-րդ դարի կեսերից մի գրվածք՝ կարող է գրված լինել
6-րդ դարի կեսից հետո, կամ 7-րդ դարում:

Կարբիների այս հոգվածը, որ հեղաշրջում էր ավանդական
համոզմունքը Հայոց Պատմության գրության ժամանակի մասին
և գուրս էր բերում նրան իբրև 7—8-րդ դարերի մի կեղծիք, ահա-
դին աղմուկ հանեց հայ բանասիրության մեջ: Սկսեցին այս
մասին թեյր և դեմ կարծիքներ հայտնել: Ես էլ այս հարցով
զբաղվեցի և եկա այն եզրակացության, թե այդ 83-րդ գլուխը,
որ պարունակում է Կոստանդիանոս կայսեր դարձի առասպելա-
կան պատմությունը՝ հարազատ խորենացու գրածը չէ, այլ հե-
տամուտ է: Իմ այս եզրակացության հիմք ծառայեցին հետևյալ
գիտողությունները:

1. Խորենացու Պատմության մեջ պակասում է Հայերի
քրիստոնեություն ընդունելու պատմությունն իր բոլոր հան-
գամանքներով, այսինքն խորենացին չէ պատմում Գրիգորի չար-
գամանքները, վիրապը ձգվելը, Հռիփսիմյան կույսերի Հայաստան
չաբանքները, վիրապը ձգվելը, Հռիփսիմյան կույսերի Հայաստան
գալը, նահատակվելը: Տրդատի հիվանդությունը, Գրիգորին վի-

րապից հանելը, քարոզությունը, թագավորի բժշկությունը, Գրի-
գորի՝ Հայաստանի եպիսկոպոս ձեռնադրվելը Կեսարիայում, Տրդա-
տին և հայ ժողովրդին մկրտելը:

Այս բաները խորենացին չէր կարող չգիտենալ, քանի որ
ձեռքի տակ ուներ Ադաթանգեղոսի Պատմությունը, որի վրա
հաճախ մասնացույց է լինում և քանի որ մյուս կողմից նա
գիտե և զանազան տեղերում հիշում է Գրիգորին մանուկ հաս-
կում Կեսարիա փախցնելը, ամուսնանալը, երկու որդի ունենալը,
Տրդատի մոտ ծառայության մտնելը, գիտե Հռիփսիմյան կույսե-
րին և նրանց ընկերներից մեկին՝ կույս Նունին:

Նա չէր կարող արհամարհել Հայոց դարձն ու մկրտությունը,
քանի որ անչափ բարձր է գնահատում Գրիգորին և Տրդատին,
իբրև Հայոց լուսավորության զուգահեռասար գործակիցների:
Չէր կարող զանց անել պատմել իր բնիկ թագավորի՝ Տրդատի
դարձն ու մկրտությունը, մինչդեռ պատմում է օտար թագավորի
դարձն ու մկրտությունը, ինչպես նաև Վրաց դարձը Նունեի քա-
րոզությամբ: Սրանից բնականաբար հետևում է, թե խորենացին
գրած է եղել Հայոց դարձի պատմությունը, բայց մեզ անհայտ
պատճառով դուրս է ընկել նրա Պատմությունից, անհետ կորել է:

2. Հայոց դարձի այս կորած պատմությունը խորենացու
Պատմության մեջ պետք է գրավեր նրա երկրորդ գրքի 83-րդ
գլուխը, որտեղ այժմյան մեր ունեցած բնագրում պատմվում է
Կոստանդիանոս կայսեր դարձը: Այս եզրակացությունը հետևում
է նրանից, որ նախընթաց 82-րդ գլխում պատմվում են Տրդատի
գործերը նախքան քրիստոնեություն ընդունելը, իսկ հաջորդ
84-րդ գլխում՝ տեսնում ենք, որ Տրդատը, արդեն քրիստոնյա,
գնում է Կոստանդիանոս կայսեր տեսության: Ուրեմն խորենացու
սկզբնագիր 83-րդ գլխում պատմված է եղել Հայոց դարձը, իսկ
այժմյան բնագրում պատմված է Կոստանդիանոսի դարձը: Սրանք
երկուսը չէին կարող մի գլխում ամփոփվել, քանի որ Հայոց
դարձն ըստ ինքյան մի ընդարձակ նյութ է և այնքան կարևոր
ու ինքնամփոփ, որ խորենացին չէր կարող նրան կցել Կոստան-
դիանոսի դարձի պատմությունը, որ իր կողմից դարձյալ մի
ինքնամփոփ և անկախ Պատմություն է: Այս երկու դարձերի
պատմությունները չէին կարող առանձին-առանձին գլուխներ
կազմել, որովհետև այս դեպքում 82-րդ և 84-րդ գլուխների մեջ

կատարելիս երկու գլուխ՝ 83-րդ թվահամարով: Սրանից եղբա-
կացնում ենք, որ Խորենացու սկզբնագիրը Պատմությունից դուրս
է գցված Հայոց դարձի պատմությունը և փոխարինված է Կոս-
տանդինոսի դարձի Պատմությամբ: Ուրեմն այս վերջինը Խո-
րենացու գրածը չէ, այլ հետո է մտցված Հայոց Պատմության մեջ,
փոխարինելու համար սկզբնագիրը պատմությունը Հայոց դարձի
մասին:

3. Այս եզրակացությունը, որ հանում ենք Հայոց Պատմու-
թյան բնագրի քննությունից՝ հաստատվում է մի կողմնակի
փաստով:

Ինչպես հայտնի է՝ Ասողիկը, իր Պատմության երկրորդ
հանդեսը գրելիս՝ հավատարմությամբ հետևում է Խորենացուն,
երբեմն բառացի արտադրելով, երբեմն համառոտելով: Այսպես էլ
վարվել է նա ներկա դեպքում, սկսած Խորենացու 82-րդ գլխից
հաջորդաբար: Նա մասամբ բառացի և մասամբ կրճատ ձևով բե-
րում է Խորենացու 82-րդ գլուխը. 83-րդ գլխից, որ պարունակում
է Կոստանդինոսի դարձը՝ ոչ մի բառ չէ բերում, այլ դրա փո-
խարեն համառոտակի գնում է Հայոց դարձի Պատմությունը.
այնուհետև բառացի կամ քաղվածորեն բերում է 84-րդ գլուխը և
այսպես շարունակում:

Որպեսզի այս բանը շոշափելի դառնա՝ կրեք մի ընդար-
ձակ հատված Ասողիկից, առանց ընդմիջումների, դիմացը դնելով
Խորենացու Պատմությունից համապատասխան մասը, Ասողիկի
մեջ ցրելով գրելով այն կտորները, որոնք Խորենացու մոտ չկան:

Ասողիկ

Արդ խնդրելով զառաջին ամս
Տրդատայ՝ զտաք թագաւորեալ յեր-
րորդ ամին Դիոկղետիանոսի եւ
երկրորդ ամի Շապուհոյ Պար-
սից արքայի: Որոյ հասեալ ի
Կեսարիա՝ յուրիք ի նախարարացն
Հայոց ընդ առաջ ելանէին: Եւ յա-
ռաջին ամին թագաւորութեան
Տրդատայ սուրբն
Գրիգոր անտանեւ ի չաբչա-
րանացն տարեալ վասն
Քրիստոսի հաւատոյն՝ զի-

Խորենացի

Գլ. 82..... մանրախուզիւ քննեալ
զտաք զթագաւորելն Տրդատայ յեր-
րորդ ամի Դիոկղետիանոսի եւ զալ
այսր մեծաւ զօրու: Որոյ հասեալ
ի Կեսարիա՝ յուրիք ի նախարարացն
ընդ առաջ լինէին.....

Իսկ քաջին Տրդատայ երազապէս
եւ բազում ճակատս տուեալ, նախ
ի Հայս եւ ապա ի Պարսս՝ իւրով
անձամբ աւելը գլաղթութենէս... Կո-
րովեացն Պարսից զփորձ առեալ
զսաստկութեան սկալին... բազում
վերօք պատեալ զձին սատակեցին
նետաձգութեամբ, որոյ զարկուցեալ
յերկիր՝ ընկնոյր զարքայն: Իսկ
նորա յարուցեալ եւ հետի յարձա-
կեալ՝ փոխանակ իւր զբազումս ըն-
կնոյր ի թշնամեացն եւ զմիոյ
սուրմն ձի կալեալ աշտանակեաց
արիաբար: Դարձեալ յերկրորդումս
միւս անգամ կամաւոր լեալ ի հետի՝
սուսերաւ զփղացն զերամակս պու-
ղէր: Եւ այսպիսի նահատակութեամբ
յամեալ ի Պարսս եւ յԱսորեստան՝
անդր եւս քան զՏիգրոս յարձակի:

Եւ ի հնդկատասերորդ ա-
մին Տրդատայ սուրբ կու-
սանքն Հռիփսիմեանք եւ
Գայիանեանք վասն աս-
տուածալաշտութեան հալա-
ծեալք ի Դիոկղետիանոսէ,
եկեալ ի Վաղարշապատ քա-
ղաք զմարտիրոսական չար-
շարանս ընկալան ի Տրդա-
տայ արքայէ. յորում աս-
տուածատուր պատուհասն
ի վերայ Տրդատայ եւ աշ-
խարհիս Հայոց: Եւ ի նմին
աստուածահրաշ յայտնու-
թեամբ ելեալ ի վերապէն
սուրբն Գրիգոր լուսաւոր
վարդապետութեամբ սկիզ-
բն առնէ եւ բժշկութեան
հարուստ ծոցն. որ հինգ օր
նսսուալ մնացեալ ամե-
նայն բազմութեանն, ունկն
դնելով վարդապետութեան
արքայն Գրիգորի, որ են յա-

Իսկ քաջին Տրդատայ երազապէս
եւ բազում ճակատս տուեալ, նախ
ի Հայս եւ ապա ի Պարսս՝ իւրով
անձամբ աւելը գլաղթութենէս... Կո-
րովեացն Պարսից զփորձ առեալ
զսաստկութեան սկալին... բազում
վերօք պատեալ զձին սատակեցին
նետաձգութեամբ, որոյ զարկուցեալ
յերկիր՝ ընկնոյր զարքայն: Իսկ
նորա յարուցեալ եւ հետի յարձա-
կեալ՝ փոխանակ իւր զբազումս ըն-
կնոյր ի թշնամեացն եւ զմիոյ ու-
րումս զձին կալեալ՝ արիաբար աշ-
տանակէր: Դարձեալ յերկրորդին միւս
անգամ կամաւոր լեալ հետի՝ սուսե-
րաւ զերամակս փղացն պուղէր: Եւ
այսպիսի նահատակութեամբ յամեալ
ի Պարսս եւ յԱսորեստան, անդր
եւս քան զՏիգրոս յարձակի:

Գլ. 83. (Չունի ամբողջ ցրվ տըպ-
ված պարբերությունը. «Եւ ի հնդկ-
տասաներորդի ամին — վաթսուն օր
վարդապետութեան նորա»): Սրա փո-
խարեն ունի Կոստանդինոսի դարձի
պատմությունը, որի համառոտ բո-
վանդակությունը վերը բերինք):

ծագել է արաբական լեւրսիան: (Մառն էլ այս կարծիքին է): Իսկ այս դեպքում խորենացին, իր ազդեցութիւն հետեւելով, պետք է պատմեր, որ Տրդատի հետ մկրտված են եղել նաև հիշյալ երեք ազգերի թագավորները, այսինքն ս. Գրիգորին պետք է դուրս բերեր իբրև լուսավորիչ չորս ազգի և ոչ թե միայն հայ ազգի, հակառակ հայերեն Ագաթանգեղոսին, որի մեջ Գրիգորն ազգայնացրած է, դուրս է բերված Հայոց աշխարհի լուսավորիչ:

Այս բանը բնական կհամարվեր և ոչ մի առարկութեան չէր հանդիպի 5-րդ դարում, երբ Հայերը, Վրացիք, Արևադներն ու Ալանները մի եկեղեցի էին կազմում: Բայց 7-րդ դարից հետո երբ Վրացիք բաժանվեցին Հայոց եկեղեցու միաբանությունից, երբ երկու եկեղեցի դառնալով սկսեցին միմյանց փոխադարձաբար հերձվածող կոչել՝ այլևս անհանդուրժելի կդառնար, որ ս. Գրիգորը լուսավորիչ լիներ ոչ միայն Հայերի, այլև Վրացոց և ուրիշների, չէր կարելի թույլ տալ, որ Վրացիք էլ նույնքան իրավունք ունենային ս. Գրիգորին կոչել իրենց լուսավորիչը, որքան և Հայերը. չէր կարելի թույլ տալ, որ Պորենացու նման հեղինակավոր ու տարածված պատմագիրը վկայեր, թե ս. Գրիգորը հավասարապես լուսավորիչ է եղել Հայոց, Վրաց, Արևադների և Ալանների: Պետք էր այդ հետքը ոչնչացնել, որպեսզի ս. Գրիգորը դառնա բուն ազգային — Հայոց լուսավորիչ, ինչպես է հայերեն Ագաթանգեղոսում: Իմ կարծիքով՝ այս է եղել պատճառը, որ Պորենացու սկզբնաղբի 83-րդ գլուխը, որի մեջ պատմվում էր Հայոց, Վրաց, Արևադների և Ալանների դարձի պատմությունը՝ Պորենացու բնագրից դուրս է գցված, բայց պակասը լրացնելու համար տեղը գրված է Կոստանդիանոսի դարձի պատմությունը, որին լավ հարմարվում է 84-րդ գլուխը, որտեղ պատմվում է Տրդատի՝ Կոստանդիանոսին տեսութեան գնալը (նրա դարձից հետո): Սրանով կարելի է բացատրել և Ասողիկի լույսը հայոց մկրտութեան մասին: Ասողիկն իր ձեռքի տակ ուներ Ագաթանգեղոսը, ըստ որում Լուսավորիչը մկրտել է միայն հայերին, ուներ և Պորենացու սկզբնագիր Պատմությունը, ըստ որում Լուսավորիչը մկրտել է չորս ազգերի թագավորներին. — երկու հեղինակավոր աղբյուրներ, որոնք հակասում են իրար. որին տալ ուսավելություն: Ասողիկը չէ կարողացել վճռել այս դժվար հարցը, ուստի որոշել է բոլորովին բաց թողնել մկրտու-

Թյան պատմութիւնը, որպեսզի հաւասած չլինի կամ Խորհնա-
ցուն կամ Ազաթանդեղոսին:

Գրիգոր Լուսավորչի պատմությունը և Հայոց դարձը նկա-
րագրող սկզբնագիրը պատմության ու նրա բաղմամբով խմբագրու-
թյունների հարցն այնքան մտած է ու խճճված, որ այս հարցե-
րի շրջանում կարելի է ասելի կամ նվազ հավանական ենթադրու-
թյուններ անել՝ առանց ստուգությունը երաշխավորելու։ Բայց
ինչ էլ որ լինի Սորենացու Պատմության Բ. 83-րդ գլխի խար-
դախման պատճառը¹, այդ խարդախումն անվիճելի է, ուրեմն որ
Սորենացու Պատմությունը մեր ձեռքը չէ հասել իր սկզբնական
վիճակում, այլ ենթարկվել է խոշոր և զիտավորյալ փոփոխու-
թյունների։ Եթե անհայտ խմբագրողը կամ խմբագրողներն այն-
քան լայնացրել են իրենց խմբագրական գործը, որ Սորենացու
գրած մի գլուխը փոխարինել են մի ուրիշ անհարազատ գլխով՝
հասկանալի է, որ ուրիշ շատ տեղեր էլ նրանք փոփոխություն-
ներ ու հավելումներ կմտցնեին ըստ իրենց ճաշակի, կամ ժամա-
նակի տեսդեցնելի, կամ ըստ իրենց ունեցած տեղեկությունների։
Եվ սրանից են առաջ գալիս ժամանակագրական և նոր աղբյուր-
ների գործածություն անտեղությունները, որոնց բացատրությամբ

[illegible]

համար բանասերներն ուրիշ ճանապարհ չգտան, քան Սորենացու Պատմության գրության ժամանակն իջեցնել մինչև 9-րդ դարը:

Իբրև ընդմիջարկություն նկատված կամ կասկածված ուրիշ կտորներ էլ կան Հայոց Պատմության մեջ, որոնք մասամբ մատնանշված են ուրիշների կողմից, այսպես են՝ 1. Ձայնավոր գրերը գրերի գյուտի պատմության մեջ (Գ., 53), 2. Արվեստների և ազգերի անունները մի-մի տառով նշանակված հանելուկը (Ա., 2), 3. «Եւ երրորդ ոմն Դաւիթ» (Ա., 6), 4. Իր ճանապարհորդության նկարագրության գլուխը կամ գոնե նրա առաջին մասը՝ լեզվի դպրի տարբերության պատճառով (Գ., 62) և այլն: Նույնպիսի ընդմիջարկություններ կդառնան ս. Նունեի վրաց առաքելուհի լինելու գլուխը (Բ., 86) և «ի մկրտել սրբոյն Գրիգորի զՏրդատ արքայ եւ զբոլոր Հայս» հատվածը (Ռ., 66), եթե հաստատվի իմ կարծիքը Բ., 83 հարազատ գլխի (Հայոց դարձի պատմության) անհետանալու պատճառի մասին¹:

Լեզվի և ոճի տեսակետից խմբագրական փոփոխությունների բազմաթիվ փաստեր կան համախմբված Սորենացու քննական հրատարակության (Թիֆլիս, 1913) խուռն ծանոթությունների մեջ, որ ամեն մի հետաքրքրվող կարող է ստուգել, և այս բոլորը 13—16-րդ դարերի ձեռագրերի շրջանում: Իսկ թե որքան այսպիսի փոփոխություններ են կատարվել դրանից առաջ, 5—13-րդ դարերի ձեռագիրների մեջ՝ մեզ մնում է անհայտ, որովհետև այդ ժամանակներից ձեռագիր մեր ձեռքը չէ հասել: Ես այստեղ կբերեմ Սորենացու Պատմության համեմատությունը մի փոքրիկ մագաղաթյա պատառիկի հետ, որ նոր է գտնված էջմիածնի մատենադարանում և պարունակում է արտագրություն Սորենացու Բ., 86 գլխի (Վրաց դարձի պատմությունը ս. Նունեի ձեռքով)

¹ Կարելի է ցույց տալ և ուրիշ ընդմիջարկություններ առանձին-առանձին ձեռագիրներում: Տրդատ Թագավորի շքեղ հանդիսավոր թաղման վերաբերյալ անվավերական հատվածը, որ մեզ հայտնի ձեռագիրներից ոչ մեկում չկա՝ եղել է Թովմայ Արծրունու օրինակում, որից համառոտ քաղվածն է բերում Թովմասն, ձիոտ տեղը նշանակելով — Բ գրքի վերջին գլխում: Դարձյալ՝ Պետ. Ձեռագրատան մի ձեռագրում (Եղյանի), որ Քննական հրատարակության մեջ նշանակված է y տառով՝ գտնվում է ս. Մահակի տեսիլը և նրա մեկնությունը, որ սակայն ուրիշ ոչ մի ձեռագրում չէ պատահում:

«Էկզերից մինչև «կանգնել զնշան խաչին» բառերը: Մագաղաթյա պատառիկը 11-րդ դարից է, ուրեմն արտագրված է Սորենացու ավելի վաղագույն ձեռագրից, այնպես որ այս պատառիկի պարունակած բնագիրը ամենաինքնին է մեզ հայտնի բոլոր ձեռագիրների ընագիրների մեջ:

Մ ա գ ա ղ ա թ յ ա պ ա տ ա ռ ի կ լ

1. Նունի անուն
2. սրբոյն Հռիփսիմայ
3. փախստեայ
4. մեծագահ
5. առաջնորդի
6. հրամայեաց հարցանել
7. ի հայք
8. ստուգադոյնս
9. տեղեկացաւ կարգաւ
10. լերինն
11. այսպիսի եղեալ եւ միհրանայ
12. ի ճանապարհ ել յորս
13. հասին
14. Նունէի խնդրեալ... յդէ
15. հրամայեցէ
16. զպատուականն կանգնել զնշան խաչին

Տ ա ղ ա ղ ի բ ն ա գ ի ը

- Անուն Նունէ¹
- սրբոց Հռիփսիմեանց²
- փախստեամբ
- նախագահ
- առաջնորդին Վրաց³
- հարցեալ
- ի Հայս
- ստուգադոյնս եւս
- տեղեկացաւ դամեհայն ոճով
- լերանց
- այսպիսեալ Միհրանայ⁴
- ի ճանապարհ ելեալ, կամելով
- յորս գնալ⁵
- հասին նմա
- երանելոյն Նունէի խնդրեալ... յդեաց
- հրամայեցէ նմա⁶
- կանգնել զպատուական նշան խաչին⁷

Ուրեմն 25 տողում 16 տարբեր ընթերցվածք, միայն մի ձեռագրում և բոլորն էլ ոճաբանական: Սրանցից յոթը պատահում են նաև ուրիշ ձեռագիրներում, մնացած ինը բոլորովին նոր են այս մի պատառիկում:

Եթե 10-րդ դարից ոչ ուշ մի ձեռագիր այս մի քանի տո-

Տաղաղի այլ ընթերցվածներ

- 1 Աձվ² Նունի
- 2 ՊԵ սրբոյն: ցԿ Հռիփսիմէի: ԼԼ Հռիփսիմէ:
- 3 Պ առաջնորդի
- 4 ՏԼ այսպիսի: Ա միհրանայ:
- 5 Պ Վ³ ել
- 6 Ա չիք նմա
- 7 Աձ զպատուականն կանգնել զնշան խաչին

դում այսքան ինքնուրույն խմբագրական տարբերություններ է պարունակում, քանի՞ հաղարավորներ պետք է եղած լինեին ամբողջ Պատմության մեջ 5—13-րդ դարերի բոլոր ձեռագիրներում։ Կարելի է սրանից հետո պնդել, թե Սորենացու Պատմությունը նաև լեզվի ու ոճի կողմից մեր ձեռքն է հասել անաղարտ վիճակում։

Որ Սորենացու Պատմությունը մեր ձեռքը չէ հասել անաղարտ ձևով, այլ ենթարկվել է զանազան փոփոխությունների, ավելի նոր ժամանակի խմբագրություն է՝ այս միտքն անցյալ դարի 90-ական թվականներից սկսեց հետզհետե ընդհանրանալ և, կարծես, անվիճելի դարձավ։ Բավականանում եմ բերելով մի քանի վկայություններ։

Ն. Մառը «О начальной истории Анонима» հետազոտություն մեջ (Византийский Временник, 1894, II, էջ 305) գրում է. [Սորենացու Պատմության] «բովանդակության նկատմամբ էլ մենք չենք կարող համոզված լինել, թե [ձեռագիրները] պատմությունները կամ ստացողները, տեղյակ գրիչներին հանձնարարելով իրենց համար Սորենացու Պատմության մի օրինակը պատրաստել... բավականանում էին լույս խոսքերի կամ ֆրագմենտների արտագրությամբ և չէին պահանջում՝ նաև բացատրել իրենց հետաքրքրող այս կամ այն պատմական հարցը։ Բացի սրանից՝ Մ. Սորենացու աշխատությունը, ինչպես քանիցս ցույց է տրվել, ծառայել է եղել իբրև պատմության դասագիրք, և իբրև դասագիրք, բնական է, որ նա պիտի լրացվեր ավելի ուշ ձեռք բերված տեղեկություններով։ Գործի այս կողմը բոլորովին չէ շոշափված, սակայն կան տվյալներ, որ այսպիսի հետազոտությունն ապագայում չի անցնի»։ Այստեղ Ն. Մառը ծանոթության մեջ հիշում է վերոհիշյալ իմ հոդվածը «Մուրճ»-ում և ասում է, թե այդ հոդվածում հավանականորեն բացատրվում է, որ Բ., 83 գլուխն ընդմիջարկություն է ԺԱ. (? Ս. Մ.) դարի, իսկ որ տվյալ տեղում պակասում է Հայոց դարձի վերաբերյալ գլուխը՝ Ս. Մ. (եւ) ապացուցում է բոլորովին համոզիչ կերպով։

Նույն Ն. Մառը Սալաթյանցի «Армянский эпос» հետազոտության քննության մեջ (Византийский Временник, 1898, № 1, 2, էջ 4) ասում է. «Հետազոտության ենթակա հիշատակարանի մասին հաղիվ թե երկու կարծիք կարողանան գոյություն

ունենալ—Սորենացու Պատմությունը մեր ձեռքը հասել է զգալի չափով աղճատված ու կարկատված դրությամբ»։ Նույն հատվածում, քիչ հետո (էջ 13), գրում է. «Ոճի հարցը բովանդակության հարցից խստորեն սահմանադատելը (разграничение) կարևոր է այն տեսակետից, որ միայն այս ճանապարհով կարող ենք վճռել այս հարցը, թե Մ. Սորենացու մեր ունեցած Պատմությունն արդյոք նորագույն խմբագրություն, այն էլ ոչ առաջին խմբագրություն չէ՞ հնագույն հիշատակարանի»։

Հ. Տաշյանը («Հանդէս Ամսօրեայ», 1902, էջ 1—2) շեշտելով Սորենացու Պատմության բնագրի ստուգման կարևորությունը, ասում է. «Բուն կարևորն էր բնագրին ուսումնասիրությունը, հնագույն և հարազատագույն ձևը որոշել կարելույն չափ, նախ ընթերցվածներուն հարադատության երաշխավորություն մ'ունենալ։ Առանց ասոր, որ ուրիշներն ալ արդեն շեշտված է—վտանգ կա խնդիր ընելու ճշտիվ կետի մը վրա՝ որ թերևս մատենագրին (ով ալ ըլլա) գրչեն ամենեին չէր, այլ, ընդհակառակն, ընդմիջարկյալ կտոր մը, ուշ ժամանակի գրչի մի փոփոխություն»։

Ն. Ադոնցը, քննադատելով Սալաթյանցի «Армянские Аршакиды» հետազոտությունը, գրում է. «Երկուսից մեկը — կամ Սալաթյանցի տված Սորենացու բնորոշումը ճիշտ չէ, կամ Սեդրեստրոսի Վարքից ամբողջ հատվածը¹ Հայոց Պատմության մեջ է ընկել Սորենացուց անկախ, իբրև ընդմիջարկություն։ Շատերն այն հիշատակարաններից, որ պ. Սալաթյանցն ընդունում է իբրև Սորենացու աղբյուրներ՝ կարելի է իբրև աղբյուր մերժել լույս ընդհանուր, բանասիրական դատողությամբ»։ Այնուհետև այդպիսի աղբյուրների շարքում հիշում է Սսկրատին, Սեբեոսին, Ղևոնդին։ (Зап. Вост. отд. Р. Арх. общ., 1904, 159)։

Այսքանը բավական եմ համարում ցույց տալու համար, թե մեր ձեռքը հասած Սորենացու Պատմությունը հեղինակի գրած սկզբնագիր օրինակի պատճենը չէ, այլ որ այդ սկզբնագիրը ենթարկվել է խմբագրությունների, և այն ոչ մի անգամ, կրել է բազմատեսակ փոփոխություններ թե բովանդակության կողմից — կրճատումներ, ընդմիջարկություններ, ուղղումներ, — և թե լեզվի։ Սրանից հետևում է, որ այս ուշ ժամանակի խմբագրության հի-

¹ Ս. Մեսրոպի նկարագրությունն ըստ Սեդրեստրոսի Վարքի. Սոր., Գ., 67.

ման վրա չէ կարելի դատողություն անել սկզբնազրի և նրա հեղինակի ժամանակի մասին, չէ կարելի Պատմության մեջ որևէ ցիտատ կամ հիշատակություն դնելով 6—8-րդ դարերից՝ եզրագրելով, թե ուրեմն Պատմությունը 6—8-րդ դարերից հետո է կառուցված, ինչպես անում են շարունակ մոտ 40—50 տարի: Ընդհանրապես, երբ մենք հաստատուն ապացույցներ ունինք, թե խոսքը կառուցված է 5-րդ դարում, այս տեսակետին հակառակ հակաժամանակագրական փաստերը պետք է բացատրենք հետագա ժամանակների ընդմիջարկություններով ու փոփոխություններով: Այս է, իմ կարծիքով, խորհրդացու առեղծվածը լուծելու միակ ուղիղ ճանապարհը, և այս ուղղությամբ պետք է շարունակվին այսուհետև հետազոտությունները:

Այժմ կդառնամ քննելու խորհրդացու կենսագրության մի մասը՝ կետի՝ նրա կրած հալածանքների պատճառը, որ շատ ավելի լայն նշանակություն ունի և շրջափում է հայ եկեղեցու և մտավորականության վիճակը 5-րդ դարի երկրորդ կեսում:

Գ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ԵՂԵԼ Ե ՔԱԼԿԵԴՈՆԱԿՈՍ (ԵՐԿԱՐՆԱԿ)

Որքան և ծառայողի հնչե այս խոսքը, այնուամենայնիվ սա փաստ է, որին պետք է համոզվինք՝ սառնասրտությունը և ուշադրությունը քննելով Հայաստանի կուլտուրական ու կրոնական վիճակը 5-րդ դարում:

Ինչպես 4-րդ դարում, քրիստոնեությունը ընդունելու ժամանակից սկսած, այնպես և ամբողջ 5-րդ դարում Հայաստանում շատ բացորոշ նկատվում են երկու հակամարտ մտավորական հոսանքներ—ասորական և հունական օրինատացիներ, որոնք միշտ մրցում են իրար հետ, երբեմն մեկն է ստանում գերակշռություն, երբեմն մյուսը: Հայաստանի արևելյան բաժնի՝ Պարսկաստանին հպատակ լինելը անշուշտ դեր է կատարել այս հարցում, քանի որ Պարսիկները կասկածով էին նայում Հռոմի հետ Հայոց ունեցած հարաբերության վրա, բայց մրցությունը կատարվում էր գլխավորապես կուլտուրական ու կրոնական հողի վրա: Գրեթե ամբողջ շրջանում, ուրեմն հենց 5-րդ դարի սկզբին, նկատում ենք, որ հայկական այբուբենը և ուղղագրությունը հորինել Ասորի Դանիել

ձայնակապուսի մոտ գտնված այբուբենից, որ թյուրիմացաբար համարել են հունաց մնացած հայկական այբուբեն: Երբ այս փորձն անհաջող է անցնում, Մեսրոպ Մաշտոցը Ասորիք է գնում, ասորի գիտնականների հետ խորհրդակցելու գրերի գյուտի մասին: Խորհրդացու բերած երկու նամակները, որոնցով Հունաց կայսրն ու պատրիարքը մեղադրում են ս. Սահակին, որ սա արհամարհելով Հունաց գիտնականներին, աննշան ասորիների օգնությամբ է կամեցել Հայոց այբուբենը հոգալ՝ անշուշտ վավերական չեն, բայց ճիշտ արձագանք են խորհրդացու, և ոչ միայն խորհրդացու, մտածողության: Աշակերտներին ասորերեն և հունարեն սովորելու համար ուղարկում էին Ասորիք: Ս. Գրքի առաջին թարգմանությունը կատարվեց ասորերենից. աշակերտներին Ասորիք էին ուղարկում թարգմանություններ անելու. նույնիսկ Նվսեմեսի եկեղեցական պատմությունը փոխանակ հունարեն բնագրից թարգմանելու, թարգմանել են ասորական թարգմանությունից: Եկեղեցու նվիրապետության մեջ էլ նկատվում ենք, որ ս. Սահակի կաթողիկոսությունից հեռացած միջոցին երկու կաթողիկոս նշանակվում են ասորիներից:

Բայց այս բացարձակ ասորասիրական քաղաքականություն այնքան էլ հաճելի չէր նոր ուսանող սերնդին, որ ձգտում էր ղեպի Բյուզանդիոն, և մյուս կողմից հանդիպում էր Հունաստանի վճռական դիմադրության: Հունաստանի բյուզանդական կառավարությունն արգելեց Հայաստանի հունական բաժնում նորագյուտ ազգային այբուբենը սովորեցնել և ժամկետով խոսել հայերենի վերածել: Հարկ եղավ Մեսրոպին ուղարկել Բյուզանդիոն այս արգելքները վերացնելու համար, որ և աջողվեց նրան, բայց, իհարկե, ոչ առանց իրենց կողմից ղեկավարված անելու — ասորականի փոխարեն հունական օրինատացիա ընդունելու պարտավորություն: Այսպիսի ղեկման արտահայտություն պետք է համարել նախ ս. Գրքի ապոքրիֆից եղած թարգմանությունն ուղղել ու նորոգելն ըստ հունական բնագրի, և երկրորդ՝ որ թարգմանիչները և ուսանող աշակերտությունն այնուհետև ուղարկվում էին ոչ թե Ասորիք, այլ Հունաստան—Բյուզանդիոն, Ալեքսանդրիա:

Կրոնական պատերազմի ժամանակ, երբ կրոնն ու եկեղեցին ենթարկված էին վտանգի՝ այս երկու հոսանքների մրցությունն

ըստ երևույթին դադարում է, և ամբողջ հոգևորականութունը միաբանում է՝ ժողովրդին և նախարարներին պատրաստելու ընդ-
գեմ Հաղկերտի պահանջի, զենքի ու ժով պաշտպանելու քրիստո-
նեական կրոնը: Բայց երբ պատերազմը և նրա բերած արհա-
վիրքները վերջացան, 5-րդ դարի երկրորդ կեսում՝ տեսնում ենք,
որ հունա-ասորական մրցությունն ու պայքարը դարձյալ երևան
են գալիս: Հունասերների շրջանն արտադրեց Ագաթանգեղոսի
անունը կրող Հայոց դարձի պատմությունը, որի մեջ հունական
օրինատացիան իր գաղաթնակետին է հասցված: Հայաստանի լու-
սավորիչ Գրիգորը կեսաբխալում անված, հունական ոգով դաս-
տիարակված, հունախոս մի քաջգիր է. նա կախկոպության
ձեռնադրություն է ստանում կեսաբխալի արքեպիսկոպոսից,
այնպես որ Հայաստանի հոգևոր նվիրապետությունը ենթարկ-
վում է մի հունական մետրապոլիտոսության, որից, ըստ պայմանի,
պարտավորվում են այնուհետև ձեռնադրություն ստանալ Հայաս-
տանի եպիսկոպոսապետները: Հռիփսիմյան կույսերն էլ, որոնք
իրենց մարտիրոսական արյունով պսակեցին Հայոց եկեղեցին՝
դարձյալ Հունաստանից էին եկել:

Հունասիրության այս գրական հիշատակարանի հանդեպ լուռ
չմնացին ասորական օրենսդրության հետևողները: Մեկը մյուսի
հետևից երևան եկան 1. Լաբուրենայի Պատմության հայերեն
թարգմանությունը, որի վերջում ասված է, թե Թադևոս առա-
քյալը, եղեսխալում ժողովրդին օրհնելուց հետո, ուղևորվեց Արե-
վել (ասորական բնագրում ասված է, թե առաքյալը ժողովրդին
օրհնելուց հետո վախճանվեց եղեսխալում). 2. Վկայաբանություն
օրհնելուց հետո Վախճանվեց եղեսխալում. 3. Վկայաբանութիւնս
Բարթողիմէոսի առաքելոյ, որ Հայաստա-
նում հանդիպում է Թադևոսին և նույնպես նահատակվում Սա-
նատրուկից:

Այս երկու գրվածքները, որոնք սկիզբ են առնում Ասորի-
քից՝ նպատակ ունենին նաեմացնելու կեսաբայի քաջգիր Գրիգո-
րին, նրա տեղ զննելով երկու նահատակված առաքյալ, որ, սա-
կայն, չհաջողվեց: Որ այս գրություններն Ագաթանգեղոսից հետո
են թարգմանված կամ գրված՝ երևում է նրանից, որ Ագաթան-

գեղոսում, Գրիգորի ընդարձակ վարդապետության մեջ, ոչ մի
անգամ չեն հիշված ոչ Թադևոսը և ոչ Բարթողիմէոսը, չնայելով,
որ շատ հարմար տեղեր կային հիշելու, և անկարելի էր, որ Գրի-
գորը կամ վարդապետության հեղինակը (ինչպես ենթադրում են՝
Մեսրոպը) մոռանային հայ ժողովրդին հիշեցնել նրա նախկին
երկու լուսավորիչներին, եթե իրոք այդ առաքյալները Հայաս-
տանում քարոզած ու այնտեղ նահատակված լինեին:

Այս գրական-իդեական մրցությունը, գուցե խառն նյու-
թական և փառասիրական ձգտումների հետ, ավելի խորացավ,
բացարձակ թշնամության, փոխադարձ մեղադրանքների ու հալա-
ծանքների վերածվեց, երբ նախկին պատճառների վրա ավելա-
յալ դավանաբանական տարբերությունը, որին առիթ տվեց
Քաղկեդոնի ժողովն իր հայտնի բանաձևով — երկու բնություն
դավանելով Քրիստոսի մեջ (յերկուս բնութիւնս): Ինչպես հայտնի
է, այս բանաձևն առաջ բերեց երկպառակություն, փոխադարձ
նզովքներ՝ նույնիսկ ժողովին մասնակցող եպիսկոպոսների մեջ,
և հետագայում ալեկոծեց քրիստոնյա եկեղեցին և հերձված առաջ
բերեց նրա անդամների մեջ: Ոմանց կողմից այն ընդունվեց,
մյուսների կողմից մերժվեց: Բյուզանդիոնը և Հռոմն այս բա-
նաձևի կողմնակիցներն էին (երկաբնակներ, քաղկեդոնականներ),
իսկ Արևելքը — Ալեքսանդրիան, Եփեսոսը, Անտիոքը, որի թեմի
մեջ էր մտնում և Ասորիքը՝ հակառակ դուրս եկան բանաձևին
(միաբնակներ, հակաքաղկեդոնականներ):

Հայոց եկեղեցին Քաղկեդոնի ժողովում պաշտոնական ներ-
կայացուցիչ չունեւ և, իբրև ինքնագլուխ եկեղեցի՝ ազատ էր
նրա մշակած բանաձևն ընդունելու կամ չընդունելու: Մենք տես-
նում ենք, որ ավելի քան հիսուն տարի Հայոց եկեղեցին պաշ-
տոնական ղերք չէ բռնել Քաղկեդոնի դավանանքի վերաբերմամբ,
ոչ հարել է նրան պաշտոնապես և ոչ մերժել պաշտոնապես, և
միայն 508 թվին, Բաբգեն կաթողիկոսի օրով, Քաղկեդոնի ժողո-
վից 57 տարի հետո, երբ Պարսկաստանում ապրող ասորիները
նեստորական ասորիներից նեղվելով, դիմեցին Հայոց եկեղեցուն,
իբրև իրենց հովանավորի, և խնդրեցին բացորոշ կերպով արտա-
հայտվել Քաղկեդոնի դավանության նկատմամբ՝ առաջին անգամ
Հայոց եկեղեցին արտահայտվեց ընդգեմ Քաղկեդոնի, այն էլ
շատ երկդիմի կերպով, ինչպես կտեսնենք:

Միամտություն կլինեի կարծել, թե Քաղկեդոնի ժողովի հա-
րուցած աղմուկը աստվածապահ Հայաստանը չշոշափեց: Այն փո-
թորիկը, որ Քաղկեդոնից փրթավ և ալեկոծեց ամբողջ քրիստո-
նյա աշխարհը, Հռոմից մինչև Պարսկաստան, մինչև Ալեքսանդրիա,
չէր կարող հնուզել և Հայաստանը: Հայաստանում տիրապետող
երկու մտավոր հոսանքները, ասորականը և հունականը, չէին
կարող անտեղյակ և անտարբեր մնալ Քաղկեդոնում հարուցված
այն մեծ վեճի նկատմամբ, որով բռնված էր ամբողջ քրիստոնյա
աշխարհը 5-րդ դարի երկրորդ կեսում և հաջորդ դարերում, և
այս կամ այն դիրքը չբռնել այդ վեճի վերաբերմամբ: Մեր եկե-
ղեցական գրականության մեջ այս շրջանում քաղկեդոնական
կոիզիների մասին հիշատակություն չկա, և դրությունն այնպես է
պատկերացվում, իբրև թե հայերը Քաղկեդոնի ժողովի ժամանակ
գրադված էին կրոնական պատերազմով: շուտով վրա են հասնում
եպիսկոպոսների և աշխատավոր այլ հոգևորականների ձեռքակա-
լումը Տիգրանում, բանտարկությունն ու նահատակությունը:
Հայերն այս պատճառով «Բյուզանդիոն և Քաղկեդոնի անցքերով
չէին կարող հետաքրքրվել և ոչ տեղեկություն կրնային ունե-
նար»... «մտածելու իսկ չէր, որ հայերը կամենային Քաղկեդոնա-
կան խնդիրներով զբաղվել, բայց եթե զբաղվեին ալ՝ հակաքաղ-
կեդոնիկ որոշումներ պիտի տեսնեին քրիստոնյա եկեղեցիներու
կողմն» («Ազգապատում», էջ 495—6), և «Քաղկեդոնական խնդի-
րը մինչև Բարդես կաթողիկոսի ժամանակ Հայոց համար գոյու-
թյուն չուներ» (անդ., էջ 491):

Բայց իրոք այսպես չէ եղել: Հայոց եկեղեցին ավելի քան
հիսուն տարի հիբավի որոշ դիրք չէ բռնել Քաղկեդոնի բանաձևի
նկատմամբ, բայց դա նրանից չէ, որ այս հարցը նրա համար
գոյություն չէ ունեցել, այլ նրանից, որ բուն պայքար է եղել
մղվելիս Հայաստանում երկու հզոր բանակների միջև, և եկեղե-
ցին տատանվելիս է եղել, չէ վստահացել պայքարող բանակնե-
րից մեկի կամ մյուսի կողմն անցնել, կասկածելով, որ դժգոհ
կողմը կարող է անջատվել եկեղեցու միությունից, կարող է ներ-
քին հերձված ծագել: Խորենացու Ողբն ու մի երկու ուրիշ ալ-
նարկությունները և Փարպեցու Թղթի մեջ բերված տեղեկություն-
ները ոչ մի կասկած չեն թողնում այս մասին, թեև դժբախտա-
բար մինչև այժմ նկատի չեն առնվել իբրև աղբյուր 5-րդ դարի

երկրորդ կեսում մեր եկեղեցու ներքին պատերը նկարագրելու
համար: Ողբի հենց սկզբում Խորենացին շատ բացորոշ ասում է-
«Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ... զի բարձաւ թագաւոր եւ քահա-
նայ, խորհրդական եւ ուսուցող. վրդավեցաւ ուղղափառութիւն,
կայկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն»: Շարունակությամբ
մեջ ասում է. «Այժմ մարտի ճեքուստ, և արհաւիրք արտա-
քուստ, արհաւիրք ի հեթանոսաց եւ մարտի ի հեթանոսաց»:
Ողբալով իր մեծ ուսուցիչ Սահակի մահը՝ Խորենացին բացազան-
չում է. «Ո՞վ կարկեսցէ գյանդգնութիւն ընդդէմ առողջ վարդա-
պետութեան հակառակ յարուցելոցն». չկա այլևս իր հայրը և քա-
հանայապետը, որ «սանձախարէր գեղուս օտարաձայն»: Բ. գրքի
վերջին գլխում իր կրած զրկանքները նկարագրելիս ի միջի
այլոց ասում է. «Թողից դային, զի եւ ոչ գեղուս չարս եւ գտգի-
տությունս... սանձախարեցէ, այլ նիւթ նոցա անմոռութեան
դճեր ուսումնատեսացդ տալով բարս՝ բորբոքեցէք առաւել քան
զհնոցն Բաբելոնի»:

Առայժմ թողնում եմ Փարպեցու վկայությունները: Ի՞նչ
ուղղափառություն և չարափառություն մասին է խոսում Խորենա-
ցին, ովքեր են այն հերձվածողները, որ ներքին պատերազմ են
մղում, ովքեր են այն օտարաձայն և չար լեզուները, որոնք
հանդգնում են առողջ վարդապետության (ուղղափառության) դեմ
մաքառել և որոնց զսպելու համար չկա մի հեղինակավոր անձ:
Ոչ մի կասկած չէ կարող լինել, որ այստեղ խոսքը վերաբերում
է միայն քաղկեդոնական վեճերին, քաղկեդոնականներին ու հա-
կաքնդկեդոնականներին: 5-րդ դարի երկրորդ կեսում ամբողջ
քրիստոնյա աշխարհն զբաղված էր քաղկեդոնական վեճերով, —
քրիստոնյա մասին հիշատակություն չկա, — և Հայաստա-
նում էլ այս ժամանակները չէ հիշվում որևէ այլ աղանդ, որ
կարողանար սասանեցնել երկիրը, վրդովել ուղղափառությունը,
հիմնավորվել երկրում և պատերազմել ուղղափառների դեմ: Ու-
րիշ կերպ անկարելի է հասկանալ վերոհիշյալ խոսքերը՝ քան եթե
վերագրելով քաղկեդոնական — հակաքաղկեդոնական պայքարին:
Եթե այս այսպես է, ապա անմիջապես հարց է ծագում, թե
ինչ է ակնարկում Խորենացին «ուղղափառություն» և «չարա-
փառություն» բառերով, ում է նա ճանաչում ուղղափառ, և ում
չարափառ, չար, օտարաձայն լեզու:

Այս հարցերին պատասխան տալիս է Հայաստանի իրական-
 նությունն ինքը: Քանի որ Հայաստանում վաղուց մրցում էին
 երկու մտավոր ու կրոնական հոսանքներ՝ ասորական և հունական՝
 ուստի Քաղկեդոնի գավառապետության շուրջը պայքարը պետք
 է մղվեր այս երկու հոսանքների միջև: Կասկածից դուրս է, որ
 ասորական հոսանքը հակաքաղկեդոնիկ էր, ուրեմն քաղկեդոնիկ
 պետք է լիներ հունական հոսանքը, որի գլխավոր գործիչներէց
 մեկը, դուցէ պարագլուխն էր ինքը՝ Խորենացին: Սրանից հե-
 տեում է, որ Խորենացին ուղղափառ կոչում է իր գավառա-
 թյունը, այսինքն քաղկեդոնականությունը, որի դեմ կոմպոզի-
 լին, ասորական հոսանքին պատկանող հակաքաղկեդոնականնե-
 րին, կոչում է հերձվածողներ, իսկ նրանց գավառապետները՝ չա-
 րափառություն: Այսպես էլ Հէր կարող լինել: Եթե իրոք Հայաս-
 տանում Ծ-րդ դարի երկրորդ կեսում պայքար էր մղվում քաղկե-
 դոնական հարցի շուրջը, իսկ ասորական հոսանքը, անկասկած,
 հակաքաղկեդոնական էր, ապա քաղկեդոնական պետք է լինեին
 հունական հոսանքին պատկանողները, հատկապես նրանք, որոնք
 Հունաստանում ուսում էին առել և ընդհանուր անունով կոչվում
 էին թարգմանիչ, քերթող: Հայտնի է, որ քաղկեդոնականության
 ամբողջ Բյուզանդիայում էր գտնվում, չնայելով, որ հենց Բյու-
 զանդիայում մի քանի կայսրներ դուրս եկան այդ գավառա-
 նության դեմ. իսկ Արեւելքն առհասարակ հակաքաղկեդոնական
 էր: Այնպես որ Հայաստանի քաղկեդոնիկներն իրենց իդեալական
 անունը կարող էին ստանալ Բյուզանդիայից, որտեղ ուսում էին
 առնում և որի հետ շարունակ շփման մեջ էին:

Հակառակ մեկնություն տալը Խորենացու խոսքերին, այս-
 ինքն ենթադրել, թե նա ուղղափառ է կոչում, մեր այժմյան
 հասկացողությամբ, հակաքաղկեդոնիկներին, իսկ չարափառ ու
 հերձվածող՝ քաղկեդոնիկներին, անկարելի է:

Արդարեւ, եթե ասորական շրջանը հակաքաղկեդոնական էր
 (որի մասին վեճ չէ կարող լինել), և եթե Խորենացին էլ, հու-
 նական շրջանի անգամն ու ներկայացուցիչը, նույնպես հակա-
 քաղկեդոնական լինել, այդ դեպքում Հայաստանի երկու գլխա-
 վոր մտավոր հոսանքներն էլ հակաքաղկեդոնական դուրս կգային:
 Ուրեմն ուրիշ թնչ երրորդ մտավոր հոսանք կամ շերտավորում
 պիտի լիներ Հայաստանում, որ հարած լիներ քաղկեդոնականու-

թյան, և այնքան գորեղ լիներ, որ կարողանար վրդովել միացած
 ասորա-հունական հոսանքների ուղղափառությունը և, հիմնավոր-
 վորվելով (կայլայվելով)՝ մարտ մղեր այս երկու ուժեղ խմբերի
 դեմ: Մեր ոչ քաղաքական և ոչ էլ եկեղեցական պատմության
 մեջ այսպիսի շերտավորման՝ հզոր հոսանքի որեւէ հետք չենք
 նկատում այս ժամանակ: Դարձյալ՝ եթե Խորենացին էլ՝ ասորա-
 կան խմբի նման, հակաքաղկեդոնական լիներ, ապա անհասկա-
 նալի կդառնար Խորենացու կրած հալածանքն իր դավանակից
 ասորական խմբի կողմից, որ նրա գրվածքները կոչում էր քյուր,
 աղնատված, ինչպես իսկույն կտեսնենք: Սրանից հետեւում է, թե
 Խորենացու «ուղղափառություն» և «չարափառություն» բառերին
 չէ կարելի ուրիշ մեկնություն տալ, քան ես ավել, այսինքն, որ
 Խորենացու համար ուղղափառությունը եղել է քաղկեդոնականու-
 թյունը, իսկ չարափառություն՝ հակաքաղկեդոնականությունը:
 Վերջապես Խորենացու «մարտը ի հերձուածողաց» խոսքը կարող
 է վերաբերվել միայն հակաքաղկեդոնականներին, որոնք հերձված
 կաղմեցին, այսինքն անջատվեցին ընդհանուր քրիստոնեական
 եկեղեցուց՝ մերժելով ընդունել տիեզերական ժողովի սահմանած
 գավառապետությունը:

Հակաքաղկեդոնական, այսինքն ասորական հոսանքն ուժեղ
 էր իր ստվարությամբ, իսկ քաղկեդոնական, այսինքն հունական
 հոսանքը՝ իր մտավոր ավելի բարձր զարգացմամբ. այս պատճա-
 ռով էլ վերջիններս իրենց հակառակորդներին միշտ կոչում են
 ազեա, — Խորենացին ասում է. «Կայլայեցաւ տգիտութեամբ չա-
 րափառութիւն»... «Ոչ զլեզուս չարս եւ տգիտութիւն սանձահարե-
 ցէք»... «Ըստ այժմուցս ի դեպ, ուր բազում խօսողք աստուածայ-
 նոցն, եւ զօրութեան մտացն ոչ հաւաւք» (Բ., 92), «Նիւթ նոցա
 անմտութեանն զձեր ուսումնատեսացդ տալով բարս»: Փարպեցին
 ասում է. «Արեղեանդ Հայոց զուսավորիչն (զփիլիսոփոսն Մովսէս)
 զտգիտահալած զրեանն նորա առ անգիտութեան փաթաղ-իկէս
 կոչէին»:

Հակաքաղկեդոնիկների տգիտության այս շեշտումը հասկա-
 նալի է դառնում՝ եթե նկատի ենք առնում քաղկեդոնական դա-
 վառաբանության խիստ նուրբ բանաձևը, որը միջակ կրթության
 տեր անձն ըմբռնել անկարող էր: Քրիստոսի մեջ երկու բնություն
 գավառելու միտքը երկու ձևով էր արտահայտվում — «յերկուս

բնութիւնս» (в двух естествах), և «յերկուց բնութեանց» (о двух естествах): Առաջինը Քաղքեղոնում ճանաչվեց ուղղափառ, երկրորդը՝ չարափառ¹: Ուստի հունական հոսանքին պատկանող, Բյուզանդիայում ուսած ու դարգացած քաղկեդոնիկ հայերը մեղադրում են հակառակորդներին, թե նրանք տգիտաբար չեն կարողանում լմբռնել տարբերությունն այս երկու բանաձևերի միջև, ուստի և հակառակում են քաղկեդոնական դավանաբանութեան՝ նրան չհասկանալով:

Այս ուրեմն Մովսես Խորենացին համոզմունքով քաղկեդոնական էր և իբրև այսպիսին, հալածանքի էր ենթարկվել հակառակորդ ուժեղ հակաքաղկեդոնիկ ասորական խմբի կողմից: Շատ բնորոշ է նրա կրած հալածանքների նկարագրությունը Ղ. Փարպեցու կողմից: «Երանելի փրկսփոսն Մովսէս... ոչ ապաքէն ի տեղւոյն է տեղի աբեղեանդ հայոց հալածական արարին. ոչ զլուսաւորիչն եւ զտգիտահալած գրեանն նորա առ տգիտութեան փաթաղ-իկէս կոչէին»: Խորենացուն հալածող հոգեւորականներին նա խմբական անունով կոչում է արեղայական խումբ, ասորերեն աբեղա բառով (ուրիշ դեպքերում նա գործ է ածում «կրօնավոր», «պարեգոտավոր» բառերը): Փաթաղ-իկէս նույնպէս ասորական բառեր են, որոնք նշանակում են թյուր, աղճատված, աղավաղված²: Պարզ է, որ այս ասորական բառերը կգործածենին ասորի արեղաները, կամ նրանց հարած հայերը, նրանց հետեւելով: Ուշադրութեան արժանի է դարձյալ, որ Ղազար Փարպեցին Մովսես փրկսփոսին կոչում է լուսավորիչ, իսկ նրա գրվածքները՝ տգիտահալած: Ուրեմն Խորենացին գրել է տգիտությունը (հակաքաղկեդոնականների տգիտությունը, որը վերը հիշեցի) հալածող գրվածքներ և դրանցով լուսավորել է մտքերը: Բայց այս տգիտահալած գրվածքները, որոնց մեջ ջատագոված է եղել քաղկեդոնական դավանաբանությունը, մեր ձեռքը չեն հասել: Հայոց եկեղեցին հաջորդ դարերում խնամքով ոչնչացրել է «զահաւոր նզովն գրով ի վերայ զլիաւորաց քահանայութեանդ ասա-

¹ Քաղկեդոնի ժողովի ատյանում մեղադրված Դիոսկորոսը հայտնեց, թե ճանաչում է Քրիստոսին «յերկուց բնութեանց», բայց մերժեց ընդունել «յերկուս բնութիւնս» բանաձևը, որ Քաղկեդոնում ընդունված էր:

² Ն. Մառ—О начальной истории Армении Анонима, էջ 301, ծանոթ.

ցեալ», (ըստ Փարպեցու վկայութեան), ինչպէս և ուրիշ քաղկեդոնական ոգով գրվածքները և դրանց փոխարեն կեղծել է մի գրքվածք Մովսես Խորենացու անունով՝ քաղկեդոնականութեան դեմ:

Ուրեմն Խորենացին բուռն պայքար էր մղում հակառակորդ հակաքաղկեդոնիկ ասորական խմբի դեմ. նրանցից հալածվում էր տեղից տեղ, կրում էր զրկանքներ, ապրում էր աղքատութեան մեջ³, բայց չէր դադարում գրով կռիւլ նրանց դեմ, նրանց «տգիտությունը» նշավակել և ուղիղ դավանությունը (քաղկեդոնականությունը) պաշտպանել: Որքան հզոր էին հակառակորդներն իրենց ստվարութեամբ և զրաված դիրքերով, այնքան էլ նա հզոր էր իր հանճարով և անսկուռ կամքով: Նա չընկճվեց, ընդհակառակը, կյանքի վերջին տարիներում ապահով ու փառավոր դիրք ստացավ և փայլեց իբրև ամենահեղինակավոր դրական դեմքը 5-րդ դարի վերջերում, ինչպէս զգացվում է նրա Պատմութեան շատ էջերում:

Ինչպէս առաջ եկավ այս հանկարծակի փոփոխությունը: Ղ. Փարպեցին վկայում է, թե այս փրկսփոսն Մովսեսին, երկար ժամանակ հալածելուց ու թշնամանելուց հետո՝ «ապա յազապայոց ամթոյն զխաբէական գեպիսկոպոսութիւնս նման զեղոց մահու արբուցեալ սրբոյն հեղձուցին», — որ ես այս մտքով եմ հասկանում, թե խաղը ու խայտառակություն էին այնպիսի հռչակավոր գիտնականին հասցրած հալածանքն ու նախատինքները. ամթոյն ստիպվեցին եպիսկոպոսութիւն տալ նրան, որպէսզի սրանով նրա բողոքի ձայնը կտրին: Այս վկայութեանը համապատասխանում է հնուց մնացած մի սրտառուչ գրավոր ավանդութեան, թե Գյուտ կաթողիկոսը, երկրում շրջագայելիս, մի զյուզում պատահում է անհայտութեան մեջ կորած Մովսեսին՝ ծերունի հասակում, ճանաչում է իր վաղեմի դպրոցական ընկերոջը, համբուրում է նրան և հետը տանելով՝ ձեռնադրում է Բագրեվանդի և Արշարունեաց եպիսկոպոս: Հալածանքների դադարումը և եպիսկոպոսական ձեռնադրութեանը բնական կերպով բացատրվում են. Գյուտ կաթողիկոսն ինքն էլ Հունաստանում էր ուսում առել, հունական օրինաւորացի ունէր, որի համար հալած-

³ Բ. գրքի 92-րդ գլխում նա դառնապես դանգաւորվում է. «Եթէ ընդ սուրբս աստուծոյ... այսպէս է, զինչ մեր բանս առ աստուծոյ յազապ ի ձէնջ վտանգիցս, որոց վտանգք եւ աղքատութիւն սեպհական է»:

վում էր Պարսիկներից, և Քաղկեդոնի բանաձևին համակրող պոնե համբերատար էր, ուրեմն և ոչ մի արգելք չէր գտնում Մովսեսին եպիսկոպոս ձեռնադրելու, որով թե հանգստացրած ու պատված կլինեի ծերունի քերթողահորը (որ Գյուտի կաթողիկոսության տարիներում, 461—470 թ. թ., 50—60 տարեկան էր) և թե հասարակական կարծիքը բավարարած, խաղը ու խայտառակությանը վերջ դրած:

Բայց պայքարն անձնական չէր, նա Սորենացով չվերջացավ, այլ շարունակվեց նրա եպիսկոպոսության ժամանակ և նրա մահից հետո էլ: Ղ. Փարպեցու թղթում, Սորենացու մահվան հիշատակությունից հետո, ձեռագրում մի թուղթ է ընկած. ընդմիջումից հետո թուղթը շարունակում է թվարկել արեղանների կողմից հալածանքների ենթարկված ուրիշ անձեր, որոնցից մեկի (որի անունը կորած թղթի մեջ է եղել) ոսկորները գերեզմանից հանել են և գետը թափել: Հրեշտականման Տերին անհանգիստ հալածանքներով մահացրել են. Սուրովիկը արտասահմանից վերադառնալիս, դեռ մեր երկրի սահմանը ոտք չէ եղել դրած, երբ լսում են, թե դալիս է, գինվում են իբրև թշնամու գեմ, ասելով. «Ահա ո՞ւր գայ միւս եւս քարգմանն», և երանելին հենց արտասահմանում էլ մեռնում է: Ո՞րքան ուրիշ նոր անուններ ու նոր հալածանքների փաստեր է եղել պարունակելիս այդ ընկած թուղթը (արդյոք ընկած, թե դիտմամբ պղծած, խայտառակ փաստերի փաստաթուղթը ոչնչացնելու, քաղկեդոնական պայքարի հիշատակն անհետացնելու նպատակով):

Բայց այս պայքարի գոյության ապացույցներն իսպառ ոչնչացնել հնարավոր չէր: Նրանք երևան են գալիս այնպիսի տեղերում, որտեղ ամենից քիչ սպասելի էր — հենց Հայոց եկեղեցու վավերական թղթակցությունների մեջ: Ես նկատի ունեմ Բարգեն կաթողիկոսի երկու պաշտոնական գրությունները դավանաբանական հարցերի մասին, որոնք մոռցված են «Գիրք թղթոց»-ի մեջ: Վերևում հիշեցինք, որ Պարսկաստանում բնակած ասորիները, նեստորական ասորիներից նեղվելով՝ դիմել էին Հայոց եկեղեցուն՝ պաշտպանություն խնդրելով: Եկեղեցական ժողովը, որ գումարված էր 506 թվին և որին մասնակցում էին, բացի Բարգեն կաթողիկոսից, 20 եպիսկոպոս և 14 նախարար, միաբան հավանությամբ մի թուղթ գրեց, որի մեջ Քաղկեդոնի

ժողովի և դավանության մասին ոչ մի խոսք չկա, այլ խոսվում է նեստորի և նեստորականների մասին: Այս թղթին հավանություն են տվել բոլոր մասնակից եպիսկոպոսներն ու նախարարները, որոնց անունները թղթի մեջ հանվան հիշված են: Բայց այս թուղթը պարսկաբնակ ասորիներին բավարարություն չտվեց. նրանք հայտնեցին, թե նեստորականներն իրենց մոլորության վրա պնդում են. «Ի ժողովոյն Քաղկեդոնի գորացեալ», այնպես որ Հայոց եկեղեցին, մոտ 508 թվին, առաջին անգամ, ստիպված է լինում պաշտոնապես հրապարակով հայտնել իր վերաբերմունքը դեպի Քաղկեդոնի բանաձևը: Եվ Բարգեն կաթողիկոսը գրում է երկրորդ թուղթը, որի մեջ սակայն չէ մերժում, չէ նզովում Քաղկեդոնի ժողովը և Լեվոն պապի տոմարը, ինչպես հետագայում լինում է շարունակ, այլ պարունակում է այսպիսի դարձվածք. «Փախչիմք ուրացեալ գ'ի Քաղկեդոնին ստաքիւն նեստորի եւ այլոցն նմանից»: Հայոց եկեղեցու այս առաջին պաշտոնական հայտարարությունը Քաղկեդոնի նկատմամբ աչքի է ընկնում իր անորոշությամբ և երկիմաստությամբ: Նա այնպես է ձևակերպված, որ կարելի է երկու կերպով էլ հասկանալ. 1. փախչում ենք, ուրանում ենք Քաղկեդոնի ստութիւնը, որի վրա հիմնվում են նեստորն ու նրա նմանները, և 2. փախչում ենք, ուրանում ենք նեստորի և նրա նմանների ստությունը, որոնք հիմնվում են Քաղկեդոնի վրա: Առաջին բացատրությամբ Քաղկեդոնի դավանաբանությունը սուտ է և խորշիկ, երկրորդ բացատրությամբ՝ Քաղկեդոնի դավանաբանությունը սուտ չէ, բայց սուտ են նեստորն ու նմանները, որոնք այդ դավանաբանության վրա են հիմնվում, այսինքն՝ նրանից սխալ եզրակացություններ են հանում: Չնայելով թղթի այս երկդիմության, կամ դուռն հենց այդ երկդիմության պատճառով, թղթին հավանություն են տվել, բացի կաթողիկոսից ու մարդպանից, միայն մի եպիսկոպոս և մի նախարար, ավելացնելով անորոշ կերպով՝ «եւ այլոց եպիսկոպոսաց, որք ըստ տանց, եւ յամենայն ազատաց, մեծամեծաց եւ փոքունց»: Ի՞նչ են նշանակում այս երկդիմի հայտարարությունը, ստորագրությունների բացակայությունը, անորոշ կերպով «այլոց եպիսկոպոսաց» հիշատակությունը, եթե ոչ այն, որ հենց այս ժողովում էլ քաղկեդոնական հարցի մասին միաբանություն չկար ժողովված եպիսկոպոսների ու նախարարների միջև, ուստի ընտ-

քել են այնպիսի մի բանաձև, որին երկու կողմն էլ կարողանա-
լին համաձայնել (տարբեր տեսակետներից), և անորոշ «այլոց
կախկոպություն» բառերով թղթին համաձայնողների թիվն ավելաց-
նել, առանց սրան կամ նրան հանվան հիշելու և պատասխանատու
զարձնելու:

Որ Հայաստանում 5-րդ դարի երկրորդ կեսում գոյություն
են ունեցել հերձվածներ, և հատկապես, որ Մովսես Խորենացին
քաղկեդոնական է եղել՝ այս մասին ունինք վկայություն նաև
վրացական աղբյուրներից: Ինչպես վերը տեսանք (էջ 105)՝ Վրաց
Արսեն կաթողիկոսը, 9-րդ դարում, երկու անգամ հիշատակում է
Մովսեսին: Մի անգամ ասում է, թե Կոմիտաս կաթողիկոսը կեղ-
ծեց հերձվածողական (այսինքն հակաքաղկեդոնական) գրվածքներ
ու վերագրեց ուղղափառ վարդապետների, սուրբ Մահակին ու
Մովսեսին, իբրև թե սրանք են գրել: Երկրորդ անգամ ասում է,
թե Մովսեսը նախադրուշացրեց հերձվածողներին նրանց կործա-
նումը, բայց նրան լսող չեղավ:

Եթե մի քաղկեդոնական կաթողիկոս ուղղափառ վարդապետ
է կոչում Մովսես Խորենացուն, երբ նա վկայում է, որ Մովսեսը
նախադրուշացրեց մոլորված կամ հերձվածող հայերին՝ պարզ է,
որ նա Մովսեսին ևս ճանաչում է իրեն նման, այսինքն՝ քաղկե-
դոնական: Ոչ մի կասկած չկա, որ այս վկայությունը ճիշտ է.
անկարելի է ենթադրել, որ Արսեն կաթողիկոսը մի չարափառ
(հակաքաղկեդոնական) վարդապետի կեղծելով ուղղափառ զարձ-
ներ, մանավանդ որ մեր ձեռքին բարեբախտաբար կա Արսեն
կաթողիկոսի հիշած այն կեղծ թուղթը, որ Կոմիտաս կաթողիկոսն
և Հոհան Մայրապետներն հորինել են երկաթնակների դեմ և վե-
րագրել Մովսես Խորենացուն: Եթե Խորենացին հայ ուղղափառ
լիներ, այսինքն միաբնակ, այս դեպքում երկաթնակների դեմ
ուղղված թուղթը կեղծ չէր լինի, այլ հարազատ նրա գրածը: Թուղ-
թը կեղծել ու Խորենացուն են վերագրել երկու նպատակով. նախ՝
այնպիսի մի նշանավոր ու հեղինակավոր մատենագրի վրայից
երկաթնակության, այսինքն հերձվածողության արատը վերացնել
և նրան ուղղափառ հայ (միաբնակ) ներկայացնել, և երկրորդ՝
նրա բարձր հեղինակությանը, նրա անունը կրող կեղծ թղթով
կոպել երկաթնակների դեմ: Նրանք հաշվում էին, որ Մովսեսի
մահից հետո, 120—130 տարվա ընթացքում, հազիվ մնացած լինի

հիշողություն նրա քաղկեդոնականության մասին, իսկ այս կեղծ
թուղթը կապալանձեցներ որևէ կասկած հայտնողի բերանը: Որ
այս թուղթը կեղծ է՝ հայտնի է նրանից, որ պարունակում է մի
հատված և հատուկ բառեր ու դարձվածքներ Տիմոթեոս Կուզի
Հակաճառության հայերեն թարգմանությունից¹, և լեզվով ու
ոճով բոլորովին օտար է Խորենացու լեզվին ու ոճին: Նրա կեղ-
ծությունն ընդունում են Օրմանյանը, Ալինյանը, Հ. Մանան-
դյանը. վերջինս նրա գրության ժամանակը որոշում է 6-րդ
դարի վերջերս կամ 7-րդի սկզբներում²: Արսեն կաթողիկոսի
վերահիշյալ վկայությունը միանգամայն արդարացում է այս
եղբայրացությունները թղթի կեղծության և հորինման ժամանակի
մասին: (Թուղթը վավերական են համարել, իբրև Մովսես Խորե-
նացու գործը 5-րդ դարում, Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբնակ)
և Կարապետ կախկոպոսը):

Ես աշխատեցի ցույց տալ, որ 5-րդ դարի երկրորդ կեսում
Հայաստանն էլ, ուրիշ երկրների նման, թափերաբեմ է եղել
քաղկեդոնական վեճերի, ասորական և հունական շրջանները,
իբրև հակաքաղկեդոնական ու քաղկեդոնական խմբեր, պայքա-
րելիս են եղել իրար դեմ, և Խորենացին, իբրև մեկը քաղկեդո-
նական խմբից, գուցե պարագլուխը, այս պատճառով հալածանքի
է ենթարկվել հակառակորդ ուժեղ ասորական խմբից: Ոչ մի ան-
քնական և անհավանական բան չկա սրա մեջ: Եթե քաղկեդո-
նականությունը Հայաստանում այնքան տարածված էր 6-րդ և
7-րդ դարերում, որ նրա դեմ կովելու համար հայերեն էին
թարգմանում Տիմոթեոս Կուզի Հակաճառությունները, Խորենա-
ցու անունով Թուղթ էին կեղծում քաղկեդոնականների դեմ,
ինչո՞ւ չէր կարող նա ծնունդ առնել և գոյանալ հենց 5-րդ դա-
րում, «թարգմանիչների և քերթողների» ժամանակ, որոնք հու-
նական կրթություն էին ստացել և քաղկեդոնականության ամե-
նաբնական հետևողներն ու տարածողները կարող էին լինել:
Եթե Քաղկեդոնի ժողովը Հայոց եկեղեցու կողմից պաշտոնապես
նշովվելուց հետո էլ Հայաստանում եղել են նույնիսկ քաղկե-
դոնիկ կաթողիկոսներ (Ներսես Շինող, Նզր, Վահանիկ), ինչո՞ւ

¹ «Հունարան դպրոցը», էջ 250:

² Անդ, էջ 246:

չէին կարող 5-րդ դարում քաղկեդոնիկ լինել Գյուտ կաթողիկոսը՝ Սորենացին, Փարպեցին և ուրիշները, երբ Հայոց եկեղեցին դեռ չէր արտահայտվել այդ ժողովի բանաձևի նկատմամբ, ուրեմն ամեն ոք ազատ էր այդ բանաձևն ընդունելու կամ չընդունելու՝ առանց եկեղեցու կողմից հերձվածող ճանաչվելու։ Եթե իմ հայտնած միտքն այսօր խորթ և օտարօտի է թվում՝ պատճառն այն է, որ մենք դեռ շարունակում ենք մնալ մեր ավանդական հավատի մեջ, իբր թե միայն աստվածապահ Հայաստանը ղերծ է մնացել քաղկեդոնական մոլորությունից, թե հայերը հիսուն և ավելի տարիներ «ժամանակ չեն ունեցել քաղկեդոնական հարցով զբաղվելու»։ Մենք չենք ուսումնասիրել մեր եկեղեցու պատմությունը 5-րդ դարի երկրորդ կեսում, անտես ենք արել Նույնիսի աշխատակալի տեղեկություններն այդ ժամանակի պայքարի մասին, որոնք պատահաբար ազատվել են կորուստից և կարող են լույս սփռել այս կարևոր հարցի վրա¹։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ ՍՅՈՒՆԵՑԻ Է ԵՂԵԼ

Մովսես քերթողահոր «Սորենացի» մականունը շատ մեկնությունների ու կասկածների տեղիք է տվել, քանի որ հին հեղինակների ամենամեծ մասը լոկ Մովսես անունով է հիշում նրան, իսկ «Սորենացի»² բառի ծագումն արդարացնող մի տեղի (գավառի, գյուղի) անուն հայտնի չէր։ Հիշվում է Սորոնք անունով մի գյուղ Տարոնում, բայց այս անունից կարող է առաջ գալ Սորոնացի ձևը, և ոչ Սորենացի։ «Սորենացի» ձևն արդարացնելու համար պետք է ունենալ Սորեն, Սորեն կամ Սորեան անունով մի տեղ։

Կարծում եմ, որ այդպիսի անուն կրող մի գյուղ կարելի է ցույց տալ։

¹ Հայաստանում քաղկեդոնականության ծավալման մասին տես Ն. Մառի հոտալից «հետազոտությունը „Арк'аун“ վերնագրով, որտեղ ի միջի այլոց շատ հիմնավոր կարծիք է հայտնում, թե քաղկեդոնական հայերը շնորհիվ հայ գրականության մեջ խորացավ և զորացավ հունասիրական հոսանքը (էջ 28)։ (գուցե Նույնիսի նրանով էլ սկսվեց, կավեցանեմ իմ կողմից)։

² 11-րդ դարի մի անհայտ խմբագրող նրան անվանում է անծանոթ «Սոյարունացի» բառով։

Սո. Օրբելյանը Սյունյաց տաճերկու գավառների ավելի քան 650 գյուղերի անուն է բերում, նշանակելով յուրաքանչյուրի վրա դրված տարեկան հարկը հոգուտ Տաթևի վանքի՝ ցորենի բեռներով։ Հաջորդ գավառում նա հիշում է ի միջի այլոց Խորեայ գյուղը։ Այս Սորեայ ձևը բերված է 13-րդ դարի բուն վերջին հիշատակարանում (Օրբելյանի Պատմությունը գրված է 1299 թվին)։ Այս անվան սկզբնական ձևը, բնականոն կերպով, կարող է լինել «Սորեան», քանի որ մեր լեզվի հնչարանական օրենքով նախնական «ան», «եան» վերջավորությունները «ն» տառը կորցնում են, ինչպես աղջկան—աղջկայ, վեցաչեան—վեցաչեայ, հանապազորդեան—հանապազորդեայ և այլն։ («Ն» տառը կորել է և ուրիշ հաղարավոր բառերի վերջում՝ ալն—ալ, մուկն—մուկ, ձեռն—ձեռ, համբարձումն—համբարձում և այլն)։ «Ն»-ի այս սղումն ավելի ևս բնական է գառնում, երբ նկատի առնենք, որ Սորեանը գրական բառ չէ եղել, այլ ժողովրդական՝ սովորական խոսակցական լեզվի բառ, ուրեմն և շատ դժբաժնի ու մաշվելու ենթակա. այնպես որ 5-րդ դարի «Սորեան» ձևը 13-րդ դարում բնականաբար պիտի դառնար «Սորեայ»։

Այս փոփոխությունը որքան էլ լեզվաբանորեն ընդունելի լինի՝ այնուամենայնիվ բավական չէ Սորեայ—Սորեան գյուղը Մովսես Սորենացու ծննդավայրը համարելու, քանի որ կարող է պատահական զուգադիպություն համարվել։ Բայց կան մի շարք կողմնակի փաստեր, որոնք ուժ են տալիս այս ենթադրության։

Այսպիսի փաստեր են.

Մովսես Սորենացու տոհմասիրությունը։ Սյունյաց ցեղի ծագումը նա հասցնում է ամենահին ժամանակները, այս ցեղի նահապետ նա համարում է Սիսակին, Գեղամ նահապետի որդուն, ուրեմն Հայկ նահապետի վեցերորդ սերունդը, որին տալիս է շքեղ մականուններ—«այր սէգ եւ անձնեայ, բարեզեղ, կորովաբան եւ գեղեցկագեղ»,—Քիզիկական, մտավոր և զինվորական բարեմասնություններ։ (Հայկին նա կոչում է. «գեղապատշաճ եւ անձնեայ, քաջագանդուր, խայտալն եւ հաստաբազուկ»)։ Սիսական ցեղից է սերեցնում Առանին, «այր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին», որ Աղվանքի կողմնակալ նշանակվեց Վաղարշակից։ Նույնպես Սիւնեաց ցեղի ձյուղեր է ձանաչում Գողթնեցիներին և Ռշտունիներին։

Սորենացին լավ ծանոթ է Երասխ գետի հովիտին. գիտե նրա հորձանքավոր հոսանքը նեղ ժայռոտ հունով. հիշում է նրա աջ և ձախ ավերին գտնվող գավառները, քաղաքները և դառնակերտները (Ա., 30): Տեղեկությունները նրան հայտնի են շնորհիվ այն հանգամանքի, որ Երասխի հովիտը հնուց ի վեր եղել է հաղորդակցության միակ ճանապարհը լեռնային Սյունիքի և Արարատյան դաշտի միջև, և Սորենացին հաճախ առիթ է ունեցել այս ճանապարհով հայրենիքից գալ Վաղարշապատ կամ Վաղարշապատից հայրենիք: Ինձ թվում է, թե այս հանգամանքին կարելի է վերագրել նաև Սորենացու ծանոթությունը Գողթան երգերին, որովհետև կարավանների ճանապարհն անցնում էր Գողթնով, և երբ կարավան էր գալիս, Գողթնում իջևանում էր, տեղի աշուղները երգում ու նվագում էին նախնայաց քաջագործությունները, և ապագա պատմահայրը ախորժանքով լսում էր «գլխավասանս որ պատմին ի Գողթան» (Բ., 49):

Սորենացին հիշում է, որ Սյունիքի Գեղարքունի գավառում կա Եվսերեսի Եկեղեցական Պատմությունը: Սրանից կարելի է հետևցնել, թե նա եղել է տյնտեղ և առիթ է ունեցել այդ գիրքը կարդալու: Թե՛ Ն. Ակինյանը և թե՛ աղադ. Մանանդյանը նույն կարծիքն են հայտնել և հավանական են համարում, որ Սորենացին ուսած լինի Մաքենոցի վանքում, Սոթք գավառում, որ հարևան է Գեղարքունիքին: (Նրանց կարծիքով՝ այս բանը տեղի է ունեցել 9-րդ դարում, Մաքենոցի վանքի վերանորոգությունից հետո, որ հրդեհված է եղել 827-ին, բայց վանքը դրանից առաջ էլ գոյություն է ունեցել, հայտնի է՝ որ ժամանակից ի վեր):

Վեցերորդ դարի առաջին կեսում ապրող Պետրոս քերթող Սյունյաց եպիսկոպոսը երեք անգամ Ստ. Օրբելյանից կոչված է «աշակերտ Մովսեսի Սորենացու»: Այս աշակերտությունը հավանորեն բացատրվում է նրանով, որ Պետրոսին, մանկուլթյան ժամանակ, ծնողները տվել էին «փոքրավոր» (աշակերտ)՝ համբավաբար համշիրակ Մովսես քերթողահոր մոտ՝ նրա ծերություն ժամանակ:

Քաղաքական և տոհմական տեսակետից նշանակալից է Մովսես Սորենացու սառնությունը, կարելի է ասել հակակրոնությունը Մամիկոնյան տան վերաբերմամբ, չնայելով որ նրանք

(Համազասպը, Վարդանը և այլն) ս. Սահակի՝ Սորենացու ամենասիրելի ուսուցիչ և բարերար ս. Սահակի աղջկանից էին սերված: Այս հակակրոնությունը շատերի կողմից մատնանշված է, բայց, որքան գիտեմ՝ մի հավանական բացատրություն չէ տրված: Սորենացուն Սյունեցի ենթադրելով՝ հասկանալի կդառնա դրա պատճառը, 5-րդ դարի քառասնական թվականներից սկսած մինչև ութսունական թվականները, Սորենացու կենդանության ժամանակ, Մամիկոնյաններն ու Սյունեցիք անհաշտ թշնամիներ էին միմյանց, հիշենք Վարդանին ու Վասակին, հիշենք Վահանին ու Գղիհոնին: Սորենացին բնականապես հակակրոն է իր տոհմին թշնամի ու հակառակորդ տոհմին: Եթե թույլ կտրվի՝ կավերացնեմ և մի գիծ Սորենացու բնութագրից: Նա հայտնի է իր խիզախ՝ համարձակ բնավորությամբ, հոգեկան արիությունը: Նույն այս գծերով հնուց ի վեր բնորոշվում է լեռնային Ղարաբաղի հայ ժողովուրդը, որին կոչում են «քաջ Ղարաբաղցի»: Ուրեմն Սորենացին հարազատ գավակ է իր բնագավառի և ժառանգել է նրա ժողովրդին հատուկ հոգեկան և փիզիկական գծերը:

К проблеме Моисея Хоренского

(Резюме)

В предисловии автор указывает на исключительно высокое положение, которое занимала в продолжении многих веков История М. Хоренского, как единственный непогрешимый источник по истории армян; на возникшее в XIX столетии скептическое отношение к этой Истории, сомнения относительно ее достоверности, относительно личности ее автора и о времени ее составления. Здесь перечисляются европейские и армянские ученые, которые писали о Хоренском и его Истории—одни за, другие против, но что в конце концов стало преобладающим мнением, что эта История не есть произведение Моисея Хоренского, ученика Саака и Месропа, жившего в V столетии, а что она является произведением анонимного автора эпохи не ранее конца VII столетия, выдающего себя за Моисея Хоренского, автора V столетия. Тогда очередным стал вопрос: когда же именно написана эта История и кто ее истинный автор?

По этим вопросам автор приводит два сочинения, появившиеся в тридцатых годах, именно: работу Н. Акиняна под названием „Гевонд иерей и Моисей Хоренский“ (Вена, 1930 г.) и работу академика А. Манандяна „Разрешение проблемы Истории М. Хоренского“ (Ереван, 1934,—оба на армянском языке).

Разбирая эти труды, автор в отношении книги Н. Акиняна ограничивается приведением ее содержания, без опровержения выводов Акиняна: „Они настолько нелепы,—пишет он,—что не нуждаются в опровержении. Гевонд, по мнению

Акиняна, является настоящим автором Истории Армении (Хоренского), которую он написал около 810 года, будучи 80 лет от роду, спустя 20 лет после написания им Истории Магомета и халифов. Различие в слоге обеих Историй Н. Акинян объясняет тем, что в Истории Магомета Гевонд описывал действительность, будучи сам современником и очевидцем, и потому довольствовался простым, удобопонятным языком и не нуждался в риторических прикрасах, между тем как в Истории Армении, при изложении не имевших места событий бесписьменных времен, он должен был прибегать к измышлениям, безвкусицу содержания скрадывать внешними приправами, слабые факты подкреплять фразами. На этой Истории Гевонд не выставил своего имени, она осталась анонимной. Лишь после смерти Гевонда какой-то неизвестный поставил на ней вымышленное имя „Моисей Хоренский“ (Моисей, так как автор этой Истории, подобно пророку Моисею, спас армян из глубин невежества и привел в обетованную землю просвещения; Хоренский (от армянского слова хор—глубокий, глубина)—глубокий, мудрый, или тот, кто прошел по глубине мудрости; или от сирийского слова хурин, означающего читатель. Вообще Н. Акинян утверждает, что лица, носившего имя „Моисей Хоренский“, вовсе не существовало“.

После этого автор переходит к главной задаче—к подробному разбору книги акад. Манандяна: „Разрешение проблемы Хоренского“. Он соглашается с мнением акад. Манандяна, что существующие две версии древней „Географии“ являются переработками более древнего пространного оригинала, не дошедшего до нас, и что эта География принадлежит перу самого Хоренского, а не Анании Ширакаци, как полагали проф. Патканов, а за ним и другие ученые. Оба эти вывода автор считает положительной стороной работы акад. Манандяна, но оспаривает его утверждения, что География написана в IX веке, и относит ее к VII—V векам. (Впрочем, автор в примечании признается, что, прочитав в 1938 году исследование Аш. Абрамяна, изучившего Географию по

35 рукописям Гос. Библиотеки, вполне с ним соглашается, что автор Географии—несомненно, Анания Ширакаци). Затем, переходя ко второй части исследования акад. Манандяна, т. е. к Моисею Хоренскому, автор один за другим разбирает все тезисы академика, в которых он старается доказать, что Хоренский жил и писал в начале шестидесятых годов девятого столетия и что он—то же самое лицо, которое написало эпилог к книге Хрий, и называет себя Моисеем кертогом (ритором). Автор возражает против всех этих тезисов и резюмирует свой подробный разбор словами: „Проблема Хоренского еще не разрешена“.

Затем следуют четыре приложения.

В первом приложении автор старается доказать, что сведения, сообщенные самим Хоренским о себе, как об ученике Саака и Месропа, отправленном ими в Александрию для получения высшего образования, являются истинной и что он—действительно писатель восьмидесятых годов V века. Этот тезис автор доказывает массой фактов литературного и психологического характера, почерпнутых из Истории Хоренского, а также свидетельством других, армянских и грузинских, авторов, начиная с IX века и восходя до V в., которые называют его по имени и приводят краткие или пространные выдержки из его Истории, причем в одном только VII веке пять выдержек и одно подложное письмо от имени Хоренского.

Во втором приложении автор выставляет тезис о том, что дошедшая до нас История Хоренского не представляет собой первоначальный текст, вышедший из-под пера автора, но что мы имеем переработанный и интерполированный текст с тенденциозными изменениями. Он приводит несколько примеров интерполяций в современных списках и сравнивает 81, 82, 83, 84 и 85 главы Второй книги с Историей Асохика (начало XI в.), который в этом месте, как и до и после этих глав, приводит сокращенный рассказ по Хоренскому, его же словами. Из сравнения видно, что Асохик кратко передает содержания 81, 82, 84,

85 глав Хоренского, но ни одного слова из 83-й главы, содержащей рассказ о легендарном крещении Константина, взятый из жизнеописания св. Сильвестра по армянскому переводу третьей четверти седьмого века, что и дало повод критике низвести Историю Армении до конца VII века. Вместо этой главы у Асохика рассказ о девах Рипсимидас и об обращении армян в христианство, именно тот рассказ, который по ходу событий должен был находиться в данном месте (в 82-й главе царь Трдат—язычник, в 84-й главе—он уже христианин)—но в современных текстах Хоренского нет. Очевидно, рассказ Хоренского о крещении армян кому-то показался неприемлемым по некоторым соображениям, и потому его исключили и заменили рассказом о крещении импер. Константина. (Автор высказывает предположение о том, что могло послужить причиной подлога). Из этого тезиса автор выводит заключение, что в тех случаях, когда в Истории упоминаются события, имевшие место после V века, или приводятся извлечения из авторов VI—VIII в. в., эти анахронистические факты следует объяснять интерполяцией переписчиков или вставкой редакторов, а не позднейшим происхождением самого памятника, как это делали до сих пор.

В третьем приложении автор выставляет тезис, поражающий своей новизной, именно, что Моисей Хоренский был халкедонитом, т. е. приверженцем вероучения Халкедонского собора. (Известно, что армянская церковь, отвергающая это вероучение, причислила Моисея Хоренского к лику святых). Автор предварительно замечает, что Халкедонский собор, признавший в лице Христа два естества, разжег пламя раздора среди христианской церкви—весь христианский мир раскололся на два враждующих лагеря: на приверженцев вероучения собора (халкедонитов) и на отвергающих это учение (монофизитов). Оплотом халкедонитов были Византия и Рим, оплотом монофизитов—Александрия, Антиохия и Сирия. Армения, поддерживавшая духовную связь и с Сирией и с Византией, не могла,

конечно, оставаться в стороне в этом споре, волновавшем все церкви; к тому же там были налицо кадры естественных приверженцев того или другого вероучения: сирийские выходцы, пользовавшиеся в Армении большим влиянием, и их приверженцы среди армянского духовенства были убежденными монофизитами, небольшая же группа просвещенных лиц, получивших образование в Византии и известных под общим названием переводчиков, держалась халкедонского вероучения. К этой группе принадлежал, может быть и возглавлял ее, Хоренский, самый образованный человек своего времени и ярый грекофил. И вот, на почве халкедонского вероучения возгорелась борьба между монофизитами и группой переводчиков. На существование в Армении религиозной борьбы во второй половине V столетия ясно намекает Хоренский в „Плаче“, говоря: „потряслось православие, по невежеству утвердилось лжеучение“, и немного позже,—„Теперь борьба внутри... борьба от схизматиков“. Слово схизматик может относиться только к монофизитам, отвергшим вероучение вселенского собора и отколовшимся от единой дотоле церкви, но никак не к халкедонитам. Армянская церковь официально не примыкала к той или другой партии борющихся, занимая выжидательное положение, но втайне поддерживала монофизитов. Вот эти-то монофизиты, сильные своей численностью и положением, стали преследовать переводчиков-халкедонитов и их главного представителя—М. Хоренского, не давали им хода к должностям, гнали с места на место, подвергали лишениям, осмеивали их учение и образованность, а иногда и просто убивали их. Вот истинная причина тех лишений, которым подвергался Хоренский и на которые он горько жалуется в „Плаче“ и в конце 92-й главы Второй книги.

Высказанное мнение, что Хоренский был халкедонитом, автор подкрепляет веским свидетельством грузинского католикаса Арсения (IX в.), который дважды упоминает о Моисее и называет его „православным“, (т. е. халкедо-

нитом, каким был и сам). Он повествует, что противники подделали послание от имени Моисея в духе монофизизма, чтобы им совращать народ. Это послание уцелело— оно вошло в Сборник посланий (*Գիրք Թղթոց*) под именем Моисея Хоренского и, вследствие убожества мысли и неясности слога, армянскими учеными оно было признано за подложное. Указание католикоса Арсения проливает свет на этот вопрос и определяет время и цель этого подлога и его авторов.

В четвертом приложении автор высказывает мнение, что Хоренский родом был из провинции Сюник (ныне Карабах) из селения Хоря, как оно называется в конце XIII века в Истории Степаноса Орбеляна, но которое, по законам армянского языка, могло в V веке звучать полнее: Хорьян, откуда, согласно армянской фонетике, происходит Хорен-аци—*Խորենացի*. Это свое мнение автор подтверждает некоторыми фактами, как-то: чрезмерной похвалой Сисаку, родоначальнику Сюникского нахарарского дома, знакомством с местностями в провинции Сюник, с течением Аракса, с поселениями по обоим берегам этой реки, по долине которой проходили караваны, неприязнью к дому Мамиконянов, соперников Сюникских князей во второй половине V в. (Вардан и Васак в первой религиозной войне, Ваган и Гдихон—во второй), наконец, мужественным характером Хоренского, отличительной чертой жителей этого горного края древней Армении.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ	148
Ն. Աղինյան. «Դեկրետներ և Մովսես Խորենացի»	5
Ա. Աղինյան. «Դեկրետներ և Մովսես Խորենացի»	9
Ա. Աղինյան. «Դեկրետներ և Մովսես Խորենացի»	20
Մ. Խորենացու Հայոց Պատմությանը	32
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ	88
Ա. Մովսես Խորենացու Հայոց Պատմությանը գրել է հինգերորդ դարում	89
Բ. Մեր ձեռքը հասած Խորենացու պատմությանը սկզբնաղբերը չէ, այլ խմբագրության է ավելի ուշ ժամանակի	113
Գ. Մովսես Խորենացին եղել է քաղկեդոնական (երկաբնակ)	130
Դ. Մովսես Խորենացին սյունեցի է եղել	144
Резюме на русском языке	148

Պատ. խմբագիր՝ Մ. Նեբուխյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Մանուկյան
Պատ. սրբագրիչ՝ Ս. Շահաբյան

Հանձնված է արտադրության 11/XI 1940 թ.
Մատրագրված է տպագրելու համար 3/XII 1940 թ.
ՎՋ 2335. պատվեր № 247, հրատ. № 86, տիրաժ 4000.

Գինը 7 ռ., կազմը 1 ռ. 50 կ

Արմֆանի հրատարակչության տպարան, Երևան, Լենինի փ. 67.

ՀՀ Ազգային գրադարան



NL0416667

12.091